




21

ԳԵՐԵԶՄԱՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ  
891.99 ՎԵՐԱՎՈՐԻ ՎԵՐԱՎՈՐԻ

թ. 18 ՍԿԱՑՈՒԴԻՈՅ ԱԴՈՒԱՆԵՑ



ԱՎԱՐԱՎՈՐԻ Տ 1861 թ.

Ի ՀԱՅՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ

ՓՈԽԵԱՑ ՅԱՐԴԻ ՈՇ ԵՒ ԳԻՐ

Մ. Դ. ԹԱՎԱՐԱԴԵԱՆՑ Վ. Ա.  
ՍԱՐԿԱԾԻ ՄՐԲՈՅ ԷՀՄԻԱԾՆԻ



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՌԻ ՏԵԱՌԻ ՆԵՐՍՈՒՅ  
ԸՆԴԳՈՎՈՐԻ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ



Ի ՏՊԱՐԱՆԻ

ԱՐԱՋԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԵԿԱԼԿԱԹԱ


1847:

ՀԱՅՈ

90

ՀԱՅՈՒԹ





## СА-С, 9, ССС, 6

Արդի Գումանակաց գրեթե միշտ առանձին  
լու գեղեցւուն զգուած» իւշեանց, ուղղէ՝ ուի ախոր-  
ծնիալ յօքինիունն ընթերցաւին պարտապետութեան  
բարուց: Ահա իւտաւ ասպանդախան իւնաց և բայց առաջ-  
բայդ պարագանեաց՝ հազիւ ուշեթի պարեն իւլաց հրա-  
չանաւ առանձինն, թէ ընթերցանութեամբ՝ և թէ  
գրութեամբ իւնի:

Պարտահետ երբեմն լեզուագեր Սիրելոց՝ զի ըստ  
Աւանդուց Աւանդելու աշխագենին՝ հաջու, թէ “Ընդ է՞՛  
Հայութեն ո՞չ ընթեռնուցու”՝ Պարտահետուց՝ “Վասն  
չի ամենայն գըտանի մեր ծառը և լուրջ գիտութիւնն  
են. և զիօնուն մասց ո՞չ պահ :” Ցո՞յց միայն զայտ  
ջալերութիւն ու առ այն, և ի՞ւ թմբն աստմիկ անգույն  
ո՞չ պահապին գըտչ աղքին .” առաջի, դաշնայ, նախաց  
և գըտան պայց. Թաւուն զըստոն աշխարհութեան հայ  
մարից այս. սակայն և այնպէս՝ ելլէ իսկ ոչ զլեզութիւն  
պահժառանութիւն, Տակառանդ յանձնուեն օպարութեան  
պայմին՝ պարտի և պահապին բուռն հարցիւնել :

Պատրիա-Ռեանու բանի պիտօքին գիւղը վ' է մէջ երես  
առաջը առ և յասահապ աշխատաց — Վաշինգտոն նորօրին-  
ակ խորհրդական լուս և խաղարձ զինծերից նոյն հասա-  
րակուց առաջը լիս շնորհած զինծերից նոյն հասա-  
րակուց առաջը լիս շնորհած զինծերից նոյն հասա-  
րակուց առաջը լիս շնորհած զինծերից նոյն հասա-

Վաւելաց . Խորտակնիստելին Սարտապինայ , և ուս .  
ունը հըսպոյց . ի ալոնառարութիւն Գուրգենայ՝ ի Եւ-  
սահաց Ապրենուշաց . ահա Ելի Դեսոքանէ վաղըանաց՝ որ  
անդ . սորուխումն Շիսողերին Շորեր , և սորուխումն  
Շիսոցերցն՝ ի մի մեանց . պագեապ Ալարուենիան ,  
անըւթիւն և իսոսիցուն Ալաւելաց , Ապարանին շայդ-  
նաւելեան , և հըեւստուխ Գեղենանայ և Արզունեայ՝  
առօրդ պան Աստաջին Հափորոյ Վլիպիս :

Որոց միանգամ իրադար Երևիսի պատճութիւնն , գիւ-  
տասցէ՛ ու ուր գըեցն և պղէմն , ըսդ արդի հանգա-  
մանաց պնօքինեմն . աղոս լի ո՛չ միայն անց Ալիբառ-  
ելին ՃԱՐԺԻՆՆ Բառուիոն լիներ միւն և հապորոյ : և  
Ալաւելաց “Ճաղիւ անդրն” չգիսեմ օս՞քտոն ո՛չ  
ընտառչուիեր անզբազ մարց : Ո՞րպիսի հըաշալին ո՛չ  
ի մէջ տունուին “իիւթն և առօրդ խորհրդոց Ալաւ-  
գանայ” առօժամ ԿՏՄԴԵՒԻՆ յառ Բերեր զոր և սունոյն  
առուցեալ՝ ի սահմանաց Աղուտեից՝ և այլն :

Բայց ի սանէ և Ճառապարհորդութիւն իմ , դրա-  
բարակիութիւն Օժերտոց , Աղգուսէր Լըտգիր , և ա-  
ստուել ան զառնն Սոս-ը Սոնդուխոր Դողըոց և ամե-  
նայն պարզիւ նորս համշնելաց արշաւելով՝ ի գործ և  
մամուլ , հառիւ թէ ներեկին ինչ գէ՛լ միանգամ վերջու-  
նել ի վաղուի՝ զոր այսօք գըեւու եի . սոսդի և աստուել  
ան զայն՝ ո՛չ անձին զԲօսուաց միջոց եր իմ , և ո՛չ  
ընիւրին : Առ Բաշուաց օքութալուն՝ պիտըանոն :

# ԵՐԻԱԿԱՄԵՐԵՐ ՏԻԿԻՆ ՄԱՐՏԱՑ Յ. ՅԱԿՈԲԵԱՆ

ԵՒ

## ՕՐԻՈՐԴ ԹԱՎՈՒՀՏՈՑ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔԵՐՑ ԸՌԱՔԻՆԵԱՑ

ԵՒ ՄԱՐՑ ԱՐԴԻ ԴՐԱԳԱՏՈՒԹԵԱՆ ՍԶԳԻՑ

## ԽՈՂԵՐՀ ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՎԱՐԴ ուրեմն յանդիման կացոց աշխարհի  
Եղբայրն անձին Յանդիմանիչ՝ զազկի ազգի ճիրս  
բարեմասնութեանց աստուածասէր և ազգասէր հոգ-  
ւոց Զերոց։ Վաղագոյն քան զնա և Ազգային Դըպ-  
րոցք մեր ՚ի Կալկաթա և ՚ի Մադրաս՝ բանաւորա-  
գոյն ևս քան զարձան Բեղերեփոնտեսց յեզիպտոս  
քերկրապատար աւետարանեցին զծագումն , և  
նզացին մեղ զմուտ ճառագայթարձակ Արևուն  
Ազգասիրութեան՝ յիշատակաց արժանի ԵՎՐՈՔ  
Զերոց։ Ծանեաւ զսոսա Գերապատիւ Արարատեան  
Ընկերութիւն , ու ազգաբար անձին զրելով զԱշ-  
դային բարերարութիւնն՝ մատոց ՆՄԱ զդուզնաւ

քեսյ նշան խորին երախտագիտութեան իւրոյ՝ ՚ի  
Զարդն Երկնից , և արժանացաւ շնորհաց մայ-  
րենի քաջալերութեան Զերոյ :

Իսկ ես , անպիտան ազգի իմում և աշխարհի՝ որ  
ոչ զվաստակ բարի վաստակեցայ Զեղ , և ոչ զշարկ  
հաւատարմութեան հարի , ձրի շնորհաց Զերոց  
արժանացեալ՝ գրիչ ՚ի ձեռին կալսյ ՚ի մեջ բազ-  
մազբաղ տառապանաց իմոց , դուզմաքէիւ այսուիկ  
յայտնել աշխարհի և Զեղ՝ զիմ շնորհակալիս՝  
անմոռաց երախտագիտութեամբ հանդերձ :

Կեցջիք , ՄԱՌՔ արդի զրագիտութեան մերոյ ,  
և Աստուած ինքնին լիցի ձեղ վարձահատոց բա-  
րեաց՝ ամեն :

## ԱՐԺԱՆԱՑԵԾԱՐ ՏԻԿՆՈՒԹԵԱՆ ԶԵՐՈՅ

Ամենախոնարհ Շառայ

## Մ. Պ. Փ. ԱԴՐԻԵԱՆՑ :

Առաջին Սահմանադրության մասունք առ և մաս  
ա . մասունք միջնադրության բառարարության  
մասնայի յանձնանական ուժու ըստ միջնար  
աց ԲԺ կրթական ըստառական Հայոց առաջնարդ Ա  
մասնական ակադեմիայի ուժուն ուժություն . Այս է  
այս իշխան միջնա քայլության ու մայթ առաջին  
առաջարկ ԲԺ ըստա մայթ առաջարկան միայն

# ՎԵՐԱԵԿԱԿ

ՕՐԵՆՍՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒՇՈՅ ՄԻՉՑ  
ԶՀԵՑ ԳԱՅ ՕՐԻՆԱԾՈՐ ԱՄՈՒՄՆՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ Ա.

Ըստ Բնուազրութեան Տոբովիան զանազանի և՝ շանիան  
ըիւն :

Որ զանտեսն ի մէհջ խօսել տուն տաս մեզ,  
Զոր հանձար մարդկան ոչ զէթ երազեաց .  
Եւ որպէս տուն տաս՝ նոյն և յաջողես  
Յաւետենական դժութեամբ՝ ԱՍՏՈՒՇՇ :

Դ ՀԱԼԱԾԵԼ Հայաստանեայց յեւ-  
րեսաց անողորմ յաջորդաց մոխրա-  
պաշտին Յազկերտի՝ Վաչագան ի Հայ-  
կազանց՝ որդի Վաչէի, որդւոյ Ա-  
սրվաղենայ՝ թագ կապեաց յլղուանս  
Հայոց . և այն ինչ ծպտեալ ի տա-  
րագ սոսկականի ելանէր զգիշերայն  
լրտեսել զքաղաքն Պարտաւ՝ հանգի-  
պեալ պանդոկի ուրեմն պանդխտա-

Ա

կանաց՝ եկաց առ գրան կը պակի մի-  
 ում, ուր էին արք երեք աղքատք  
 և նժդեհք : Եւ լսէր, զի մի ոմն ՚ի  
 նոցանէ առարկեալ առ լնկերսն և ա-  
 սէր . “Արք եղբարք ձանձրացեալ  
 եմ յոյժ ’ի կենաց աստի խոց, և ե-  
 րանէի թէ ոք զուր եղեալ ’ի վերայ  
 իմ, հանէր յատեան Արքայի, և դա-  
 տաստանաւ վճռէր ինձ շկօթակ ՚ի հայ-  
 րենեաց :” “Յուսահատիս եղբայր .  
 Ես առաւել լնտրէի զդար մի ողջոյն  
 աղքատութեամբ կեալ՝ քան զվատա-  
 համբաւութիւն ինչ՝ ստութեամբ ան-  
 դամ” վարուց ’ի վերայ բերել :” “Ի-  
 րաւ է առաց ցնա առաջինն . բայց ե-  
 թէ և զու ինձ նման յուսահատ ոք  
 լինէիր, թուի թէ և զդոյնպիսիս ան-  
 ձին լնտրէիր :” “Խարիս սիրելի ,”  
 կրկնեաց անդրէն լնկեր նորա . “աղքա-  
 տին լնտրութիւն չիք, շատ է նմա-  
 ճեռն բանալ և զոհութեամբ լնդու-  
 նել զոր միանդամ Աստուած և արա-

բածք նորա արժանի տեսանիցեն : ”  
 “Այդ փոքր ինչ գժուարին է ամե-  
 նայն մարդոյ . որ աղքատ երբէք ու-  
 րախացաւ ’ի վերայ վեճակի իւրոյ , ”  
 ասաց առաջինն : “Եւ ո՞ր տժգոհ աղ-  
 քատ երբէք զերանութիւն Տեառն  
 լուաւ , ” ասաց ցնա ընկեր իւր . “ոչ  
 ապաքէն աղքատութիւն թշուառա-  
 գոյն ևս է , յորժամ տժգոհութեամբ  
 տանիցի . և երանարար՝ եթէ խոնար-  
 հութեամբ և գոհութեամբ ընկալեալ : ”  
 “Ուերես շետակ է զօր ասես . բայց ե-  
 թէ այդքան գոհ սիրտ ունիս , և ո-  
 գի անընչասէր , ընդէր ո՞չ զնաս ուխ-  
 տաւոր յԵրուսաղէմ , քան յաշխար-  
 հի աստ տաժանութեամբ ՀայթՀայթես  
 զպարէն կենաց : ” “Երանիթէ զուառ-  
 մին բաւական ունէի առ այն , և զնայի  
 անդր , որպէս և խորհուրդ տաս գու-  
 ինձ . բայց հաւատա եղբայր , զի զո-  
 հին ամենայն ուրեք յԵրուսաղէմ է : ”  
 “Ուող մարդ . փոքր ’ի շատէ ’ի շաղ-

փաղփանս մեր, զի դէթ զժամանակ  
 անցուսցուք .” ասաց ցնա տռաջինն :  
 “Այդպէս չարաչար վատնելով զպառ-  
 ուականն ’ի պարգևաց Աստուծոյ :  
 Դեռ տրտնջան զաղքատութենէդ :”—  
 “Որքան և պատուական իցէ ժամանակ,  
 այնքան և տարապարտ խստանայքաղ-  
 ցեալ որկորոյ . դէն գնա՞ ,” ասաց ցնա  
 քամահելով, և զճակատն շփեալ ա-  
 ջովն՝ գոչեաց . “մարդ եմ, բայց յու-  
 սահատ . երանին թէ վաղիւ յատեան  
 կոչեցէ զիս արքայ, կամ այնքան գան  
 հարկանել զի մեռայց, և կամ պար-  
 գեել ինձ զպաշտօն ինչ՝ որով ապրե-  
 ցայց :” “Արզունին ,” պատասխանեաց  
 նմա Գեղենակ, զի այդոքիկ էին ան-  
 ուանք նոցա . “Թունի քեզ թէ և Ար-  
 քայ Աղուանից Վաչագան , որ զտա-  
 ճարս բազումն կառոյց ’ի փառս Փրկ-  
 չին , որ զնշխարս Արբոց փառաւորեաց,  
 որ կամուրջս ամեհիս կտմարեաց լնդ  
 Երասխ և Առը, որ աղքատանց և

ու թիկանոցս բաղմացոյց 'ի սահման թա-  
 դաւորութեան իւրոյ . և որ յամե-  
 նայն ժամ յաղօթու և յունկնելրու-  
 թիւն Գրոց Արքոց Հրտշանայ , քո  
 պէս յիմար կամ յուսահատ ոք իցէ,  
 զե տարապարտուց կալեալ զոք և գան  
 հարկանիցէ , միայն վասն զրօռանաց :  
 Ե՛յդ քաւ լիցի յարքայէ , ես ոչ Հա-  
 ւատամ , ” Առ Աւրեմն ասա թէ ճգնա-  
 ւոր է Ա տչագան , կամ ընդնասաց  
 քեզ նման : Թռուի թէ դու զմի և եթ  
 'ի դիմացն ընթերցար . բայց ես՝ որ  
 տեսի զնա 'ի մըցմունս ճակատուց ,  
 և 'ի նահատակութիւնս պատերազմաց  
 ամեւեաց , քաջ ճանաչեմ զնա՝ յաւէտ  
 ինձ նման՝ քան քեզ : “Եթէ չուա-  
 ռութիւնք ժողովրդեան զրօռանք իմն  
 չեցեն թագաւորաց , ընդէր սոսկ հա-  
 ճոյից զոհեն ապա զայնքան արիւն  
 անմեղաց :”—Գեւ “Առլիս Արդու-  
 նի , թագաւոր արդար պաշտպան է  
 երջանկութեան հասարակաց . հասա-

բակաց երջանկութիւն կարօտի հասա-  
 րակաց օգնականութեան, և եթէ տասն  
 արիւն չզոհիցէնա, ոչ կարէ փրկել զո-  
 դիս հարիւրոց . զայն պարտի առնել,  
 և զայս չթողուլ,” Առ “Արդ քե-  
 զէն դաս և կաս ’ի կէտ նպատակի  
 մտացս իմոց : Ասես զայն պարտի առ-  
 նել . այսինքն քո պէս լուրջ և ծան-  
 րախօս մարդիկ շուրջ ունել զիւրեաւ,  
 զի խորհուրդ տացեն նմա եկեղեցիս  
 կառուցանել և զմեզս իւր բառնալ  
 ’ի նոսա . կամուրջս կամարել ’ի վե-  
 րայ գետոց՝ և ինքնին ոչ անցանել  
 ’ի չարեաց կողմանէ առ ’ի բարւոյն  
 կոյս , և այսպէս : — Բայց յաւելեր  
 դու՝ թէ Եւ զայս չթողուլ՝ Որով  
 իմանամ , զի կամայ ակամայ ասել կա-  
 մեցար , թէ պարտի թագաւորն և զիս  
 չթողուլ . զի՞ս՝ որ քաղցեալ և կարօտ  
 որպէս և կամս՝ պատառոյ աստուծ հա-  
 ցի , տակաւին զլեարդս թշնամեաց նո-  
 րա կրծատել կարեմ , և զարիւն ա-

տելեացն ծործոքել ցիլերջին կաթիլ : —  
 Գրւ Օ ին չ կամիս յայտնել : — Առւ  
 Ոչ առաւել կամ պակաս՝ քան զոր  
 դու ինքնին . այսինքն՝ եթէ արքայ  
 հանձարեղ ոք իցէ , 'ի վաղեւ կոչեալ  
 զմեզ՝ կարգեցէ զքեղ 'ե խոստովա-  
 նահոյր իւր , և զիս՝ 'ի Ապարապետ  
 զի դու խրատեսցես նմա ազատել զո-  
 գի իւր 'ի մոլութեանց , և ես՝ զեր-  
 կիրն 'ի թշնամեաց :

Հա , Հա , Հա , — 'ի Ժաղը սաս-  
 տիկ լուծաւ Գեղանեակ ընդ բանիս  
 ոյսմիկ , որպէս թէ բուստ համաչափ  
 ընդ քրքում զանգեալ ուտէր ոք :  
 Եւ դարձուցեալ զգէմն իւր առ եր-  
 բորդն , որ լուռ և եթ ունկն դնէր  
 բանէց նոցա՝ ասաց հեգնութեամբ .  
 “Ես խոստովանահոյր Արքայի դար-  
 ձայ , և Արզունի սպարապետ . արի  
 Գուրզէն և ասա , իսկ դու զինչ :

Գառագ . Եթէ վիճակեալ իցեմք երա-  
 զովք զուարձանեալ . զի և զուարձու-

Թիւնք ասոի կենաց երազք միայն են ,  
ես ոչ զայն կամէի և ոչ զայս :

Առ Գեղենակ , ահա առաջին աւ  
շակերտ վարդապետութեան քումը ըս-  
տացար զՊռւրգէն , այր դու և բա-  
ւականացեալ , որ ոչ զայս կամի և ոչ  
զայն : Ուրիմն յորժամեւ Արքայ մոցէ  
յաշակերտութիւն քո՝ զսա նմին դա-  
սագլուխ դիցես , զի զդասն սերտա-  
ցուցէ :

Գառէդ . Արզունի , թուի թէ երդ-  
ուեալ իցես շաղակրատութեամբ զըզ-  
ուել ոչ միայն զժամանակն ՚ի փախուսու-  
այլ և զամենայն յոյս մարդկային յու-  
ղորմութիւն Ամենակալին :

Առ Համար , չասացի բա :

Գեր Թոնզ Արզունի , թոնզ տես-  
ցուք և զինչ դա . որ խորհեմ բա-  
րեպաշտութեամբ խօսի քան զիս և  
զքեզ :

Առ Լամար , բեր այժմ զպտուղ խո-  
հեմ բարեպաշտութեան քո , Պռւրգ

գէն . զի թէպէտե աներկըսյելի իմն  
է վկայութիւն վարժապետիդ , սակայն  
զծառն 'ի պտղոց ճանաչել ուսաք , և  
ոչ թէ 'ի վկայութեանց :

**Գ.Ե.Ն.** Տնապ առնես զինեւ :

**Ա.Ր.** Եւ եթէ դլխովին անազ չե-  
ցեմք , ցոյց ուրեմն զինչ նազելի ինչ  
իցեն 'ի պատառատուն ցնցոտիս մեր ,  
և 'ի քաղցեալ ստամոքսի :

**Գ.Ե.Վ.** Արդարէ . բայց թողուս **Գ.ՈՒ.Ր.**  
գենի ասել մեզ զկամս իւր՝ թէ ոչ :

**Ա.Ր.** Կա ոչ զայս կամի և ոչ զայն :

**Գ.ՈՒ.Ր.** Գուցէ դա զերորդ չունի յը-  
ղեղանն , ուստի զխոստովանահօր ար-  
քայի պաշտօն քեզ , և զսպարապե-  
տութեան **Ա.ՂՈՒ.Թ.Ի.Ս.** իւրոյ ինքեան  
որոշեալ , թող զիս ապաստան 'ի խը-  
նամս դիպաց և եթ :

**Ա.Ր.** Կախ՝ ժամանակ—ապա՝ յոյն—  
և հուսկ ապա՝ դէպէք . ինչ սիրուն եր-  
բորդք ոչ իցեն սոքա խոհեմ բարեպաշ-  
տութեան հլու և հնազանդ աշակեր-

տի քում, Գեղենակ : —

Գեւ կաց մարդ, տեսցուք թէ զինչ  
ունիցի յայտնել :

Առ Աչ զոյս և ոչ զոյն :

Գառհ. 'Ի ցնորանաց քոց՝ Արզու-  
նի : — Ապա թէ ոչ աղքատ որքան  
և իցեմ, տակաւին մարդ եմ, և սի-  
րեմ զմարդկան առաքինութիւնս՝ քան  
զմոլութիւն :

Գեւ Մարտան քեզ Գտրգէն :

Առ Հա, լստ որումմի խնձոր էք  
երկու կիսած՝ դու և դա :

Գեւ Աչ այդպէս եղբայր . Հաղիւ  
գտանի 'ի տան Աղուանից երկու՝ որ  
կարիցէ յանդիման կացուցանել զմի-  
ութիւն : Աերպարանք մարդկան այն-  
քան տարբերք չեն յիրերաց աստ՝ որ-  
քան կիրք նոցա :

Գառհ. Աւզիղ խօսեցաք, Գեղենակ.  
զի դատարկարանութիւնք որքան և ի-  
ցեն զիշերային զըուցատրութիւնք  
մեր, սակայն և յայնոսիկ իսկ՝ ես ոչ

Քեզ Համաձայնիմ, և ոչ Արզունայ :  
այսինքն՝ ոչ սպարապետ Արքայի դառնալ, և ոչ խոստովանահայր :

Գեւ Ապա զի՞նչ :

Գառդ. Փեսայ :

Առ. Բաւական է . խմացաք :—

Գառդ. 'Ե բաց տար զծաղքաբանութիւնդ : Ես արքային Վաչագանայ դուստր մի,—որպէս տեսլեամբ՝ նոյն և խելօք և Հանճարով գեղեցիկ :—

Վարսենիկ անուն նորա :—Եթէ կոչէր զիս արքայ 'ի վաղիւ, և տայրինձ զիս 'ի կնութիւն, և դատարկ 'ի բաց Հանէր 'ի քաղաքէ աստի՛ աղքատ և անդրամ որպէս և եմ, տակաւին զանձն երջանիկ Համարէիքան զամնայն մարդ :

Առ. Եւ ես յայնժամ Համարէի զարքայ՝ տխմարագոյն քան զփեսայ իւր :

Գեւ Ընչուլ Գուրզդէն . կամ վասն որոց մեծամեծ արդեանց քոց . այն ինչ բոլոր հրաքոտ նորա օժիտ անկանի :

Պահած։ Առկնովին՝ վարժապետ, ո-  
րով զքեզ՝ ի խոստովանահայր, և զԱր-  
դունի՝ սպարապետ իւր կարգէ, —ար-  
քունի շնօրհաբաշխութեամբ իւրով։  
Ե ոչ մազ մի աւելի կամ սպակաս մի-  
ջոցաւ։

Գեւ Ա աւ է, լաւ .—ննջեսցուք  
զի ՚ի վաղուի գործել կարասցուք։  
ապա թէ ոչ Արզունի զամնայն թշնա-  
միս թագաւորին ուտէ, և Գուրգէն  
փոխանակ զնոր քաջաց սզգ զարմէ։—

Եւ Ուրիմն բարի գիշեր քեզ, Գեւ-  
ցենակ, յորժամ խոստովանացուցանի-  
ցես զարքայ, մի մոռանար յիշել նմա՝  
թէ Գուրգէն ոչ զայս կամի և ոչ զայն,  
ոյլ զքո սիրուն Ա արսենիկ միայն։—

---

Գլուխ Բ .

Ըստ հետիշն և իր չափառքին :

Ու երբ ըզսահան ջուրց ՚ի ձեռին՝ Տէ՛ր,  
Շարժես ՚ի հաճոյս սիրտ Թագաւորաց .  
Զանկեալ բնութիւնս նոր սոեղծանել  
՚ի պատկեր փառացդ անեղծանելեաց :

ԽՈՐԻՆ լութեամբ յանկճիռս կա-  
ցեալ Արքայի խօսից պանդխտաց մե-  
րոց , և կարի շատ նեղացեալ ՚ի ցրտոյ  
և խոնաւութենէ օդոյ գիշերոյն՝ դար-  
ձաւ մոտախոհ յասլարանսն իւր , յիշե-  
լով և կրկին յիշելով , թէ “Գուրգէն  
ոչ զայս կամի . և ոչ զայն .—բայց  
միայն զլլ արսենիկ , —զեմ աչաց լոյս  
Վ արսենիկ , —մի միայն զլլ արսե-  
նիկ , —սիրելին ՚ի մէջ դստերաց իւ-  
մոց , և գիմոյ և գորովոյ ծնողական  
աղեաց իմոց՝ հանապաղորդեան ներ-  
կայ առարկայ : Բայց և զայն , որով  
արդեօք .—ոչ զօրութեամբ բազկի ,  
ոչ արդեամբ վաստակոց , ոչ օժտիցն  
ակնկալութեամբ , և ոչ մազ մի ա-

ւելի կամ պակաս միջոցօք , քան ար-  
 քունական շնորհաբաշխութեամբ : —  
 Թագաւորքս՝ յամենայն արարս ամ-  
 բարտաւանութեանց մերոց՝ սիրեմք  
 կապկանալ , քան թէ նմանել Աստու-  
 ծոյ . այս և շատ անգամ բռնաբարեմք  
 և 'ի մեզ կորզեմք զփառս Ամնակալ  
 Թագաւորին թագաւորաց , և Տեառն  
 Տէրանց . բայց յորժամ խնդիրն հա-  
 սանի խնամոց մերոց՝ կծծանամք և  
 գդրունս գթութեանց փակեմք . նո-  
 վին և եթ յայտ արարեալ զվերջին  
 թշուառութիւն աղքատ ընութեանս ,  
 Ա՛զ . զի ո՞րքան բանի իցէ մարդոյ Աս-  
 տուծոյ նմանել , ոյնքան և ծանր է  
 Հողազանգուած մահկանուցու ընու-  
 թեանս : " Այսու օրինակաւ ընդ ան-  
 ձին խօսէր Արքոյ Վաչագան . և  
 կիրք ընդ կրիցն մարտնչէին 'ի ներ-  
 քուստ , յորժամ եմուտ նա յապարան-  
 ոլն Վարսենկան , որ անկանէր 'ի Հիւ-  
 սիսոյ արքունական սրահի մեծակառոյց

ապարանից իւրոց : Առհեծ առագաս-  
 տապատ ՚ի միջավոյը տաճարին . յո-  
 րոյ վերուստ ծալ ՚ի ծալ առկախէ-  
 ին զառնաւուխտ և զարմանագործ վա-  
 րագոյրքն շերամիք , և բաստեռունք  
 սրոկապանաց . աստի և անտի՝ բարձքն  
 փետրալիցք , և ՚ի ներքոյ՝ անկողինք  
 աղուափետուրք : Ա արսենիկ ՚ի մի-  
 ջե ննջէր զքուն անուշակ , և ան-  
 մեղութիւն խորհրդոց նորա յերե-  
 սն՝ ՚ի վեր նկարէր ժպիտ իմն ան-  
 ծանօթ , օտար ՚ի ծաղուց մահկառ-  
 նացուաց : Ապուշ ՚ի նա հայեցաւ  
 հայլն , զմայլեալ և զարհուրեալ մի-  
 անգամայն : Օ մայլեալ՝ լնդ գեղ  
 հրեշտակային գիմաց դստերն հրա-  
 շլոյ : և զարհուրեալ՝ յերեսաց ար-  
 քունականն անուանեալ շնորհաբաշ-  
 խութեանց : Ա առարան ՚ի բացուստ  
 արծարծանէր զպայծս կայծականից կը-  
 բակին , որ գիղեալ խարուկանայր ՚ի  
 միջե , և իբրեւ սակաւ մի շերանէր

Առքոյ, 'ի խորոց սրտի իւրոյ զոյս  
 օրինակ Հառաչ հաներ առ. Աստուած,  
 "Բարէ անհասանելի շնորհաց քոց Ա-  
 մենակալ Հայր, որ այնքան սիրե-  
 ցեր զաշխարհ, մինչ զՈրդիդ քո զմի-  
 ածին ետուր. զի թշնամիք քո փրկես-  
 ցին նովաւ : Խսկ մեք՝ ապականեալ  
 և ամօթապարտ արարածք քո, խնայ-  
 եմք զորդիս և 'ի սիրելեաց անգամ,  
 որոց ոչ են այլ յանցանք, քան ե-  
 թէ աղքատութիւն վիճակացն՝ յորս  
 դու կարգեցեր զնոսա : — Բայց թող  
 յայտնի լիցի աշխարհի, թէ Ա ար-  
 սենկան դու ես Տէր, և ոչ ես, Դու  
 Հայր, և ոչ ես : Դու արարիչ և ոչ  
 ես : Օ քեզ Տէր միայն նմա օժիտ  
 հատանեմ, և 'ի քեզ միայն ապաս-  
 տան թողում, առնել ընդ նմա, որ-  
 պէս և Հաճոյք բարերար կամաց սուրբ  
 աստուածութեան քո բարի դատես-  
 ցին : — Բայց դժուարին է, ներեա  
 թերահաւատութեան իմոյ Հայր Ա-

մենակալ, և ողորմեա սմա և ինձ առ  
՚ի գովեստ անուան քում սրբոյ :

**Ա**յսպէս խօսեցեալ յառաջ մա-  
տեաւ Ակայի կորովի՝ որ զարտասուս  
ոչ գիտէր . և խոնարհեալ գորովա-  
լից խանդաղատանօք մատոյց համբոյր  
ինչ անուշակ՝ լուսափայլ ճակատու-  
դստերն ՚ի քուն . և շիթք մաքուր  
արտասուաց անդ զառաջինն ցողացեալ  
յաչաց՝ թացին զայտս հրաշալւոյն :

**Բ**ուն Ա արսենկան նուրք էր իբ-  
րև զնիրհ անմահից . ուստի ընդ համ-  
բոյր գորովանաց հօրն՝ յարուցեալ  
նստաւ զգաստօրէն . և տեսեալ զծը-  
նողն առընթեր՝ պատկառեցաւ ՚ի նմա-  
նէ . և սկսաւ ՚ի վերայ հաւաքել և զըս-  
պել զհանդերձս իւր : Բայց շու-  
տափոյթ եղեալ՝ ՚ի խուճապին յան-  
գէտս երեւցոյց ՚ի ներքոյ ծիրանեաց  
խարազն ինչ խոշոր , զգեցեալ շուրջ  
զգողտրական անձամբ իւրով : Ո՞նդ որ  
հպեալ արքայի ձեռօք իւրովք՝ քըս-



տմնեցաւ . և հերք նորա որպէս զփուշ  
ցցուեցան : “Աերեա ինձ դստրեկ ,  
զի ապաժամ հատի զքուն հանգստեան  
քոյ ,” ասէ ցնա Արքայ . “բայց զին՝ չ  
արդեօք այդ խարազն խոշորագործ  
շուրջ զքե :”—“Հայր Արքայ , աղաչեմ  
զի տէրութիւն քոյ յաւէտ ներեսցէ  
դստեր իւրում , որ այսպէս անպատ-  
րաստ ընկալաւ զծնող իւր :” Առ . “Աե-  
րողութեան պէտա չունիս , Ա արսե-  
նիկ , մահ և քոմ մի են .—բայց  
հչ ասես ինձ թէ զին՝ չ այդ խարա-  
զըն խոշարագործ շուրջ զքե :”

Վ արք . Համարեա թէ ոչ ինչ ,  
Հայր Արքոյ .—այս վեց ամք են , յոր-  
մէ հետէ ՚ի կուսանոց Ամարասայ վկայ-  
եալ մեծահանդէս տօնի սրբոց կու-  
սանացն Հուիփսիմեանց՝ լնդ բազում  
հոգերուզլս բանից Տեառն Կոմիտա-  
սայ Հայրապետիս մերոյ՝ լուայ և զայս  
զնոցանէ՝ թէ “ոչ հեշտացան ՚ի գլր-  
կանս փափկութեան , իմացան եթէ

երաղ է անցաւոր մեծութիւն : ”**Վ** ասն  
որոյ եկի , իմով ձեռամբ մանեալ գոր-  
ծեցի զխարազնս զայս , և զգեցայ :  
**Եւ** Տէրութիւն քո առաջին եղե  
չայր , որ ետես զայս յիմ հագինս : ”

**Ը**րքայ սկսաւ այսպէս մտմտալ  
’ի ներքս յինքեան : “Գուրգէն ար-  
դեօք գիտմէլ էր ոյսը ամենայնի , —  
կարեռը իմն չիք—բայց և այնպէս  
որ ոգի մղեաց զնա լնտրել զլլ արսե-  
նիկ իմ , առանց օժտից և պարզեաց :  
**Չէ** , չէ , գաղտնի իմն տնօրէնու-  
թիւն կայ ’ի բանի այսմիկ , — ինձ գը-  
նալ կալ առ գրան կրպակին , պան-  
դխտաց այնօրինակ խօսել , ինձ ունկն  
դնել և գալ այսը , — և անակնկալ զլլ ար-  
սենիկ այսօրինակ գտանել : — **Շ**ատ  
մեծ և խորին խորհուրդս ունին , զոր  
ես այժմ ոչ հասկանամ , բայց յապա  
հասկացայց . գուցէ բոլանդակեալ ’ի  
փառս և ’ի գովեստ **Ա**ստուծոյ : ”

**Օ** այսու ժամանակաւ **Վ** արսենիկ

լուացաւ : զգեցաւ , և եկն եկաց ա-  
ռաջի հօրն .

**Ե**բայ . **Չ**ննջես այլ որդեակ .

**Վ**արք . **Ա**չ հայր Արքայ . այս միշտ  
ժամէ յառնելոյ իմոյ , և —

**Ե**բայ . **Ա**ղօթելոյ :

**Վ**արսենիկ միայն զգլուխն կորա-  
ցոյց և ոչ պատասխանեաց : Խսկ Ար-  
քայ յաւել ասել ցնա “Դիստրիկ ,  
ո՞ր յիշխանաց իմոց լուեալ՝ թէ դու-  
այդքան խոշոր զգենուս , և յօժա-  
րիցի ամուսնանալ ընդ քեզ : ”

**Վ**արք . **Ա**հայր Արքայ , ո՞ր յիշխա-  
նաց քոց կարիցէ փափուկս զգեցու-  
ցանել ինձ՝ յորժամ 'ի գերութիւն  
վարիցիմ , կամ 'ի բանդ արկանիցիմ ,  
և կամ յաղքատութիւն իջանիցեմ : —  
Բարիոք ևս չէ զանձն կիրթ ունել  
առ ամենայն վիճակ անցաւոր կենաց :

**Ե**բայ . **Ե**րկուանամս դստրիկ , զուժոյ  
միահեծան տէրութեան իմոյ :

**Վ**արք . **Օ**աթոռ քո Արքայ , յա-

ւիտեան հաստատեսցէ Ամենակալին .  
և ընդէր պիտի երկբայիմ զկարողու-  
թենէ քումմէ :

**Առաջ.** Ուրեմն կասկածիս զգթութե-  
նէ Հայրենի խնամոցս —

**Վարդ.** Քամւ լիցի ինձ այդ, Հայր  
Արքայ . զի որ ծնար զիս անկախ 'ի  
կամաց խմոց , սնուցեր զիս՝ անկախ 'ի  
կարեաց խմոց , իշխան ես յետ Առ-  
տուծոյ՝ և կնքել զվախճան իմ , ան-  
կախ 'ի կամաց խմոց :

**Առաջ.** Դաստեր Արքայի զայդպիսիս  
խօսել զարմանալի բան չէ . այնինչ քաջ  
գիտէ , զի օժիտք իւր իշխանացու-  
ցանել կարեն զամեն սինլիքոր :

**Վարդ.** Եւ ոչ բազում սինլիքորք  
իշխանացեալ և անկան . ոչ բազում  
սեպուհք ծնեալ և սնանկացան . ոչ բա-  
զում նախարարք այսօր՝ և 'ի վաղիւ  
սնանկացան , մինչ զի և թագաւորք  
անգամ — Ես հաւատամ , զի միայն ծը-  
նողական օրհնութիւն , և զթութիւնք

**Ա**մենակալին են, որք աղքատացուցանեն, կամ մ ծացուցանեն :

**Ա**րտ. **Ա**յդքան մեծ են հաւատք քոյ յողորմութիւն Բարձրելոյն :

**Վ**արտ. **Ե**թէ շնորհք Քրիստոսի իցեն, այս :

**Ա**րտ. **Ա**յս, եթէ ընդ շնորհաց Տեառն և Հրաքոսն լիցի :

**Վ**արտ. **Ո**խ կաթիլ շնորհացն Քրիստոսի արժէ զոտանն Հրաքոտ, որ կարէ այսօր իմ լինիլ, և վաղիւ այլում. բայց շնորհք Տեառն անվոփոխելիք են :

**Ա**րտ. **Ա**նշնուտ հաւատաս 'ի դոյն :

**Վ**արտ. **Տ**էրամբ իմով, և **Ա**ստուծով :

**Ա**րտ. (**Մ**եհաստ, ) **Ուրեմն** արքն ոյնոքիկ վարկալարազի ինչ ոչ խօսէին, այլ զոր ինչ տոմն տայր նոցա տնօրինութիւնն **Ա**ստուծոյ :— (**Ա**րտ. Դաստիարակութիւն) գիտես դստրիկ, զինչ իցեն արդ հաճոյք Հօրքոյ :

**Վ**արտ. **Ա**յս Հօյը, միշտ բարին

զաւակաց իւրոց :

**Առ.** Պ. իցուք թէ հաճոյք իցեն ինձ  
յայսմ իսկ կիտի , հանել զքեզ յա-  
մենայն մասնակցութենէ ժառանգու-  
թեանց քոց :

**Վ.** Կամք քո օրհնեալ եղեցին  
Հայը Առքայ . բայց մի հաներ զիս  
աղաչեմ , ՚ի մասնակցութենէ ծնողա-  
կան օրհնութեանց քոց , և այդ շատ  
է ինձ :

**Օ** այս ասացեալ որդիապարտ հա-  
մեստ խանդաղատահօք անկեալ փա-  
րեցաւ զոտիւք ծնողին , և նա գըր-  
կեալ զդոտրիկին ամենագով՝ համբու-  
րեաց : Երկոքին ևս յարտասուս հա-  
րան , և օրհնեալք ՚ի բաց արձակե-  
ցան : — Հաւն երեք բերան խօսեցաւ  
և Ճամահարն դոչեաց զամենեօեան  
յաղօթս առ Աստուած ՚ի մեծ և ՚ի  
թագաւորանիստ կաթուզիկէն Պար-  
տաւայ :

---

ԳԱԼՐԱԽ Գ.

Մատուռ Խիշճն աղբար է ՚ի պանջանաց :

Ու յամպահամըոյը յԱղատէն Մասսեաց  
Արքայս աշխտրհի՝ բաշխեցեր Աստուս' ո ,  
Թօնդ նոցա միայն՝ զոճիր խորդութեանց  
Զոր ընդգէմ այս բուն Հայրենեաց իւրեանց :

Ճ ԱԳԱԿՈՐՈՒԹԻՒՆ Աղուանից ընդ  
իւրե պարունակէր յայնժամ, զերիս ՚ի  
մեծամեծ նահանգաց Մեծին Հայոց ,  
զՓայտակարան , զԱրձախ , և զՈւ-  
տիս, ընդ այլոց մասնաւոր կալուածոց՝  
որ ՚ի մէջ և արտաքոյ Հայաստանեայց :  
Պարտաւ մայր քաղաքաց աշխարհին  
անկանէր յՈւտի Առանձնակ , ՚ի տա-  
փարակ դաշտավայր ինչպարափակեալ  
լերամբք Դիզափայտի և Արմազայ՝ ՚ի  
Հարաւոյ , ընդ որ կարկաչելով անցա-  
նէին Գետիկն և Օրբեթական , ու-  
զիզ ընդ Հիւսիս ընթանալով և խառ-  
նելով ՚ի Առւր գետ : — Յորմէ և անդը  
ահեղափառ ամբառնայր լեառն Առվ-  
կաս, ընակարան ձեանց սառնամանեաց ,

և կաղաղ անմատոյց հինից և Հրոսակա-  
 ցըն Արմատացւոց : Ը ինուի ք յար-  
 կոց , տանց և ապարանից համակ'ի կո-  
 փածոյ քարանց , հզօր պարսպօք իներ-  
 քուստ յեղերաց գետոյն ընդ դարն 'ի  
 վեր հեղիկ ամբարձեալք , և յարքունիո  
 Վ աչագանայ պատկեալք՝ տեսարան շր-  
 քեղ ընծայէին 'ի հեռուստ ուղեհար ,  
 վաստակաբեկ և մեծ ազանձ կարաւա-  
 նին : Ը ուրջանակի ունէր պարիսպս  
 անմատոյցս երիս . մեծակառոյց բրդօք  
 աշտարակօք և դիտանոցօք զարդա-  
 րեալ հաւասար տարակայութեամբ յի-  
 րերաց : Պարիսպն առաջին կամ վերին  
 յիւրում փակէր զողջոյն Արկ Ար-  
 քունեացն Աղուանից , զոտնգանձուն  
 կոփեալ 'ի սեպացեալ քարաժայոին ,  
 զղինարան , և զպահակ անձնապահից Ար-  
 քայի : Միջին կամ երկրորդ պարիսպ  
 ընդ իւրեւ փակեալ զվերինն ընդար-  
 ձականայր նաև յապարանս իշխանաց  
 և մեծամ ծ նախարարաց աշխարհին :

Խսկ վերջին կամ ստորին պարիսպ՝ ամ-  
րակառոյց և հաստատուն քան զերկոսին,  
յիւրում փակելով զնախասացեալսդ՝  
պարունակէը զքաղաքն բուն՝ ամենայն  
հրապարակական շինութեամբ. ք նորա :

Արտաքոյ անկանէին այգիք և ծազ-  
կոցք . Խանք և պանդոկք , ուրկա-  
նոցք և հիւանդանոցք՝ ամենայն բարե-  
կարգութեամբ , լիութ և վայելչութ  
զարգարեալ : Այս էր թէպէտ արքայ-  
անիստ մայրաքաղաք աշխարհին , այլ  
յերեսաց անդադար պատերազմաց յա-  
ւուրց հետէ Ասրւաղենայ ցՎ աչէ և  
Վ աչագան , իմաստութիւն թագա-  
ւորացն Ազուանից հանձարեալ էր մեծ  
իմն քաղաքական բարեկարգութիւն  
զօրաց և սոսկականսաց միանդամայն յո-  
րոշ և զատ 'ի միմեանց ընակել : Ուստի  
և Վ աչագան Արքայ կառուցեալ իւր  
դաստակերտ գեղեցիկ 'ի Պ ուտականն  
աւանի՝ որ անկանի յարեելից հիւսի-  
սոյ Պարտաւայ՝ արարեալ էր զայն զօ-

բանիստ սպայից իւրոց . լնդ որոց խառն  
'ի միասին բազում անգամ և ինքնին  
ընակէր անդ :

Խոկ Հրաքոտ գաւառ և քաղաք ,  
որ ժառանգութեամբ անկանէր Ա ար-  
սենկանն , տարածէր ՚ի բուն մեր Փայ-  
տակարան , յարեւելից Դուտականին  
երկայնեալ , յարեւմտեայ եզերաց Ա ը-  
կանի ծովուն՝ մինչեւ 'ի Դուռն Եր-  
կաթի : Հրաքոտ , որպէս և անունն  
հնչէ ՚ի բարբառս աստուածախօս՝ Նշա-  
նակէ երկիր Հրոյ , կամ որ նոյն է՝  
կրակոտ : Ունի լեզուակ ինչ ցամաքին  
դէուլ 'ի ծովն երկայնեալ՝ լեառն և քա-  
ղաք 'ի նմա՝ Ատլի անուն , որ նշանակէ  
երկիր լի ատերք , ատով , կամ կրակով .  
ուստի ելանէ մշտնջենավառ հուր և  
ծուխ ստորերկրեայ լնդ ամս ողջոյն :  
Խոկ գաւառն բովանդակ , որ զոտամբ  
անկեալ նորա կամ զաքով , է գաշտ  
լայնածիր ուրեք ուրեք լնդ մոխրով  
թաղեալ , և ուրեք ուրեք կանաչա-

գեղ զարդարեալ , Աներք նորա առ  
 հասարակ քըրքում , նաւթ , և շերամ :  
 Գեղմն ոչխարաց նորա ասրամնափոյշ .  
 ատամունք նոցա ուկի գլխավլին՝ յա-  
 քօտելոյն զքրքում . իսկ միտ նոցա՝ ան-  
 օրինակ 'ի համօրէն աշխարհի : Սիք  
 աշխատութիւն ճանապարհորդին հան-  
 գերձել զկերակուր՝ յաշխարհի այս-  
 միկ . շատ է նմա փորել զերկիրն քը-  
 լաւ 'ի չափ ակլթի , և 'ի վերայ դնել  
 նորա զոր ինչ միանգամ և եփելն կամիցի ,  
 և ահա վաղագոյն քան զկրակ 'ի փոյտէ .  
 երկիրն ինքնին եփէ նմա զայն՝ ստորերկ-  
 րեայ ջերմութեամբ իւրով :

Այս աշխարհ հրեղէն՝ յանիշատակ  
 դարուց անտի մինչեւ 'ի ժամանակս մեր՝  
 ուխտատեղի հանգիստացաւ ոչ միայն  
 մերց և մերձաւորաց , այլ և օտարաց  
 և հեռաւորաց , մինչեւ Հնդկաց անգամ  
 և 'ի Ճենաց խմբել անդանոր քազմու-  
 թեան կրակապաշտ որենոյ , և կատա-  
 րել զուխտ իւրեանց :

Արքութիւնք վայրաց սարսափարանք  
սեստեաց, և կեղծարանք հեթանոսաց  
եղեն՝ և են. կոյր նախապաշարութքը  
կրօնից յառաջ վարել զկարի լուսա-  
ւոր դիտմունս օգտից իւրեանց, Եւ-  
աստի միայն է, զի նախ Աղուանք 'ի  
մէնջ հերձեալ, և ոչ անձանց կարացին  
սեպհականել զաշխարհն :

Լ իցի որպէս և է, տակաւին իմաս-  
տուի Ա աշագանայ որոշեալ էր զաշ-  
խարհն Հրեղէն՝ Հրեղենին 'ի դստե-  
րաց. զի գէթ նովին ունիցի զփեսաց  
իւր 'ի հնազանդութիւն իւր :

Ա բաց զգիշերն ՚ի բուն անքուն տու-  
այտեալ ՚ի վարանաց քան վաստակոց՝  
ոչ կանխեաց յԵկեղեցին. այլ առանձ-  
նացեալ ՚ի սենեակ իւր՝ գրեաց իւրով  
իսկ ձեռամբ պատուէր հրամանի առ  
Աաղահոն բերդապահ, և կնքեալ ետ-  
ցսենեկապետ իւր՝ անձամբ տանել  
մատուցանել նմա, և ինքն ննջեցաւ :

Աաղահոն նոր որոշէր պահա տուլն-

Չենականս վասն պէսալէս կոյից կարե-  
ւորաց քաղաք ին, այնինչ մատուցաւնմա  
պատգամարքոյի : Օ որ ընթերցեալ  
և կոչեաց առ ինքն վաղվաղակի՝ զՏի-  
րոց հարիւրապետ, հրամայեաց առ-  
նուլ ընդ իւր տասն դինուորս կորովիս,  
և գնալ շուրջանակաւ պատել զկրպակ  
պանդոկին՝ յորում էին Գեղենակ,  
Արզունի և Գուրգէն : Հացի և ջրոյ  
նոցա մեծալէս խնամ տանել, այլ մի  
խօսել լինդ նոսա ամենեին . մի հուպ  
գնալ 'ի ներքս, և մի արտաքս թո-  
ղուլ զեսոսա, մինչև հասանիցէ վերս-  
տին հրաման թագաւորին :

Խւրաբանչիւր 'ի նժդեհացն դեռ  
նոր յառնէր 'ի քեոյ, այնինչ եհաս  
անդր Տիրոց զինուորօքն : և ցուցեալ  
նոցա զհրաման Աաղահոնի՝ շուրջ պա-  
շարեաց զկրպակաւ նոցա :

Գեղենակ նոր յոտն կայր . Արզու-  
նի դեռ շփէր զաչս իւր ' և յօրանջէր  
բերանաբաց . իսկ Գուրգէն կիսաղաք-

Թուն կողէ 'ի կող անկանէր , մինչ տես  
սին զզինուորսն , “Քամ , սոքա՞ն ոյք ; ”

Առ “Երազս կատարեցաւ ” :

Գեւ “Ի՞նչ ” :

Առ “Ո՞չ լնթեռնուս , — “Գեղեւ  
նակ . Արգունի . և Գուրզէն կալա-  
նաւորք ” :

Գուրզէն նոր զաշսն բացեալ՝ ա-  
սաց “ում ” :

“ Աազահօնի ” պատասխանեաց Ար-  
զունի , և դարձեալ առ Տիրոց , եհարց  
ցնա թէ “այս ի՞նչէ , և ընդէր : ”

Տիրոց լուս և եթ մնաց . և ոչ անգամ  
եցոյց թէ լուաւ ինչ 'ի նմանէ . որ  
շարժեաց զերեսին միանգամոյն առա-  
ւել և շփոթ կրիւք հարցանել և ստիւ-  
պել զամենեսին առ ՚ի լոյս խնդրոյն :  
Այլ պատասխանի՝ և ոչ բնաւ :

Առ “ լ աւ յարեաք 'ի գործ . — ”

Գեւ թխուի թէ ազադակ մեղաց մե-  
րոց հասեալ եցէ յերկիլնս՝ սովաման  
կորուսանել զմեզ :

Գառնի. “Բայց ոյք իցեն ոյս համերք  
Ապահովի ” :

Գեւ. “Ուր եշխանք խօսին ՚ի դիմաց  
Թագաւորին , զինուորաց համբանալ  
ալիտի ” :

Առ. “Հա որպէս ՚ի խօսիլ հրեշտա-  
կին , պատվանձեցաւ Օ աքարիաս ” :

Գառնի. (ծածուկ) “Բայց և էջն Բա-  
ղամոգին խօսեցաւ ” :

Առ. “Առքա յիշանց անտի չեն : —  
Բան կայ — հարիւրապետ յի՞նչ պէտս  
եկեալ է ձեր աստ — ” եհարց դար-  
ձեալ ցՏիրոց , այլ պատասխանի ե  
ոչ ամենեին ” :

Գեւ. “Արդարեւ նորօրինակ դատաս-  
տան , — և լոին կալանաւորութիւն” :

Գառնի. “Վաղցու կորուսանել կա-  
մին զմեզ ” :

Առ. “Ափսօս . սոքա թշնամիք Ար-  
քայի չեն , ապա թէ ոչ զլեարդս տա-  
սանցն ՚ի միասին՝ ուտէի , ” —

Գեւ. “Երբ քաղցու մնանել կայ

**Թեղ**, թող լիցի, որպէս և կամի :” —

**Առ** “Աչ, մի այդ քան փոյթ Գեղենահակ . գուցէ ’ի խոստովանութիւն քո եկեալ իցեն արքս այսոքիկ :”

**Գառագ.** “Արծք բրօք .” —

**Գեր** “Խճճ թուի, թէ յաւէտ ’ի խընամախօսութիւնն Գուրզենի եկեալ իցեն . ուստի և ամաչին յայտնապէս խօսել :”

**Անդ բառիս յոտն յարուցեալ Արզունայ գիրկս եհար , և ’ի բաց կորզեալ զշաղլթ իմն սանդ՝ յորձաքար վիմե , զոր հազիւ կարեր զօրութիւն տասն ոգւոց ’ի տեղւոջէն շարժել , տարաւ կառոյց քանի մի քայլիւք հեռի ’ի տեղւոջէն , և ասէ . “Եթէ ամաչին յայտնապէս խօսել , թող ’ի խնամաքարին նստիցեն : ” —**

**Տերոց** և զինուորք հազիւ կտրացին թագուցանել զզարմանս և զծիծաղիւրեանց . բայց և սյնապէս լուռ և անշարժ կառուցեալ կացին .

Գառնի. “Իս փառս Ազգի մերոյ Արքա  
զունի. ՚ի բաց տար զկատակդ ՚ի վտան-  
գի” :

Գևու “Մա՞ վախիր, Գուրգելէն. սո-  
քա և համը, և խուլ, և կոյրք են :  
Եւ եթէ չիցեն ես, երբ անշուշտ կայ  
մեզ մեռանել, թող մեռցուք ուրախու-  
թեամք” :

Գառնի. “Մարտան քեզ. որ այսպէս  
պատրաստ և յօժար ՚ի մահ դիմս” :

Գևու “Աամի՞ս զի փորձեցից”— Օայս  
ասացեալ վազս էառ դէալ ՚ի դուռն  
կոյս . և ահա տասն աշտէնք նիզակաց  
՚ի միասին խոնարհեցան՝ լարեալք դէալ  
՚ի կուրծ նորա . յետս ընդ կրտնկն  
ուտեաւ և ասէ , “Չէ , տեսանեն .  
գուցէ և լսեն և խօսին ես :”—

Մինչքանք էին ՚ի բերան Գեղենա-  
կոյ , սպասաւորք Աաղահոնի , բերին  
խանս պէսպէս համագամ կերակրոց  
մի մի վասն իւրաքանչիւրոց ՚ի կալա-  
նաւորացն , և նշանացի արարին , զի

բազմեալ և կերիցեն : —

“Աղահոն Հօր հոգւոյն հաց տայ ,”  
ասաց Արդունի , “և ինձ բնաւ փոյթ  
և չեք , եթէ զտասն ամ բովանդակ  
ոյսօրինակ կալանաւոր պահիցէ զմեղ .  
միայն թէ — Արեք արք . քաղցեալ որ-  
կորոյ հրաւէր աւելորդ է : ” — Եւ այն  
ինչ սկսաւ ուտել , բազմեցան առլնթեր  
և Գեղենակ և Գուրգէն , և այնպիսի  
իմն անհնարին արագութք ՚ի ներքս  
գլորեցին զկերակուրսն մինչ երկնչել  
սպասաւորաց իշխանին թէ գուցէ և  
անօթք և խանքն ձգիցին զհետ : Այս-  
պէս անցուցին նոքա զաւուրս ՚ի մէջ  
վայելչութեանց և վայոց , ոչ բնաւ ըզ  
մտաւ ածեալ թէ զինչ սկիզբն և կա-  
տարած բանդին և բարձուցն էին :

---

ՕՇԵՆՏ ՀՂՋՐԱՅ Այժմ է :

ՈՐ ԺԱՃՈՒԿԻ ԽՈՅԻՄ, յայտապէս իմա,  
ԶԻ ԹԷ Մարդ ոչ քեզ, ղեռ ԱՍՏՈՒԾԾ լու,  
Հինգ անգամ անսամ, միանգամ ասա.  
Թռէ փոշիմանիս՝ յանցանքըն իմ է' :

ԽՍԿ անակնկալ վճիռ Արքայի, որ  
բաւական էր յուսաբեկ առնել զսէգն  
ի սուսեր՝ Համարեա թէ ոչ ինչ ընաւ  
ազդել կարաց Վարսենկան, յարուցեալ  
գնաց յիշկեղեցին, որպէս յերեկն և  
յեռանգն. և անխռով պարզութեամբ  
հոգւոյ յաղօթս եկաց առ Աստուած:  
Խրբե պաշտամունք աղօթիցն լցան,  
ելանէր ընդ Ո՞ր և Քեռ իւրում  
Խնձկան՝ ի դահլիճ ապարանիցն՝ որ  
Հոյէր դէպի Առւր գետ և ի կովկաս.  
անթարթ աչօք Հայէր առ նոսա. որ-  
պէս թէ մնաս բարեաւ առել կամե-  
ցեալ: Այսէպ ստէպի հծծելով՝ ի շըր-  
թունսն, “մեծ են շնորհք Աստուածոյ,”

և ոչ բնաւ բառ ինչ կամ ըան աւելի  
քան զայն՝ լսելի լինէր : Մինչ յոյս-  
պէս խաղաղ և յանուշակ զրուցատը-  
րութիւնս պատաղէր գերդաստանն , և  
ինձիկ զԱ արսենիկ հրաւիրէր ՚ի նո-  
րաշէն իւր դաստակերտ՝ յանկարծ դը-  
ղըդիւն մեծ շարժեաց դլխովին զԱր-  
քունիսն Ազուանից . դրանդիք ապա-  
րանից ահագին շառաչմամբք բացան ,  
զինուորք ՚ի ներքս զեղան , և առաջի  
կացուցին Ասքայի զերեսին տրսն՝ կա-  
պերալս . զԳեղեղենակ , զԱրզունի , և ըդ  
Գուրգէն : Ո՞նդ որս դրեթէ և կէս քա-  
ղաքին ամբոխ արարեալ՝ աղաղակաւ  
՚ի ներքս մտին . և ոչ ոք իմանայր թէ  
ցք , կամ վասն որոց յանցանաց կալա-  
նաւորեալ էին արքեն ,

Օ զեցեալ զծիրանիս Ա աչական ,  
որ տնշուշո զգատաստան արեան գու-  
շակէր , ահեղափառ բազմեցաւ ՚ի գա-  
հոյս գատարանին : Ատենաբանք և գա-  
տաւորք շուրջ կացին զնովաւ , և գա-

դ

Հիմք ամենայն՝ որոք և բրոք սպասէին  
ակնարկութեանն :

“Տես զի՞նչ այս՝ Հայը իշխան. ” ա-  
սաց Տիկինն Աղուանից ցներքենի իւր.  
և երազեկ եղեալ զկալանաւորացն՝ վար-  
կաւ թէ մահապարտ ոմանք իցեն , և  
քստմնեալ յանձն իւր՝ առ զդստեր-  
սըն և ՚ի ներքս կանանցին առանձնա-  
ցաւ . զի մի տեսցէ զպատիժ պատու-  
հասի նոցա :

Խսկ կալանաւորելոցն խիզճ յստակ  
էր և անխոռով , Աղքատիկ վիճակ կա-  
ցութեան նոցա զամնեսեան ՚ի ցաւս  
շարժէր քան ՚ի ցասոյթս : Ո՛չ ոք էր՝ որ  
դատէր զնոսա , բայց միայն Արքայ .  
և նա միայն լնդդէմ երից կապելոցն՝  
շատ էր և զարհութելի : Հրամայեաց  
զառաջեաւ կացուցանել զնոսա , և յո-  
րոտ ինչ ահեղագոչ թնդաց ՚ի դէմն  
նոցա , “Օ ի՞նչ արք , խօսէիք յանձի-  
նըս ձեր յեռանդեանն գիշերի :”—  
Արդունի ակնարկեալ առ Գեղենակ՝

փսփլսաց ՚ի շրթունս , “Եկ օ՞ն , խոստու  
վանեան առաջի՞ որում խոստովանա-  
հայրն կամեիր լինել” — Այլ Գեղե-  
նակ և Գուրգէն լուռ և ահահար կա-  
ցին . մինչեւ վերստին գոչեաց Արքայ .  
“մահ և կեանք կան արդ ՚ի լեզուի ձե-  
րում , և ով , եթէ ուրանայք զՃշմար-  
տութիւնն ։ ”

Գեւ “Տէր Արքայ , ոլ պատմեաց  
քեզ , թէ երեքին արք պանդուխուք և  
անցաւորք , խօսեաք ինչ զգիշերայն”

Աբ . “Շատ է զի խօսեցայքդ , և իմ  
հրամաննէ ձեզ պատմել զամենայն ճըշ-  
մարտութեամբ ։ ”

Գեւ “Տէր Արքայ , վասն ամենայն  
դադարկ բանից համարս տալ Աստու-  
ծոյ՝ ուսաք . և ոչ երկրաւոր թագա-  
ւորի . լստ որում Աստուած կարէ քըն-  
նել զգաղտնիս սրտից մարդկան , և թա-  
գաւորն ոչ ։ ”

Աբ . “Խորհուրդն ոչ ասացեալ . խոր-  
հուրդէ , և Աստուծոյ քննութեան մի-

այն ենթակայ . բայց յորժամ բանիւ  
այսինքն՝ լսելի և հասկանալի ձայնիւ  
Հնչի , այլ ևս ոչ մնայ խորհուրդ , այլ  
մարմնանայ ՚ի բան . ուստի և մարմնա-  
ռոր իշխանութեան մերոյ ենթակայ լի-  
նի : — Պատմեցէք , եթէ կամկաք ըդ  
կեանս ձեր : ”

Առ “Տէր Արքը յաւիտեան կաց .  
արք աղքատք և անցաւորք որպէս և  
եմք , տարապարտ աշխատ առնել զՏէ-  
րութիւնդ ոչ համարձակիմք , և այն  
ոչ թէ վասն չնչին կենաց մերոց , յո-  
րոց եթէ վրիպեսցի սուսեր արդարու-  
թեան , տակաւին ոչ վրիպի սուր սո-  
վուն , այլ մասաւանդ ՚ի ողատիւ երե-  
սաց թագաւորի , և ՚ի ցոյց Հպատա-  
կութեան իմոյ՝ ասեմ , զի Գեղենակ  
քեզ ՚ի խօստովանահայրութիւն կոչեաց  
զինքն . ես՝ ՚ի սպարապետութիւն զօ-  
րաց քոց . իսկ Գուրգէն , ոչ զայս  
ընտրեաց , և ոչ զայն : ” —

Առ “Արդար և ուղեղիլ խօսեցար , այլ

Վառըդէն զբնչ :

Առ. “Օ — Օ — Օ դուս — տրն —  
քո — զ — Վ արսենիկ :

Գառագ. “Տէր Արքայ յաւիտեան կաց,  
Ճշմարիտն ասաց Արզունի . և եթէ մահ  
ես սլատահիցի ինձ , տակաւին սիրով  
ընդգրկեմ զայն ՚ի վերայ անուան Վ ար-  
սենկան : Ես ոչ զայս կամիմ , և ոչ  
զայն . այլ կամ զմահ , կամ Վ արսե-  
նիկ :”

Առ. “Օ ինչունիս արժանի Դար-  
տեր Թագաւորի :”

Գառագ. “Օ աշխատովին զԱստուած :

“Օ արմանալի իմն ներդաշնակուի ,  
ասաց Արքայ ցաւագանին . թէ ՚ի խօսս  
արանց այսոցիկ՝ և թէ ՚ի դիտաւորուե  
իմում , ածէք այսր զՊակէն երկրորդա-  
կան , և Գեղենակ լիցի ինձ աւագ խոր-  
հրդականաց : Առ և դու զսուսեր զե-  
նուորութեան՝ Արզունի , և որպէս խոս-  
տացարդ՝ կատարեա հաւատարմութ :  
Եւ զայդոսիկ՝ արքունական շնորհա-

բաշխութեամբ իմասլ միայն , առանց ինչ  
արժանեաց ՚ի ձեր կողմանէ : ” Գեղենակ  
և Արզունի անկան ՚ի վերայ երեսաց ,  
Համբուրեցին զբարձ Արքայի . մահու  
և կենօք կնքելով զերախտագիտուիս  
իւրեանց : ”

Արք. “Բայց և սա ունի աշխատուի և  
Աստուած , վասն դստեր Վաչագա-  
նայ . և ես զՎ արսենիկ ապաստան թո-  
ղումայսօր ՚ի գթութիւն Աստուծոյ—  
ածէք զիա այսրէն : ”

Իբրև բերին մուծին զՎ արսենիկ  
յատեան անգը՝ շղարշ նրբաթել զգըլ-  
խովիւրով , պարկեշտ տարազու և վա-  
րուք , ասաց ցիա Վաչագան , “ Դուռ-  
տը իմ հետազնով իս կամաց իմոց : ”

Վահան. “ Հետազնով իմ Հայր Արքայ ,  
և մինչեւ ՚ի մահ :

Արք. “ Ահա Գուրզէն քեզ յայր , և  
աշխարհ ձեզ ՚ի ընակուի , այլ միու-  
րեք ՚ի սահմանի Տէրութեան իմոյ :

Վահան. Կամք քո է այս Հայր Արք :

Քայ, — ընդունիմ : ”

**Եւ.** “Գուրգէն, ահա Ա արսենիկ,  
զոր խնդրեցեր քեզի կին, մի այլ երկ-  
րաւոր պարգևաց ինչ ակն ուներ յիսէն.  
առ զդա՝ և երթ ել արտաքոյ Տէրու-  
թեանս Աղուանից : ”

**Գ.** “Եթէ մարդիկ այսքան պար-  
գևս բարիս և մեծամեծս ունիցին և  
տայցեն մարդկան անարժանից, որպի-  
սի ես եմ, որքան ևս Ամենակալն Աստ-  
ուած, տայցէ պարգևս բարիս՝ որոց  
յուսով դիմեսցեն առ նա : ”

Կալաւ Արքայ զձեռանէ երկոցուն,  
օրհնեաց զնոսա, և ապաստան արարեալ  
ինամոցն Աստուծոյ՝ մինչ չե ումեք  
ինչ իմացեալ՝ եհան զնոսա արտաքոյ  
քաղաքի և սահմանաց Տէրութեան իւ-  
րոյ, որպէս և յառաջագոյն տնօրինեալ  
իսկ էր ի միտս իւր :



Կարծիք մարդկան՝ լոկ կարծիք են ,

Զիբաւն ասել ոչ կարեն .

Յայտնութեան քում մնայ ԱՍՏՈՒԱԾ

Լոյս խորհրդոց գործողին :

Դեմի յատեան բազմէր Արքայ , այն-  
ինչ շշուկք ասից և լից բերանոց 'ի  
բերանս անցեալ՝ զօրէն փոխադրական  
իմն ժանտախտի զքաղաքն և զաշխարհ  
Աղուանից բովանդակ պատեալ պա-  
շարեցին : Յարձան անմռունչ եկաց  
Տիկին Աղուանից՝ ընդ լուր պատահա-  
ծին , ոչ զկոծ առնել գիտացեալ ընդ  
կորուստ դստերն , և ոչ զբոց աղեաց ջե-  
ռուցեալ առ անտես և անճանաչ փեսայ  
իւր : Եւ դոգջիր ՚ի վերուստ անդուստ  
եղե այս ընդարձանալ կրից նորա որպէս  
դի ժամանակ տացի անվրդով զԱստու-  
ծոյն Աստուծոյ մատուցանել Արքայի .  
ապա թէ ոչ ո գիտէ զի՞նչ ինչ ոչ գոր-  
ծէր գորովիս ծնողական : Խակ Խնճիկ ,  
սիրասնունդ բոյը նորա , ընդ լսել համ-

բաւոյն յանկարծ և ուշաթափ նուա-  
 ղեցաւ . և ջերմի սաստիկ տիրացեալ  
 դալարահաս անձին նորա՝ արկ զնա 'ի  
 մահիճս հիւանդութեան զաւուրբ բազ-  
 մօք տուայտեալ : Ա աչագան միայն,  
 որ թեպէտ և ինքն գիտէր զի՞նչ արար  
 ըստ հաւատոց իւրոց , սակայն խան-  
 դաղատ գթով հայեցեալ 'ի Տիկին իւր  
 և 'ի Գուատորն , զղջացաւ , ոչ այն-  
 քան 'ի վերայ արքունի շնորհաբաշխու-  
 թեանցն՝ որքան թէ 'ի վերայ անխոհեմ  
 եղանակին՝ զոր 'ի գործ եղ : Գաերդաս-  
 տան Ա աչագանայ թողեալ զԱ ար-  
 սենիկ՝ առողջութեան և կենաց ինձ-  
 կանն խնամ տանէր , այնինչ կանանին  
 Աղուանից սկսան բան շինել ինքեանց  
 դարարս թագաւորին , և կարծեաց 'ի  
 կարծիս հոլովելով զնոսա՝ յայն բերել  
 կացուցանել , իբր թէ Ա աչագան յե-  
 րազի զՔաջ տեսեալ և զարհուրեալ  
 արար զամենայն ընդդէմ'բանի և մարդ-  
 կային բնութեան : Օքարունիք 'ի

մարդկանէ յիշէին , թէ յանկարծ զոք  
ամբառնալ ՚ի ստորին վիճակէ ՚ի ծայ-  
րագոյն աստիճան իշխանութեան՝ հա-  
զիւ պատահէր յաւուրս թագաւորացն  
առաջնոց , բայց և զգուստըն խթել ՚ի  
կողս օտար մուրացկանի ուրուք , և վա-  
րել հալածել ՚ի բաց՝ Ա աչագանայ մի-  
այն էր : Խսկ Խըրէց Աղահիճոյ , զոր Ար-  
քայ իբրև զգերմարդկային ոք յար-  
դէր՝ մատուցեալ առ Շուփհաղլիշոյ  
Խպիսկոպոսապետ աշխարհին՝ մեծաւ  
դարմացմամբ և կարեկցութեամբ լոզ  
գուժգան աղետից (Օրիորդին քարո-  
զէր ՚ի լուր :

Շատ . “ Օ ի՞նչ . արդարեւ Արքայ լոզ  
Գեղենակաւագ խորհրդականաց արար՝  
և զԱրզունի՝ սպարապետ Աղուանից : ”

Խէտ . “ Այս Հոգենոր Տէր , ոյս . և  
զեռուստըն զիւր սիրելի զԱ արսենիկ՝  
տուեալ Գաւրգենայ ուրումն կորդու-  
ացւոյ , որ պանդուխտ և աւուրն պա-  
րենի կարօտ՝ հալածական արար յիւրոց

սահմանաց : ”

Ըստ. “Օ ի՞նչ, — զԱ արսենիկ, —  
և զնա կարօտի ուրուք Կորդուացւոյ :

Լուէս. “Այս :

Ըստ. “Առ ի՞նչ վախճան :

Լուէս. “Ինքնին Արքայ դիտէ զայդ,  
բայց թուի թէ ՚ի կնութիւն նմա :

Ըստ. “Հա, եթէ այդպէս իցէ, ու-  
րեմն բարի է, զի՞ կարօտ որքան և իցէ  
Կորդուացին, դեռ Հրաքոտ օժիտ ան-  
կանի Վարսենիան . և բաւական է ըզ  
հազարս քան զնա փարթամացուցանել :

Լուէս. “Ո՞չ այսպէս, Հոգևոր Տէր.  
այլ տաի, թէ զրկեալ իցէ Արքայ ըզ  
դուստր իւր՝ յամենայի մասնակցութե-  
նէ երկրաւոր ժառանգութեանց իւրոց :

Ըստ. “Մոլիս, Մատթէ.” (զի այդ  
իսկ էր անուն երիցուն .) “կարեւոր բան  
չէ այդ :

Լուէս. “Ատոյգ է, Հայր սուրբ : — Եւ  
այն՝ ՚ի զերայ մեղանչական ցնորանաց  
իւրոց՝ թէ իւր այնպէս առնելովն՝ յանձ-

նեալ իցէ Աստուծոյ զզաւակն բարեապաշտ է”

Ըստ՝ “Աստուծած փորձեաց զԱբրաՀամ՝ ի միածին իւր Խօահակ . Յեփթայի փորձեաց զԱստուծած՝ ի դուստրն իւր միամայր . իսկ Վաչագան և ոչ զմի յայնցանէ . ուրեմն անշնչւշտ որ ցնորեալ է”

Օայսու ժամանակաւ փոքր մի յուշ և յողջութիւն եկեալ՝ ի ներքս անդր մըտին Տիկին Աղուանից և Խնձիկ Օրիորդ . լուրջիմն տրտմաւթիւն աղէլսորով գթութեան ’ի դէմս Վ’օրն և կենդանի կարեկցութիւն քեռական խանդաղատանաց յայտո չնքաղ Օրիորդին Աղուանից Արտասուօք մատեան ’ի Համբոյր աջոյ Հայրապետին , և յաղերս յաւիտենական մորմաքանաց պաղատեցին զետ միջնորդել առ Արքոյ վասն դարձի Վարսենկան : — “ ’Խփառս Աքանչելոյն երկնաւորաց փութա ասեն , Հայր . փութա . ասլա թէ

՞չ ՞ գիտէ թէ յոր սար կամ ՚ի ձոր  
նուաղեալ գաղանաբեկ կորնչեցի Վար-  
սենիկ, կամ քաղցւոյ և ծարաւոյ ան-  
ծանօթ՝ լվեալ ՚ի նոցանէ՝ և չարաչար  
մեռանիցի։ Դթա Հայը Առարք ։ գթա  
աղեաց Մօր և արտասուաց ։ Քեռն սի-  
րայնոյ ,”— լ ացին . մինչ անդամ և  
զհայրապետն և զատեան նորա յողը և  
յողորմ շարժեցին :

**Ը մ ։** “ Ո՞ի լար Տիկին , Աստուած  
ողորմած է՝ մինչև տեսսուք : ”

**Տ ի ն .** “ Հանդերձի Արքայ այսօր  
իսկ ելանել ՚ի Դուտականն աւան՝ յիւր  
սիրական զօրանիստ . փութա աղաչեմ,  
եթէ կարեոր ինչ համոզել զնա առ ՚ի  
դարձ դստեր մերում : ”

**Ը մ ։** “ Համոզ և քարոզ ժողովր-  
դեան կարգեցաք , Տիկին . բայց նա՝  
Վաչագան է , Արքայ Ազուանից . այր  
Հեղ բայց և սէգ . անփոփոխ ՚ի խոր-  
հրդոց իւրոց : ”

**Տ ի ն .** “ Ո՞չ Տէր , տակաւին ծնող է

նա , որպէս և ես . և կիրք և կարեք  
մարդկայինք են նորա : ”

**Յ**անդիման արձանացաւ յայնժամ  
Պարան էրէց Հայրապետանոցին՝ Արսէն  
անուն . և գլուխ խոնարհեցուցանելով  
սպատկառելի Ատենին՝ ասաց . — “ Ի  
զնը աշխատ լինե Տիկին Աղուանից , —  
զի Հասարակութիւն ժողովրդեանն , որ  
գործ պարզ լնթեռնու զխորհուրդս Խա-  
զաւորին ’ի դէմս նորա՝ քան ես զՄԵս-  
րովքեան նշանագիրս ’ի Մաշտոցին , Հա-  
զոր կարծեաց ՚ի բիւրս ելանէ լնդ ա-  
րարս Արքայի : — Ոմն առէ : “ Թէ որով-  
հետե ՚ինորոյ արժանացաւ Վաչագան  
գտանել զԵւշարս Արքոյն Գրիգորի-  
սի թոռին Գրիգորի Լուսաւորչին՝  
կամեցաւ , զի որպէս նա զչարչարանս  
յանձն էառ վասն Անակայ հօր իւրոյ ,  
նոյնպէս և ինքն մատուցէ զգուստ-  
ըն նուեր Աստուծոյ վասն ուրացու-  
թեան Վաչէի հօր իւրոյ՝ յաւուրս  
Քաղկերտի . թէպէտ նա ինքնին վաղ

զղջացաւ զմեղս իւր , և պատերազմաւ  
 նկունարարեալ զՊիւրող , կամաւ ընտ-  
 րեաց զԱւետարան աղքատութեամբ .  
 Քան զՅաագաւորութիւնն ուրացութք  
 և կռուովլ :” — ԱՅԼ ո՞մն ասէ , “թէ ան-  
 հնարին գոլով Վ աչագանայ առնուլ  
 զձեռաց դստերն և տալ կարօտ Կորդ-  
 ուացւոյ ուրուք ՚ի կնութիւն , կեղ-  
 ծաւորաբար եեթ այնպէս արար . և  
 հաւանական է , թէ իրօք առաքեալ  
 իցէ զնա ՚ի կնութիւն Խոսրովու Պար-  
 սից Արքայի :” Կէսք ասեն . “թէ գու-  
 ցէ ծածուկ արատ ինչ եդիտ ՚ի գուստ-  
 ըն իւր , և նոյնպէս կորոյս . զի մի ա-  
 մօթ լիցի արքունական տան իւրում :” —  
 Խոկ միւս կէսք՝ “թէ ՚ի պատճառս Աա-  
 մուելի Աահառունւոյ , որ ամուսնա-  
 նալ ջանայր ընդ դստերն , բայց սըր-  
 տիւք հակեալ էր ՚ի կողմն Պարսից՝  
 այնպէս արար Արքայ . զի մի Հրաբոտ  
 և ծովեղերք Վ րկանի ժառանգու-  
 թիւն անկանիցին նմա :—”

Շատ. “լաւէ, զի՞նչ ասենք նա և՝  
թէ յանկարծ ամբառնալ զԳեղենակ և  
զԱրզունի՝ յաւագութիւն, և այսօրի-  
նակ յանպատրաստից արձակել ըդ-  
դուստրն յիւրմէ, ոչ յայլ ինչ հայէր՝  
եթէ ոչ գեղով նորա կաշառել զՄիհ-  
րան կուսակալ Ատրպատականի՝ զի  
զօրօք յօգնութիւն ժամանեսցէ իւր՝  
ընդդէմ արդի արշաւանացն Ափա-  
զաց :”

“Եւ դժւ զայդ, Հոգենը Տէր .”  
ասաց ցնատ Խոնճիկ Օրիորդն Ազուա-  
նից, “և ոչ գոնէ նշանախեց մի հաւա-  
տոյ, յուսոյ, դթոյ և կարեկցութեան  
յարարս Արքայի Հօր մերում, —որց  
համբաւ բարեպաշտութեան յերկիր  
ամենայն հեջեալ և երկինք ՚ի վերուստ  
արձագանդեն : —Ուրեմն տնովին կո-  
րեաք, վայ մեզ :”

“Խրաւ Հայր սուրբ, եթէ մեծա-  
ցուցանել Արքայի Տեառն իմում,  
զԳեղենակ և զԱրզունի, զարսն՝ որք

թէալէտն աղքատք , և վասն այնորիկ  
միայն անծանօթ ՚ի ձէնջ , իցէ առիթ  
այսքան դառն խորհրդոց և ասու-  
թեանց ընդդէմ Արքայի Տեառն ի-  
մում , ուրեմն նոր յոյս միսիթարու-  
թեան վառի ՚ի սրտի իմում , թէ և ա-  
րարք նորա ընդ Ա արանեկան՝ ունիցին  
՚ի յատակին զնոր իմն և աստուածա-  
հաճոյ դիտաւորութիւն : Ա աչադան  
մարդկօրէն զբազումս ամբարձ յաղ-  
քեաց յաթոռ չնորհաց իւրոց . և ոչ  
ոք յանդգնեցաւ հարցանել ՚ի պատ-  
ճառսն . իսկ զսոսա՝ այն զի աստուածօ-  
քէն ձրի շնորհօք միայն , այսքան աս-  
ուլիսք : — Ընորհունիմարդարե զԱլր-  
բութենէ քումմէ , ” ասաց և յարեաւ  
Տիկինն՝ Խնճկան հանդերձ :

Ըստ . “ Աերեա ինձ Տիկին Աշ-  
ուանից : ”

Տիկ . “ Եթէ կարօտ ինչ իցէ Արբու-  
թիւն քո : ”

Ըստ . “ Կարօտիմ : ”

ՏԵՐՆ. “Հոգեսոր Տէր, ոչ մարմնով  
ինչ ծնար զաւակ, և ոչ զգորով և դութ  
ծնողութեան ինչ գիտես. Աստուած  
ներեսցէ քեզ:—Բայց թէ ոյք դիմենն  
առ քեզ ՚ի մխիթարութիւն բանին, և  
ինձ նման ելանեն՝ ակն ընդ երես  
կշտամբեալք վասն սնոտի կարծեաց  
և թ’ ուրեմն կանանց մնայ ներել Կա-  
թուղիկոսաց խրեանց :”

“Մ’ զայդ ասեր, Տեկին Վայր,  
արդարեւ մխիթարութիւն մեծ ընկա-  
լայ ՚ի բանից այդի դորա, զի եթէ անձն  
ոք այնքան հոյակապ և մեծ, որպիսի  
է Հոգեսոր Տէր Աղուանից, կարծեօք  
և թ’ միաբանեալ խուժանին, ապօքէն  
համարիցի զարարս Արքայի և Հօր,  
զորոյ սիրտ ՚ի ձեռին Աստուծոյ տեսաք,  
ապա ուրեմն արդար է նա, արդար է  
ծնողմեր ՚ի տալն ում և կամէր զդուստու-  
թըն, և ՚ի պահելն՝ որպէս և կամէր զնա:

Բարէ ծնողական հոգոց և խնամոցներ  
Եթէ միայն գործ կամաց և հաճոյից

նորա՝ զոր ոչ ոք դիտէ լուսել ստու-  
գիւ, այսքան ասուլիս ստեղծ զնմանէ՝  
որքանեաց վշտաց և նեղութեանց արա-  
րիչք ոչ լինէին ասլաքէն և հանապա-  
զորդեան գորովանք նորա : Արդար է  
Արքայ, Արդար է Հայր իմ .—և ես  
նախանձիմ Վարսենակայ քեռ իմում .  
զի համբաւոյս այսորիկ՝ լիցի որպէս  
և համարիցի աշխարհ և հոգեւոր Տէր  
Եղուանից, նախառարկայ և արարող  
հանդիսացաւ ,”

**Ըստ.** “Աստուած տեսցէ Պատրիկ :

**Խաչի.** “Օ խորհուրդ Ճնողին ՚ի ըա-  
րիս զաւակաց իւրոց ։ զոր հոգեւոր Տէ-  
րութիւն ձեր տեսանել ոչ կարէ :

**Ըստ.** “Ամէն՝ այդպէս եղիցի՝ որ-  
դեակ :

**Տէին.** “Այդպէս խկէ Հոգեւոր Տէր,  
այդպէս խկէ :

**Աստանօր** տիրապէս զամօթի հա-  
րեալ կարմրացաւ Կաթուղիկոսն, դալ-  
կացաւ, դեղնեցաւ, պարզեցաւ, զղա-

ցաւ ՚ի վերայ անխոհեմ խօսից իւրոց,  
և գլուխ կորացուցեալ առաջի բարե-  
պաշտօն Բարձրութեան ՚Աղցա՝ կապե-  
ցաւ կարկամեցաւ և կասեցաւ ՚ի խօ-  
սիցն. մինչ ելին նոքա և հետեւեցան  
Արքայի դէպ յաւանն Պուտական :  
Եւ ատեանն արձակեցաւ ՚ի նմանէ  
խորին լոռութեամբ :

Բարեկամութիւն աճի ՚ի էպիզոդն :

Շեկնի՞ս մի ով մարդ յունայնութիւն քոյ ,  
Դու ապականեալ զանգուած ամօթոյ ,  
Որ մտօք խարդախ , բանիւք՝ խարդաւան ,  
Բարեկամութիւնդ է բառ աննշան :

Գեղենսկ և Արզունի , թէպէտ և  
յանակնկալ կոչեցեալ ՚ի ստորին վե-  
ճակէ իւրեանց ՚ի բարձրագոյն աստի-  
ճան աւագութեան՝ այլ զի էին արք  
իւստարեալք և խոհականք՝ լստ իւրա-  
քանչիւր կոչմանցն՝ ոչ իսկ և իսկ մե-  
ծամուեալ հպարտացան . այլ լնդ ա-  
մենեցուն դրեթէ ամենայն եղեալ՝ ա-  
նուշակ կենցաղավարութեամբ զընկե-  
րըս և զանձինս իւրեանց փոփոխ միսի-  
թարէին : Արզունի աշխոյժ և զուարթ  
որպէս էր յերեկն և յեռանդն , պա-  
տահեալ Վեղենակայ՝ ասաց . “Տէր  
խոստովանահայր , թուի թէ քաղցն  
այլ ևս ոչ նեղէ զքեղ :

Գեղ . “ ’Ե շնորհս Աստուծոյ և

Արքայի՛ ոչ բնաւ . սակայն և այնպէս՝  
առաւել քան քաղց աղքատութեանս՝  
նեղեն ինձ մտածուիք զԳուրգենայ :  
Խեղճ մեր գոհ եղբայր , զիարդ ար-  
դեօք անցուցանէ զաւուրս կրկին  
բերանօք և կրկնակի աքսորանօքն  
յանձանօթ օտարութեան : ”

Առ “Գեղենակ , այժմ իմացայ , զի  
յագեաւ է որովայն քոյ . ապա թէ ոչ  
գու Հօր Հոգւոյ ոչ յիշէիր զեղբայր  
մեր , զվեճակակից թշուառութեանցա  
Գուրգէն , որ ոչ զայս կամեցաւ և ոչ  
զայն՝ այլ միայն զպատիժ պատուհաս  
իւր՝ զգուստըն Արքայի՛ ՚ի կնութիւն :

Գռ “Խրաւ Արզունի՛ , երազ իմն  
թուին ինձ արարք Արքայի՛ ՚ի տաւ  
նմա այսօրինակ զգուստըն իւր Գուր-  
դենայ , որ չունէր գէթ զաւուրն  
պարէն : ”

Առ “Մակաւ առ սակաւ յամբար-  
տաւանութիւն ելանես , Գեղենակ . ըս-  
քանչելիք համարել զպարգևն Արքայի՛

առ Գյուրդէն, և ոչ զայնս՝ զորս քեզ  
ինքեան և ինձ շնորհեաց Արքայի”

Գեւ “Թշուի թէ ցնդեալ իցէ Ար-  
քայ :”

Ար “Հաղմը անգամ . որ զքո պէս  
այր ապերախտ յայդ աստիճան բարձ-  
րացոց :”

Գեւ “Օ իարդ լերդածամիշան :”

Ար “Ոյնու, զի զոր առքեզ բա-  
րութիւն թողեալ՝ սքանչանաս ՚ի վե-  
րայ բարեաց Արքայի առ Գյուրդ էն :  
Երախտագէտ լեռ գու ձրի շնորհաց  
նորա՝ եթէ այր իցես . և զաշխարհ ա-  
զատեա ՚ի տարապարտ զարմանաց՝ ընդ  
ընտրութիւն Արքայի :”

Գեւ “Օ իարդ Արզունի , իւ կա-  
րիցեմերախտագէտ լինիլ այսքան մեծ  
և անակնկալ շնորհաց :”

Ար “Օ այն առնելով նմա՝ զոր  
ինչ և նա քեզ :”

Գեւ “Արքայ անկարօտ է ինձ :”

Ար “Արդար է . բայց գուստը և

փեսայ նորա կարօտին քեղ :

**Գրւ** “Աւզիղես, Արզունի : բայց  
մոր արդեօք կարասցուք դտանել զնո-  
սա՝ և բարիս առնել . այնինչ անցեալ  
են նոքա լնդ սահման Տէրութեանս  
Աղուանից :”

**Արւ** “Դու կամ ես, Գեղենակ,  
սահմանօք Տէրութեան Աղուանից ար-  
ժանացաք շնորհաց Թագաւորին :”

**Գրւ** “Ոչ :

**Արւ** “Աւրեմն եթէ արտաքոյ սահ-  
մանի լնկալաք զայս շնորհ, Էր ապա և  
արտաքոյ սահմանի փոխարինել չփու-  
թասցուք :”

**Գրւ** “Արդար ես . բայց ես առա-  
ւելապէս ցաւիմ լնդ վիճակ Ա ար-  
ժենկան . — Ենչ պարկեշտ և հնազանդ  
Օրիորդ էր :”—

**Արւ** “Կեղծաւոր ես :”

**Գրւ** “Որպէս :”

**Արւ** “Այնպէս, զի մի անդամնեթ  
տեսեալ զԱ արսենիկ ցաւիս լնդ վե-

Ճակ նորա , և յայտքան ամաց Հետէ  
կենցաղակից Գռուրդենայ՝ մոռանառըզ  
նա . որ յաւէտ տեղիք ունի գթոյ և  
կարեկցութեան քո : ”

Պետ . “Իս աղքատ ծնեալ և սնաւ .  
վասնորոյ կարէ տանել ամենայն վշտաց՝  
կարօտութեան և չքաւորութեան : ”

Առ . “Այնքան և դու տնագարոյն  
և անողորմ գտանիս , որ եթէ կարող՝  
չկամիցիս փարատել ՚ի նմանէ զվեշտ  
դոյնպիսի : — Եւ զարմանք յիրաւի ,  
զի միշտ դոյնպէս ստանան և տան խոս-  
տովանահարք զփոխարէն պարտեաց իւ-  
րեանց : Պարտական եմք ընկերին , Պե-  
ղենակ . և այս պարտականութիւն կըր-  
կին ծանրանայ մեզ , յորժամ գտանեմք  
զնա միացեալ ընդ Արքայի ամուսնու-  
թեամբ և արեամբ : Առ զայս յինէն ,—  
իսկոյն այրուձի կտղմեա , և ուր և իցէ  
Գռուրդէն՝ որոնեա , գիտ և յանձ-  
նեա , յիշելով նմա զհինաւուրց բա-  
րեկամ իւր զԱրզունի . զի Արքայ հը

բամայեաց ինձ անցանել զօրօք ընդ  
Առւր գետ, և զդէմունիլ յարձակմանց  
ամեհեացն Ափղազաց : ”

Գրէւ “Առաքեցից իսկոյն . — բայց  
քանի լեռը ք լ եղկեաց կարիցեն յա-  
դեցուցանել զքեզ, Արզունիդ : ”

Արւ “Բովանդակ բանակին՝ հազեւ,  
այլ զԳրութէն մի՛ մոռանար : ”

Գրէւ “Հաջողութիւն մատանց բոց : ”

Արւ “Հաջողութիւն և մտաց քոց, —  
Բարիոք խոստովանեցն զարքայ . —  
մնաս բարեաւ . ” ասաց և ել դնաց ՚ի  
Ճանապարհ, զՃակատ հարկանել արշա-  
ւանաց թշնամեացն :

ԴԱՌԻ Ե :

Կորեկտութիւն կը օնից ծնողն է :

Ը թթք Աստուածային մաքուր արտասուաց  
Առ հ յաղիտից մահացուաց շարժեալ ,  
Յահ երկնաւորաց , յափշութիւն մարդկան ,  
Կայլակ առ կայլակ ձնշեցայք ՚ի վայր :

Թառնգ . Թառիւթեանց :

ԽՕՍՏՈՒՄ Խուժանն՝ որքան և կամք  
իցեն . բայց Վ աչագան արքայ հաւա-  
տայր յԱստուած , և մատուցանէր  
զգուստըն իւր ՚ի փառս անուան նորա .  
թէպէտ ո՞չ առանց ծնողական գորովոյ :  
Հաւատայր Վ արսենիկ յԱստուած ,  
և սիրէր զնա ՚ի վեր քան զամենայն ինչ  
երկնաւոր և երկրաւոր . սակայն ո՞չ  
առանց որդիական հնազանդութեան և  
խանդաղատանաց : Օ աւուրս երիս  
Ճգեցաւ մտածութիւն յԱրքայի . բայց  
ով կարէ ասել , թէ առանց աղօթից և  
պաղատանաց յաթոռ յաւիտենական  
շնորհաց : — Պ նդ լուր բանին հնազան-

դութեամբ յանձն էառ զպատուէր  
Թագաւորին Ա արսենիկ , բայց ովլ  
կարէ ասել , թէ առանց անդրդիւն  
ապահովութեան յողորմութիւն յա-  
ւիտենական Բարւոյն :

Հրաման արար Արքայ՝ զի գիտէր  
թէ ումՀրամայէր , և վասն ոյր . Հնա-  
զանդեցաւ Ա արսենիկ՝ զի գիտէր թէ  
ումՀնազանդէր , և վասն ոյր : — Բայց  
և այսու ամենայնիւ ոչ Թագաւորին  
կարաց ժուժել բաժանմանն , և ոչ  
դուստրն գովական : Յերկինս ՚ի վեր  
ամբարձ Արքայ զաշ իւր , և կայլա-  
կունք արտասուաց մարդարտահատ  
գլորեցան ընդ քաջաթուխ փառս երե-  
սաց նորա : Յերկիր ՚ի խոնարհ ակն-  
կորեաց Ա արսենիկ , և զՃնկօք փա-  
րելով ծնալի իւրոյ՝ “ մնաս բարեաւ ,  
ասաց , Հայր՝ մնաս բարեաւ , աթոռ քո  
յարենու հարցէ Բարձրեալն Ամենակար ,  
և յորժամ զմտաւ ածել ախորժիցիս  
այսուհետեւ զԱ արսենիկ , հայեաց

յերես լուսեղինին խնձկան քեռ ի-  
մում, և ՚ի նմանէ հանջնը զանձուկ  
կարօտանաց իմոց :—”

Աւագ. “Գնան բարեաւ դստրիկ.” ա-  
սաց Արքայ և փղձկեցաւ: “Եւ բարձ-  
րեան Ամենակալ լիցն ընդունող և  
առաջնորդ քո ՚ի բարին. որպէս զի փա-  
ռաւորեսցի ՚ի մէջ մարդկան Հայրու-  
թիւն նորա՝ քան իմոյ մեղաւորիս :”

Վ. “Օ որս իմեն, քեզ յանձն  
առնեմ, Հայր արքայ :”

Աւ. “Եւ զորս իմէք, ես Աստու-  
ծոյ յանձն առնեմ, դստրիկ :”—

Օ այս ասացեալ ակնարկի տրաք  
Գուրգենայ հուպ մատչել, կալաւ  
զաջոյ չքնաղին և յաջեդ դողդոջիւն  
նորա. — լուռ և եթ հայեցաւ զկնի  
հետոց նոցա, յորժամվարիչք արքու-  
նականք առեալ ՚ի բաց վարէին զնոսա ՚ի  
սահմանաց Տէրութեան իւրոյ :

Լ ուռ և եթ ընթանային զՃանապարհ  
իւրեանց ՚ի Պարտաւայ դէպ ուղիղ ընդ

յարեելս՝ յորժամ ՚ի մօտակայո Ա-  
ւետարանոց անուանեալ գեղջ , նշմո-  
րեալ Գուրգենայ քիրտն աշխատանաց  
՚ի լուսափոյլ և յանպղտոր ճակատուն՝  
սրբեաց համբուրիւ , և յամօթոյ ակն-  
կորեալ՝ ասաց . “Բարէ շնորհաց Ար-  
քոյի Հօր քոյ՝ սիրելին իմ Ա ար-  
սենիկ , որ ետ ինձ զքեզ . և բարէ որ-  
դիապարտ հնազանդութեան քո , որով  
հաճկատար նմին , և ինձ վիճակից  
և ոշտակից հանդիսացար : — ”

Ա առա . “Գուրգեն իմ , մի այդքան  
շատ զարմանար . տեսանես զառաջետու  
զգիւղգ , — Աւետարանոց կոչի դա : —  
ԱՌ — յիշատակն արգարոց օրհնու-  
թեամբ եղիցի : Ա աչէ Հայր Ա աչա-  
գանայ Հօր իմոյ , որ յաւէտ վասն  
փրկութեան ժողովրդեան Ազուանից՝  
քան անձնական բարձու և պատուոյ  
զամս ինչ ուրացութեամբ զիջաւ ՚ի կամն  
մոխրապաշտին Յազկերտի , — և ասկա  
եկեալ այտը , և պէսպէս պատերազմօք

Խորտակեաց զՃակատ նորա և զՊերողի  
որդւոյ նորա, աստ զաւետարանն ՚ի գերգ  
առեալ և հրաժարէր մեկուսանայր յաշ-  
խարհնէ, յորժամ զիջաւ ամբարիշտն  
՚ի չարեաց իւրոց, աղաչեաց զնա կալ  
մնալ յաթու թագաւորութեան իւրոյ,  
և զաշխարհն շէն պահել : — Ուստի և  
նա ՚ի պատիւ Աւետարանին Եկեղեցի  
կառուցեալ ասա՝ Աւետարանոց անուն  
կարդաց սմին . խել ես —

Գառաք. “Այս դու՝ Վարսենիկ իմ,  
այս դու, որ յարմատոյ հարցն Արքոց  
ինձ շառաւիղ ծաղկեցար : ”

Վառաք. “Եւ ՚ի քեզ արդ պատուաս-  
տեցայ՝ Գառաքէն իմ, և ՚ի քեզ արդ  
պատուաստեցայ. Թերես բերից պտուղս  
արժանի ապաշխարութեան : ”

Գառաք. “Յօրժամ քո նման շառա-  
ւիղ ծառոյն կենաց տնկի ՚ի փշարեր  
աշխարհի՝ փուշք անիծիցն ՚ի ծաղկունա  
օրհնութեան փոխին, և տատակը յան-  
ցանաց ՚ի քաւութիւն մեղաց՝ Արեամբ

Խաչի կենարարին . ուստի և յապայն  
աշխարհելոյ ինչ չմնայ մեղ :

**Ա**ռաջ . “Երանիթէ գուրզէն իմ , —  
բայց ահիւ և գողութեամբ միայն : ”

**Գ**րագու . “Արդարե սիրելին իմ , —  
բայց տես որքան տարապարտ աշխատ  
լինիս ՚ի սակա անարդի միոջ , ” — Քան-  
զի գեռ Ա արսենիկ զանձամբ անթերի  
ունէր զառաւօտեան ժամոյն տարագ .  
այսինքն կարմիր մով շապիկ ասղնէգործ  
փորանկեալ վերուստ ՚ի վայր՝ ոսկեթել  
գոգով . որոյ ՚ի ներքուստ հազիւ թէ  
երեկին փողք սոնապանաց ցկոճս կըլն-  
կանցն , թուխ ժապաւէն երից մատանց  
լայնութեամբ ՚ի վերայ կարեալ շուրջ  
դքզանցօքն : Խայտաճամուկ շերա-  
մագործ բաճկոնին՝ հազիւ թէ ծերպ  
ինչ դրօշակին երեկիր , բամբակալից  
պատրուքաշար աստառած . որ ընդ  
առաջնաբաց սարասուն՝ ցծունկս նո-  
րա հազիւ իջանէր : ’Ե վերայ նորուն՝  
միթան կամ թակալ , ոյն է պատմու-

Ճան՝ երկնաւոր կապուտակ գունով՝  
 նոյնալէս փորաբաց ձեռով, որ յերից  
 կողմանց ընդգրկեալ՝ զանձն նոճենի՝  
 յառաջուստ միայն փեղկ ՚ի փեղկս դրօ-  
 շակաց հարկանէր. և յընթանալ իւ-  
 րում՝ յանկարծ էր՝ որ զմի կամ զմիւս  
 ՚ի պայծառ ներքնասարուցն ցուցանէր.  
 և էր՝ զի զյետ ծալուած աստառ իւր  
 հրաշէկ և զդեղին շուրջ կոպած և  
 շուլած: Յուլանց ՚ի խոնարհ՝ ընդ  
 կուրծսն ցկամբար՝ ողջոյն կոճակած:  
 Գառտի խնձորակապ զմիջով իւրով. որոյ  
 ծայրք փունջ ՚ի փունջ և ծոպ ՚ի ծոպ  
 առկախէին ցորունան: Թեզանքն նեղ,  
 և բազան ճարմանդաւոր զնովաւ: —  
 ՚Ի վերայ միթանին կամ պատմուճանին  
 անթանոց կիսաթև բագսաստ ծիրա-  
 նի, սամոյը ՚ի մէջն աստառած, և ըստ  
 եզրս քղանցեցն յետ վարած: Խոյը ՚ի  
 մորթոյ նորածին գառանց ՚ի գլուխ իւ-  
 րում՝ ապարօշականակուռ ՚ի վերայ.  
 և ՚ի վերուստ շղարչ նրբաթել՝ սպիտակ

դունով՝ քօղանման, կիտուած առ կիւ-  
 տուած ստորիջեալ՝ յանդիման նկա-  
 րէին զԱ արսենիկ իրրե Աերովք սիւ-  
 րայորդոր, որ ՚ի միջոյ պայծառ արփւոյն  
 ամալաթաթախ իջանից ՚ի խոնարհ պա-  
 զատանս քաջին կամ քերդողին՝ որ ՚ի  
 սէր : Բայց մի ակնուներ դու, որ լզ  
 մարմին առաւել գոլ լնթերցայ քան  
 զհանդերձ, թէ նստեալ անզբաղ յան-  
 դիման նկարիցեմ զամնայն սիրունուն-  
 երեսաց սքանչելոյն : — Այդ ոչ կա-  
 րեմ ես . նախ՝ զի կարեռ չէ փծոն գր-  
 չիս աստուածարուեստ ճարտարուն ա-  
 րարչութեանն հուպ մատչել . և երկ-  
 րորդ՝ զի կըկին անդամ յաշխարհ մը-  
 տեալ՝ սոսկամ ՚ի կին մարդ օտարին  
 հայել : Բայց և հոգի առաւել է քան  
 զմարմին . և եթէ կարէի մի առ մի թու-  
 ել աստանօր զհոգւոյ հրաշակերտին  
 զմեծամեծ առաքինութիւնս հաւա-  
 տոյ՝ յուսոյ և սիրոյ նորա , վերանայր  
 պափակ և սէր յամենայն սրտից մարդ-

կան, և 'ի նա միայն դիմեր իրը եւ զխանդումանդ ՚ի սեպհական իւր բեեռ :

**Խոկ Գուրգեն** բա՛ . զԵ փոյթ թէ յլնչից զուրկ էր , և զգեստք պատառատունք շուրջ զիւրեւ . դեռ ևս ունէր զայն ամենայն կատարելութիւնս մտաց և մարմնոյ՝ լնդ որս հայել անգամ ամաչէր աշխարհ : **Օ ի սկայ անձնեայ էր նա,** գեղապատշաճ անդամօք , հաստաթիկունք և լայնակուրծ , յորում խորհուրդք բարեպաշտութեան և անպարապ դործունէութիւնք հանձարոյ ելեելս առնէին : **Ա ե հութիւն իմն խառն լնդ խոնարհութեան երեէր միշտ ՚ի դէմս նորա . քաջ ՚ի սիրտ , և ամոք միշտ ՚ի բանս իւր :** **Օ գենոյր սա զտարազ Աղուանից . չուխայ կարձիկ ցծոնկս իւր՝ ՚ի վզէն լնդ կուրծն ՚ի վոյր մինչեւ ցգօտի պինդ կոճակիալ , որ 'ի յետուստ կողմանէ ՚ի գօտւոյ 'ի վայր փոթ ՚ի փոթս կիտուածէր , առաջն բաց : **Ե ներքոյ պատմուճան կարճ և ՚ի ներ-****

Քոյ նորա բաձկոն կարձագոյն, - - բայց  
 զեռ և վնոսա յլնթանալն զձանապարհ  
 ուրեք՝ հաւաքէր յանդրավարտիս,  
 առնապան ՚ի կոճիցն մինչև ՚ի ծունկան  
 ընդ մէջ հաւաքէր դիողիս նորա, և փա-  
 թեթ իմն կամ փաթաւայ շերամագործ  
 դոր քոյր իւր ՚նիւթեալ էր ինքեան  
 իւրուլ իսկ ձեռամբ, ՚ի վերայ տու-  
 եալ սրունիցն՝ ոչ միայն կազմ և պատ-  
 րաստ կացուցանէր զսկայ մեր յլնթանալ  
 իւրում, այլ և ջերմ և կազդոյր պա-  
 հէր զանձն յաշխատանաց ճանապար-  
 հին; Գուտակին՝ մորթ ոչխարենի, մա-  
 քուր՝ այլ ոչ մեծագին : Յուպ մի-  
 այն ՚ի ձեռին իւրում, և անկոթ շեղը  
 դանակին ՚ի մէջ երկուց շերտից փոյ-  
 տի եղեալ և կապեալ ՚ի գրանի ցըն-  
 ցուտոյն : Այսոքիկ անձն և գոյք  
 Գուրգենայ, և միայն նորա սիրտ լի  
 և վաեմ՝ որ ոչ զայս կամեցաւ ոչ  
 զայն, եթէ ոչ զԱ արսենիկ միայն :

ԳԼՈՒԽ Ը.

Կայ առշխառհնի՝ ու չիայ առնապարի :

ՄԵՆ արքունիք Հայոց են՝ ՏԵ՛Ր,

Որ ըորբոքեալ ՚ի քո սէր,

Ոչ փափկութիւն մարմնոյ կամին,

Ոչ զգեստուց շողշողել :

ԱՅԼ ԽԹՀԱԿԻՔ ՀԵԹՈԾ ՔՈՍՈԳ

Խարազնազգեաց զտն ՚ի փորձ :

Մարմնաշար Հզամբ զոզե

Հընազանդել կամաց քոց :

Հայեաց յայս Կոյս ոսկեղինիկ :

ՑԱՂՈՒԱՆԱԿԱՆ Վարսենիկ .

Եւ յիս գըթա՝ զի ընդ նմա՝

Հաճ մատուցից զայս Հառիկ :

ՈՐ զերջանկութիւն աստի կենաց ՚ի  
Ճոխութիւնս ոսկեոյ և արծաթոյ կա-  
ցուցանէ, աքսոր Հանքափոր է նա, և  
ոսկեսիրին ԱՌԵՊԱՍՈՅ Հօր Եղբօր տը-  
զայ, որ ՚ի մեջ յղիութեան ոսկւոց սո-  
վամահ սատակեցաւ : ՈՐ զերջանկու-  
թիւն իւր ՚ի կառս և յերիվարս եր՝ ան-  
փորձ Պայեթոն է նա՝ կտմ Փարաւոն

աստուածամարտ, որ հանգերձ կառօ-  
 քըն ընկղմեցաւ ՚ի հոսանս Կարմիր ծո-  
 վուն : Որ յոյժ մարմնոյ ապաստան ,  
 և զանձն երջանիկ կարծէ , նա ցլուց  
 պարարելոց և փղոց արբելոց է բնա-  
 ւորակից : Խսկ բա դու՝ Պարո՞ն գիտնա-  
 կան , մի զունչ նիզակաչափ ՚ի վեր  
 ամբառնար , զի և դու երջանիկ ոչ ես .—  
 որ յաւելանայ ՚ի գիտութիւն , յաւե-  
 լանայ ՚ի ցաւս : Բայց եթէ զերջանիկ  
 ոք կամիցիս , արի զհետ լիցուք Վառը-  
 գենայ , որ թե ՚ի թե Վարսենկանն  
 ընթանայր զճանապարհ՝ կամաւոր աք-  
 սորանաց , և չունէր ինչ արտաքուստ  
 քան զհանդերձ պատառատուն և ըզ-  
 քաղց կենսակորոյս . սակայն յուսացեալ  
 նորա յԱստուած իւր և յաշխատու-  
 թիւն , յուղարկեալ օրհնութեամբ , և  
 ընկերեալ սիրով և բաւականութեամբ  
 իւրով , գնայր և գոհանայր զԱստու-  
 ծոյ՝ յամենայն փոփոխմունս քայլեց  
 իւրոց : Ակնարկէր ՚ի Վարսենիկ ան-

կերպարան իմն խանդաղատանօք , զոր  
ձեռք մահկանացուաց , և արծարծուն  
գոյնք երանդաց երկրաւորաց կերպա-  
րանել ոչ իշխեն :

Խբրե դարձան դահիճքն՝ արտաքոյ  
սահմանացն Աղուանից հանեալ զզոյգն  
երջանիկ , սկսաւ յայնժամ Գուրգէն  
ըստ Կախահօրն ՚ի Պարախտին փափ-  
կութեան՝ ունել զաջոյ չքնաղին , և  
այսպէս առարկել ցնա :

“ Եւ այսպէս թողժուս զամենայն ,  
Աէր իմ , հազորդիլ խոնարհ վեճակի  
կացութեան իմում : ”

Վ . “ Մե այլ ես ինչ յայդցանէ ,  
Աիրելիդ իմ , — յորժամ Աստուած  
և Արքայ հայր իմ այսպէս կամեցան ,  
և ինձ հաճ և հաւանելի է : ”

Գուրգ . “ Բարէ դթած ես՝ Վ արսե-  
նիկ , դթած . և ես փառս տամ ամե-  
նափառաւորին Աստուծոյ՝ որ շնորհեաց  
ինձ զքեղ : ”

Վ . “ Օ որմիանդամ թողի Գուր-

գէն, զտուն՝ զտէթութիւն՝ զըրաքու  
և զայլս, այնքան յաշս չգան, որքան  
“(Օնողք և սիրելին իմ խնձիկ,”

**Գ**րաբ. “Եւ այդ ամենայն վասն իմ,  
Ա արսենիկ, — Տէր ամենակալ ինք-  
նին լիցի քեզ փոխանակ նոցա :”

**Ա**շու. “Եմ՝ և դու ինձ համար  
Գուրգէն :”

**Գ**րաբ. “Եթէ ապրուստ իմ լիցի առ  
ի միսիթարութիւն քոյ՝ այս :” **Օ** այս  
ասացեալ՝ հայեցաւ ի ցնցոտիս իւր,  
և ի չքաւորութիւն ձեռինն, ի խորոց  
սրտին յոգւոց ե հան, ամբարձ զաչս  
իւր գէպ յերկինս ի վեր, — շիթ իմն  
արտասուաց ի վայր ցօղեցաւ յաշաց  
նորա . — հուպ մատեաւ առ **Ա** ար-  
սենիկ, գըոշմաց վերստին համբոյք  
իւր յոյտս վարդենիս նորա . և գո-  
չեաց ի ձայն բարձը, “(Օ)րն տարաժա-  
մալ է, և տեղիս անտապատ . ուր հան-  
գուսցուք զաւուրն վաստակ, ուր :”

**Ա**շու. “Ուր և լցէ, ի ներբռյ երկ-

նից , լնդ հովանեւաւ ամենակալ Ա-  
րարէի և բարերար Փրկչին մերոյ . հո-  
գաս լնդէր Գրուրդէն ։”

Գրուրդ . “Արդարեւ գթած ես Վար-  
սենիկ իմ , և գեղեցիկ որքան և կաս՝  
գթութեամբ բիւր անդամաւելի գե-  
ղեցկանաս ինձ ։”

Վարդ . “Օտար իմն չէ դստեր Վա-  
չագանայ՝ Գրուրդէն իմ , օտարոտի  
իմն չէ աշխարհ և անձկութիւն սորա ։”

Գրուրդ , “Պտուղ պտուղ քրտնիս  
Վէր՝ և ճգնութիւն քոյ Ճնշէ զիս լնդ  
Հոգովը տառապանաց , առաւել բան  
զաշխարհ և անձկութիւն իւր ։”

Վարդ . “Ո՞չ հաւատաս ինձ , Գրուր-  
դէն , ուրեմն եկ և տես ։” Օտյո ա-  
սացեալ խոտորեցաւ յուղւոյ անտի ’ի  
ծառատակ մացառախիտ , ’ի բաց մեր-  
կացաւ յանձնէ զամենայն վերնահա-  
գուստ շքոյն , և ահա խարազն ինչ  
խոշոր , զորպիսի Գրուրդէն չէր զգե-  
ցեալ ’ի կեանս իւր՝ երեւեցաւ ’ի ներ-

Քուստ . և յափշութիւն կըթեաց  
զնա : — “Մէ այդքան Գուրգէն , մի  
այդքան զարմանար յիս , ծնեալ որ-  
պէս և եմն ՚ի փափկութեան արքու-  
նեաց , տակաւին կիրթ ունիմ զանձն  
առ ամենայն տեսակս կոշտութեան կե-  
նաց : Առ զգոսին արդ , և ծրարեա  
յայլոց պէտս : Այսուհետեւ վիճա-  
կիս համեմատ հագանել պարտ է : ”

Գառք. “Ինձ պարտ էր քեզ հաւա-  
սար հասանել , և դու զարդիս ինձ  
հաւասար զիջանիս ։ ”

Առաջ. “Քեզ ինձ հաւասար առնել  
մեծ բան չէր առաջի Արքայի Հօր ի-  
մոյ : Հրաքոտ ինքնին արքայութիւն  
մի էր բաւական ինձ և քեզ բայց այնզի  
յԱստուած յուսացաք ես և դու , և  
Արքայ ՚ի դոյն հաւատաց ամենայն  
հոգւով և ճշմարտութեամբ , ջանաս-  
ցուք ապաքէն դովին և եթ մեծանալ : ”

Գառք. “Աստութով և աշխատու-  
թեամբ : ”

**Ա**ւազ. “**Այս**” —

**Այս** օրինակ սնոյշ փոխարինութեաց գրուցաց իջին ՚ի ձոր ինչ առ ոտամբ Աաւալան լերին՝ որ հայէր յԱտրպատականն , և պատահեալ խոռոչաւոր քարատակի՝ ուստի վտակէր քարակ բոլորակ աղբիւր , խորհեցան օթել անդ զգիշերն—Բուռն եհար իսկոյն Գուր գէն մաքրել զխոշորութիւն քարանց խառն զմիմեամբք կուտակելոց աստ և անդ . թաղտ քարակոյտ յարդարել , և հող քանդել ՚ի վերայ տալ՝ որպէս թէ առագաստ ինչ պատրաստիցէ նորապսակ հարսին իւրոյ , Ա արսենիկ ՚ի բաց եգեալ զնազումն տիկնութեան զքղանցս հանդերձին ՚ի գօտի ծաւեց , և սկսաւ բռնալիր քաղել ինքեան զձարիոտ և բռնճ ցամաքեալ յիւր յանկողին փափկութեան : Եւ արդարեւ եթէ զանազանութիւն գիւտին ոչ եցէ , ես զայս տեսակ հեշտութիւն աւելի բնական , առողջարար , և

վայելու համարէի՝ քան զփառս ջայլեմանց և զփետուր ստգալանջաց :

**Հ**այեցեալ Գրութգենայ լնդ մուտս  
արեգական , նշմարեաց ՚ի հեռուստ  
զերամս յերամս հաւուց վայրենեաց,  
որ թուուցեալ զօղային ՚ի ծերպս և ՚ի  
ծոցս մերձակայ անձաւոցն . փութացաւ  
նախս անդը , և քննեաց զտեղին ՚ի վը-  
տանդից՝ մինչ դեռ լնդ աղօտ նշո-  
ղէին վերջաւոր շողք խոնարհեալ ա-  
րեգականն : Դարձ արար և տեսանէ  
զի արսենիկ , զի զկոճ և զկտրօն լնդ  
խշուր և փշուրս փայտից հաւաքեալ՝  
կուտակեալ էր առլնթեր . և գայլա-  
խազ ՚ի ձեռին՝ հրահանաւ հարկանէր  
հուր լուցանել առ ՚ի լոյս և ՚ի ջե-  
ռոյթ : Խորին զարմացմամբ լցաւ սիրտ  
նորա լնդ այս գաղտնի համակրուի և  
համեմատ գործակցուի իւր և Ա ար-  
սենկան . զի ինքն առանց ինչ յայտ-  
նելոյ նմա գնացեալ էր յայր անդը՝  
զննել զդիշերային որսորդութիւն հա-

ւուցն՝ առանց վարմի և դամի, և սա  
արդէն իսկ զառտնին կարեռս հան-  
դերձելոցն հոգացեալ՝ անտեղեակ խոր-  
հըդոց իւթոց : Օ արմացաւ այս, և  
հազարիցս հազար անգամ երանեաց  
զվեճակ ամուսնութեանն . եթէ այս-  
օրինակ ներդաշնակութիւնք իցեն սի-  
րոյ և փութոյ ՚ի մէջ առն և կնոջ :

**Զգեաց զձեռն ՚ի խնդիր հրահանին,**  
զի մի մատղաշ մատունք հարսին սի-  
րայնոյ ՚ի հարուածոյն կօրդասցին : “Գի-  
տեմ, ասէ, Առաքինիդ, զի լոկ որ-  
դիական հնազանդութիւն քոյ ՚ի կամն  
Հօր Առքայի, կցորդ արար զքեզ կա-  
րեաց և կենաց իմոց, բայց և դու-  
բիւրանգամ աւելի վաշխես ՚ի վերայ :

**Վ** այս . “Ոչ այդպէս, սիրելիդ իմ,  
աշխատութիւն պարգև Աստուծոյ էր  
բնութեանս, և յառաջ քան զանկումն  
նախահարց մերոց, ուր թէ և քրտամբք  
երեսաց ուտել զհաց մեր՝ ժառանգու-  
թեամբ ձգեցաք առ մեզ՝ յետ յան-

ցանացն : **Ճ**շմարիստ փառք տիկնաց են  
տնտեսութիք տանց իւրեանց : “Օ՛ռ  
լութիւն , պղերգութիւն , և անդոր-  
ծութիւն մեռելոց միայն են յատկու-  
թիւնք , և ոչ կենդանեաց : Են այս  
ստրուկք և անարդ ոմանք ՚ի կանանին ,  
որոց յանկարծ վերացեալ յաստիճան  
ինչ բարձրագոյն քան զոր յուսայինն ,  
զվաստակս առեան՝ առ ՚ի ցոյց սնափա-  
ռութեան միայն , և ՚ի նմին ունականան .  
մինչ զմահ առաւել ընտրել քան զաշ-  
խատութիւն . բայց և այնպիսիք կեն-  
դանւոյն իսկ մեռեալք են որպէս տողէ  
**Ասող մեր :**

“**Աւազ** ստորին կարգի մահացուաց ,  
Որ սւնայն ծախին ժամանակ իւրեանց .  
Ծուլութեամբ ՚ի քուն եղեալ յարթնութեան  
Եւ զոգ թէ մեռեալք ՚ի քունս անդ իւրեանց :

**Ստրուկ** ծնանին . ստրուկ մեռանին ,  
Եւ ստրկութեամբ թաղին յաւիտեան .  
Քուն և ծուլութիւն զո երբէք հանին  
Ցաղըեաց անտի յաթոռ բարձրութեան : ”

՚Եւ բանից տստի մեծապէս շոյեցաւ  
Գուրգէն, որ զԱստուած և զաշխատա-  
նլս համարէր իւր սեփհական ժառան-  
գութիւն, և գոչեաց . “Արդարեւ եր-  
ջանիթկ, զի քեզ վիճակեցայ կենակից և  
կենցաղակից :—Յորժամ երկու սիրտ  
զմի ինչ խորհել միաբանիցին, և երկու-  
ձեռք ’ի միասին գործեցեն, անխա-  
փան և Աստուած երորդ լինի նոցա՝  
երկնային յաջողութեամբ :”

Վահան. “Եւ ուր սիրտ, ձեռք և  
Աստուած համընթասցին ՚ի գործ անդր՝  
այն խոկ աշխատութիւն լինի երանա-  
րար կենաց և խաղաղաբար խղճի մտաց  
մահկանացուաց . զոր ոչ տալ կարեն, և  
ոչ բառնալ զօրեն յաջողուածք բաղ-  
տի, ճոխութիւնք գանձուց, և ա-  
հաւորութիւնք զօրաց :”

Գառագ. “Ոյս ու հաց, և սիրտ բաց ”  
Վարսենիթկ, և ես արդարեւ երջա-  
նիկ իմքեւ, հաղար երջանիկ :” Օ այս  
ասսցեալ առ ՚ի նմանէ զհրահանն, Հուր

ելոյց ՚ի խարսուկին , և մինչ Վարսե-  
 սենիկ հուպ նստեալ քորբէր զկրակն՝  
 Գռուրգէն չոր խոտ հաւաքեալ ՚ի բու-  
 ռըն՝ կեմ արար զայն բազմոլոր , և  
 յօրինեաց ՚ի սլատրոյկ բազմակղե՝ և  
 վտուեալ ՚ի ծայրէ իբրև զջահ ձկնոր-  
 սական , յառաջ խաղաց ՚ի մթան դէպ  
 ՚ի թառ և ՚ի դադարս հաւուց վայրե-  
 նեաց : Խռոչունք անսովորք լուսոյ ՚ի  
 գիշերի , զմրհուրեալք ՚ի քաց թոթլ-  
 ռացին , Գռուրգէն յանկարծ գաղեաց  
 զրյան , և ահա բազմութիւն ՚ի նոցանէ  
 ընդհարեալք ուժգնութեամբ ՚ի ծեր-  
 պլս և ՚ի ծրցս անձաւոյն՝ յատակն ՚ի  
 վայր թօթափեցան : Եւ նա անաշխատ  
 կալեալ՝ ընտրեաց իւր զսկարարու և  
 զմնեղիս ՚ի նոցանէ , և երեր զեն որս  
 առատ սիրականին : Ար այնինչ ընդու-  
 նէր և փետէր զնոսա առ ՚ի խորտիկս  
 երեկորնական ընթրեաց՝ փութացաւ  
 Գռուրգէն , և անկոթ շեղբով դանա-  
 կին հատեալ զոտ գօսացեալ գերե-

մաստին՝ արար իւր շամփուր, և ՚ի  
 ՚նմա հարեալ զորս իւր՝ խորովեաց.  
 բացին ապա զծրար պաշարոյ իւրեանց  
 յորում հաց առառու էր և չոր . ջուր  
 ցողեցին 'ի վերայ՝ զի կակղասցի :  
 Բազմեցան, կերին, յագեցան, գոհա-  
 ցան զառատ պարգևաց Երկնաւորին՝  
 որ տայ զկերակուր ձագուց ագռաւուց՝  
 ոյք կարդան առ ՚նա, և կաթոգնի փա-  
 րեցեալ զիրերօք՝ հանգեան 'ի քուն  
 քաղցրութեան :

ԳԱԼՈՒՔԻ ԹՒ :

ԱՅՆ ԻՆՉ յարուցեալ զկէս զիշերայն  
Ոսկի զիցուհին շէկ արշալուսեան ,  
Թռուուն երիվարօք լծէր զկառս իւր  
Քարոզ մեծափառ զալ Արեգական՝

ՅԱՐՈՒՑԵԱԼ ամոլբն սիրասունք՝  
լուացին զձեռս և զերեսս իւրեանց  
յական տկանսակիտ մօտակոյ աղբերնն  
որ 'ի վճիտ մակերեսոյթ իւր զգեցեալ  
գոգջիր զերկնակամարն աստեղալից՝  
Հեզիկ խոխոջէր ընդ ձորն 'ի խո-  
նարհ . որպէս թէ 'ի խորին . լոռու-  
թեան անդ համատարած գիշերայն՝  
մշտաբարբառ բերանով յօրհներգու-  
թիւն Արարողին կանխելով : Օ գա-  
ցումն ինչ անոյշ՝ բայց վսեմ, հետեա-  
բար սողոսկեալ ընդ անձինս՝ զար-  
թոյց 'ի նոսա զհոդի բարեպաշտօն  
իմն ջերմեռանդութեան : Անկան եր-  
կոքին 'ի ծունկս իւրեանց , բայց ըդ-  
միտս յերկինս 'ի վեր ամբարձեալ  
աղօթարար մատեան առ աթոռ յա-  
ւիտենական Շնորհաց . ոչ 'ի խնդիր

ապականացու բարեաց կամ փառաց  
աստեղը և աղջալի կենաց՝ այլ մա-  
նաւանդ արդարութեան և արքայու-  
թեան նորա՝ 'ի սիրտս և յոդիս արա-  
րածոց իւրոց. և զմիմեանս յանձնա-  
բարեալ շնորհաց վերսախնամ Տեսչու-  
թեանն, այն ինչ յուղի անկանել  
կամեին՝ ասէ Գրուրգէն ցԱ արսենիկ.  
“Աիրելիդ իմ, ահա ծրար զգեստուցդ.  
զոր մերկացար յերեկի, զգենուս  
դարձեալ, թէ բարձից ես : ”

Ա առա. “Խմզգեստ այս խարազնօ է,  
յարմար այժմեան վիճակի մերում.  
և զոր միանգամ մերկացին ոչ զգե-  
ցայց՝ մինչև ‘Եա՝ որ գիտէ զիա՞րդ  
զարդարել զշուշան վայրի՝ ողորմու-  
թեամբ իւրով զարդարեսցէ զհոգի  
և զմարմինս մեր : ”

Գ առա. “Ուրեմն յուս բարձից զայն  
վասն քու : ”

Ա առա. “Մէ ընաւ սիրելիդ. կինն  
Պ ովտայ միայն յետս հայեցեալ ’ի

Առղոմ, յարձան աղի քարացաւ, իսկ  
ես՝ որ զդոսին յանձնէ 'ի բաց մերկա-  
ցեալ, վերստին 'ի պէտս ինձ առ-  
նուցում ծանրաբեռնել զիմ Գուրգէն,  
քաւ լիցի : ”

Գառք. “Օ լինչ կամիս ուրեմն զի  
արարից : ”

Վարչ. “Պողեան ՚ի ծրար, և դիր  
յանքոյթ վայրի ուրեք, զի պատա-  
հեալ անցաւորաց առցեն զդոսա ՚ի  
պէտս անձանց և տանց իւրեանց : ”

Գառք. “Խսկ գու Ակը : ”

Վարչ. “Օ իս թող Աստուած Հո-  
գասցէ : ”

Գառք. “Եթէ առ ծանրութեան ինչ  
անձին ասեա՞ Ակը, այդ ինձ գրեթէ  
ոչ ինչ է .—մի լքաներ : ”

Վարչ. “Ոչ Գուրգէն իմ, —ոչ, այդ  
զգեստ անցարմար է զարդիս աստան-  
դական վիճակի մերում, մանաւանդ թէ  
և վտանգաւոր իսկ . զի ով աղքատիկ  
զմեզ և յայդ տարադ պճնեալ տե-

սանելով ոչ Համարիցի ՚ի կեղծաւորա,  
՚ի քսուս, կամ լրտեսս թշնամեաց իւ-  
բոց;—**Չէ** Գուրգէն, Թող զդոսա, զի  
ոչ եթէ անշահեկանք ինչ են մեզ, այլ  
գուցէ և վտանգաւոր կենաց անդամ  
լինեցին մը :

Գուրգենի զլուխ կակուղ էր յլն-  
գունել զբան՝ քան սիրտ նորա ըզ-  
վտանգ . զի բարեպաշտ և անվեհեր  
որքան և կայր՝ տակաւին աշխարհ  
տեսած ոք էր, և շատ չար ու բար-  
ւոյ փորձառու : **Հ**աւանեցաւ խրա-  
տուց խոր խորոտիկ սիրայնոյն, տարաւ  
զետեղեաց զծրարն յանքոյթ տեղ-  
ւոջ ուրեք, և կալեալ զաջոյ չքնա-  
զին՝ յուղի անկաւ . երբեմն երգս եր-  
գելով նմա, երբեմն վէպս և առածս  
ովատմելով, երբեմն շատ խորին մլտ-  
մուալով, և երբեմն զարմացմամբ իմն  
դոչելով, “**Բ**արէ գեղեցիկ ես **Ա** ար-  
սենիկ, բոյց դժով բիւր անդամաւե-  
լի գեղեցկանեաս ինձ , ”

**Գ**նացին . շատուքիչն Աստուած  
գիտէ . մինչեւ եկին հասին ՚ի քաղաք  
մի յաշխարհին Վարաց՝ որում անուն  
Վիանդուաթ լսէր , ըստ որում՚ի մէջ  
անկանէր երկուց երևելի գետոցն  
Թաթառուայ և Պղաթեայ , որ ՚ի  
գօտեաց լերինն Արդուաց յարևելս  
հիւսիսոյ ընթացեալ զեղանին ՚ի Ա-  
պուտակն ծովակ :

**Պ**ատճառ յանձանօթս անցանե-  
լց Գուրգենայ զԱրդուօք , զիւրոյ  
ասեմ Հոյրենեօք , և ընտրելոյ զքա-  
ղաքն Վարաց՝ որ անկանէր յարևելս  
հարաւոյ նորա՝ էր մի՝ վասն ծածկե-  
լոյ զաղքատութիւն իւր ՚ի Հոյրե-  
նակցաց խրոց . և միւս՝ վասն ՚ի  
գործ գնելոյ զաշխատութիւն իւր  
համեմատ արդեան վիճակի իւրում :

**Զ**եռքն գատարէ էին յիւաւի , այլ  
գլուխն՝ ոչ : Գիտէր զբազում ար-  
ուեստս շահեկանս , այլ բաւականու-  
թիւն չունէր ՚ի ձեռս բերելոյ իւր

դո՞նեա զգործիս նոցա :

Մտախոհ յածէր աստ և անդ , ՚ի խնդիր բնակութեան ուրեք՝ ՚ի քաղաքին . զի ոչ ախորժէր ՚ի հասարակաց պանդոկս բնակել կեաւն հանդերձ :

Արքայն տունջեան ՚ի թիկունս լերանց խոնարհեալ՝ զերեկոյն աւուր փութացուցանէր . այն ինչ անտուն և անպատսպար զոյդն աստուածասէր՝ լուան յանկարծ յընթերակոյ տանէն զՃիչ իմն տագնապողական , որ յօգնութիւն աղերսէր զունկնդիրսն . “Մեռայ , հասէք ՚ի փառս Աստուծոյ մեռայ . ”

Գուրգէն զաջոյ կալեալ Վարսենիկան՝ անդը փութացաւ , և ետես զի պառաւ զառամեալ աւուրբք՝ գո՛գ ուշաթափ անկանէր ՚ի վերայ միամայր թոռինն , որ մի միայն ճրագ էր իւր , և օձահար տապաստ յերկեր անկեալ թաւալէր ՚ի կոկծանաց անտի խայթածոց մահաբերին ; Վարսենիկ ջուք

ցուրտ ցանեալ ընդ երեսն, զարթոյց  
զնա ՚ի մեռօրինակ թմրութենէն,  
այն ինչ զաշո բայեալ և ակնար-  
կեաց առ զոյգն, աղիողորմ պա-  
ղատանօք Հծծեաց ՚ի շրթունս իւր,  
“մինուճար Ձռունիկ, մրամայր ՚ի ծը-  
նողաց զաւակ. Տանն Ձռամասայ Ճը-  
րագ օձ—օձ—օձահար մեռաւ, շիջաւ,  
վայ ինձ, և գեռ տակաւին ես ապ-  
քեցայ տեսանել զայս : Ո՞ի ճար,”—  
ասաց . և զծեռաց կալեալ Ա արսեն-  
կանն Համբուրէր, լայր և վերստին  
ու շաթափէր :

**Գ**ռուրդէն ՚ի գուճս անկեալ ե-  
րարձ զնա ՚ի գիրկս, ոլինդ շփէր  
զքներակս նորա՝ և յուսագրական  
բանիւք ամոքելով զկսկիծն, այն ինչ  
ամենահաս ներկայութիւն մուաց Ա ար  
սենկան իսկոյն տուն ետ նմա, առ-  
նուլ զպճեղ մի խստորոյ, լոսել և  
՚ի վերայ կապել խայծուածոյ մանկանն  
Յաւել նա և զիւղ առատ խառն ընդ

Խստորոյ արբուցանել մինչև յորդեալ  
քրտանցն , և զթոյն մահաբերին  
յանձնէ ՚ի բաց լուացին , ’Խշունչ և  
յուշ վերանորոգեցաւ մանուկին , ետեւ  
զնա հանին գորովոտ և մխիթարեցաւ ,  
չափեաց խոր խոշոր աչօք իւրովք  
զԱ արսենիկ և զԳրուրդէն յոտից ցը-  
գլուխ , և համբուրելով զնոսա իբրև  
զաստուածառաք և զգերմարդկային  
արարածս ինչ՝ եհեղ առաջի զերախ-  
տագիտութիւնս . իւր կրօնական իմն  
ջերմնուանդութեամբ , որ հասանէր ցա-  
ւելորդապաշտութիւնն մեծ՝ և ասաց .  
“ Խոնարհ խորոտիկ Հարսնիկ , ուստի-  
գաս ՚ի փրկութիւնն մեր : ”

**Վ**արք . “ Աստուած է փրկիչ մեր՝  
Վայր . նմա միայնոյ մատուսջեր զգու-  
հութիւն քո : ”

**Պ**ատ . “ Եւ դու և դու Պատուար .  
և քեզ իսկ շնորհակալիս բխեսցեն  
շրթունք իմ , օրհնութեամբ հանդերձ :  
Բայց ով սկայդ այդ ; — Այր քո . ”

Վարսենիկ լուռ և եթ գլուխ կո-  
րհաց ի խոնարհ։ Պառաւն հասկա-  
ցաւ ՚ի լուռթենէնորա՝ թէ Գուրգէն  
այր Վարսենկան էր։ ուստի և մե-  
ծաւ թախանձանօք ընկալաւ զնոսա  
ընդ յարկաւ իւրով։

ԳԼՈՒԽ Ժ.

Ասպրասածանօթութիւնն է առաջին վարդապետ  
Գլուխ :

Եթէ ԿԸՐՕՆ չիցէ վարուց՝  
Դէպ առ բարին ուղեցոյց,  
Զուր Ճգնին Բաղտ և Բնութիւն  
Զոկել ըզմարդն յանասնոց :

Ահելորդ Համարիմ Հասոիկ Հատիկ  
պատմել աստանօր զանուշակ Հետե-  
ւանս երկնային յաջողութ այսորիկ .  
զի երախտիք 'ի գիտութեան հան-  
գուցեալ, այնալէս Հեշտանայ՝ որպէս  
սէր յիւր վերջին բարին : — Խչքաղում  
աւուրք 'ի վերայ անցին, մինչև բո-  
լորովին ողջացաւ Հասօ 'ի վիրաց իւ-  
րոց, և եկաց ծառայ անձնատուր  
Հաճոյից և Հրամանաց Վրուրգենայ :  
Թէպէտե լուսաձագ մնձանուն նախ-  
նեաց, այլ 'ի մատաղ տիոց անտի որ-  
բացեալ յիւրոց ծնողաց, և կեղե-  
քեալ յիւրոց ժառանգութեանց՝ լնդ  
հովանեաւ հանւոյն՝ Հազիւ թէ Հայթ-

Հայթէր զպարէն կենաց . և այն՝ ապօ-  
բինաւոր միջոցօք :

**Ա**յնինչ դեռ նոր խորհէր Գրուր-  
գէն զերեւելի պաշտամանէ ինչքուռն  
հարկանել տեսանէ , զի Հասօ ելա-  
նէր ընդ առաւօտս և դառնայր ընդ  
երեկոյս միշտ ահահար և դողահար ,  
քերելով ՚ի տուն զմարիս , զմաքիս ,  
զգառինս , թէ կենդանիս և թէ սա-  
տակեալս . այլ ոչ զնովլք արծաթոյ ,  
զորս ոչ ունէր , և ոչ հմտութեամբ որ-  
ոյ , զոր ոչ գիտէր ամենեին : Իբրև  
սակաւ առ սակաւ ընտելացաւ վարուց  
և քնաւորութեան նորա՝ կոչեալ զնա  
առաջի , և եհարց . “ Հասօ , ուստի  
բերես զգառինդ : ”

**Հ**այնկոյս ՚ի լեռնէ , ուր վը-  
րանօք քնակին խաշնարածք ազգաց :

**Գ**ամառէն աճառէն նոքա զգա-  
ռինդ :

**Հ**ամառէն նոքէ :

**Գ**ամառէն նոքէ :

կամ զայլ մթեր տալ տեառն , և առ  
նուլ զիմն ։”

Հայ . “ Իմ հանւոյ գլուխն վկայ , որ  
այդպիսի ինչ ոչ լուսյ երբէք ։ ”

Գառագ . “ Օ իսրայ ուրեմն առնուան ? ”

Հայ . “ Օ իսրայ . գողանամ , կամ  
յափշտակեմ ? ”

Գառագ . “ Զէ , չէ , Հասօ . մեղք  
են քեզ այդպիսի գործք . թող գո-  
զդոսա ։ ”

Հայ . “ Մար ինչ գիտէ մեղքն  
ինչ է ։ ”

Գառագ . “ Մէ , Հասօ , մի . այն ամե-  
նայն որ հակառակ է բարերար կա-  
մաց և հրամանացն Աստուծոյ՝ մեղք  
են . և չէ պարտ առնել , ”

Հայ . “ Օ ինչ .—ոչ գողանալ , և ոչ  
քաջութեամբ կորզել , ”

Գառագ . “ Ի հարկէ ։ ”

Ընդ բանիս այսորիկ հանի նորա  
որ լուռ և եթ լսէր , ասաց ցՎուր-  
դէն , “ Արդար է . Հայք ունին զարդ-

պիսի ասութիւն ինչ . զի յորժամ՝  
ընդ ֆամասայ ելի երբեմն ՚ի մերձաւ  
կայս Որմեայ , լուայ զի ասէին թէ  
գողութիւն մեղքէ : Բայց մեք Ար  
քըս , որք զմի սոխ աւելի գիտեմք  
քան զտասն գլուխս մարդկան , զայդ  
պիսի ինչ ոչ ասեմք : Օ ի ո՞ր պարծանք  
պատանեաց մերոց , եթէ չկարողաս-  
ցին հնարս գտանել և գողանալ այն-  
պէս՝ որպէս զի մի կալանաւորեսցին .  
կամ յափշտակել այնպէս՝ որպէս զի  
ամուսին գտանիցեն : Օ ի ով բա աղ-  
ջիկ տայ այնմ՝ որ չկարիցէ բարւոք գո-  
ղանալ , կամ քաջութեամք յափշտա-  
կել :

Գառագ . “Յաւէտ չարւոք և քաշու-  
թեամք ասա ։”

Հայ . “Չար՝ ինչ—բարի՝ ինչ ,—  
Եստուած արար զմեզ , և զայդ ապ-  
րուստ ետ մեզ :”

Օ ահի հարաւ Գուրգէն , և քըս-  
տըմնեցաւ Ա արսենիկ ընդյետին տը-

գիտութիւն մտաց և թշուառութիւն  
կենաց գերդաստանիս այսորիկ . բայց  
և այնպէս՝ ոչ անխոհեմաբար մերժե-  
ցին զնա , և ոչ անյուսաբար վհատե-  
ցան ՚ի ձրի շնորհաց Ամենակալին :  
**Աղօթիւք** խնդրեցին ՚ի Հոգւոյն Ալր-  
բոյ արդիւնաւոր առնել զվաստակս  
իւրեանց , որ ՚ի վերայ մանկանն . և  
խորհեցան մի ևս կեալ աւազակու-  
թեամբ նորա , այլ յաւէտ գործել  
քրտամբք երեսաց , որպէս զի կենդա-  
նի օրինակաւ իւրեանց՝ կարասցեն  
յանմեղ աշխատասիրութիւն համոզել  
զնա և յաստուածպաշտութիւն :

**Աւոտի** յարուցեալ վաղքաջ ընդ-  
առաւօտն՝ առ ընդ իւր զՀասօ , և  
խնդրեաց ՚ի նմանէ առաջնորդել իւր  
՚ի հրապարակ անդր Արիանդուաբքա-  
ղաքի : Գնաց կամովին և եկաց ՚ի շարս  
հասարակ մշակաց , տեսանել թէ իցէ  
ոք արդեօք՝ որ վարձիցէ զվաստակ  
իւր զօրն զայն :

Բազում դժուարութեամբ հաւա-  
 նեցոյց և զՆասօ , հետեւել ինքեան  
 գոնեա օր մի : Եւ իբրև կատարեցաւ  
 դորձն , առեալ Գուրգենսոյ զկրկին  
 վարձս իւր և զմանկանն , վաղվաղեաց  
 ՚ի վաճառանոց անդր , գնեաց նոքօք  
 զպէտու երեկոյեան ընթրեաց , և ըզ-  
 քանի մի ասզունս ընդ դերձան և ընդ  
 պաստառ կարմիր , և բերեալ մա-  
 տոյց Վարսենկանն ձեւել և կարել  
 զայն նախ վասն չասօյի Վարի ,  
 որ գրեթէ կիսուլ չտփ անձամբ մերկ  
 էր , զի գէթ նովին յորդուեսցէ զնա  
 Հրաժարել յանագորոյն և ՚ի խժդժա-  
 կան բարոյից աւարառութեան և ըս-  
 պանութեան , և յօժարութեամբ սըր-  
 տի դիմել յարդար վաստակու ձեռաց  
 և յընդունակութիւն մարդավար կե-  
 նաց :

Հրաշալի իմն էր պտղունց Վար-  
 սենկանն ՚ի կար . զի ասեղն ՚ի մա-  
 տունս նորա՝ իբրև զմագդիր ՚ի ձեռն

Ճարտար նկարչի , մարմնացուցաներ  
 և պատկեր ՚ի պաստառ անդը՝ ո՛չ մի-  
 այն զգաղափարս երեւլի առարկայից  
 քնութեան , այլ և զանհամար ուրու-  
 ականս երեակայութեան և ցնորից  
 միանգամայն : Ոսկեթել և մարդարիտ  
 ո՛չ ուներ առ ՚ի զարդ , այլ գոյն ըզ  
 գոյն ասղանեօք այնքան հրաշակերտ  
 յօրինեաց զանթանոց նորա , մինչ  
 զօրէն հաւուն Մարաց կամ սիրա-  
 մարդի , նախանձելի աշխարհին կա-  
 ցուցանել զփետութն՝ քան զմիս զգեցո-  
 ղին : Ճշմարիտ եղանակ ուսուցանելոյ  
 գթութիւն է արդարեւ . պատանին  
 վայրագասուն՝ սակաւ առ սակաւ քն-  
 կալեալ զճաշակ մարդավար կենաց  
 ուսաւ և զբարս նոցին համեմատ :

ԳԼՈՒԽ Ժ Ա :

Կին ծրագլուխ պատահէ առն :

Դու սր հիացեալ կաս 'ի զարմացումն  
Թէ ո որ յայն փառս հան զմահացուն ,  
Հարց Վարսենակայ , և ասասցէ նա ,  
Թէ միայն անդուլ իւր աշխատութիւն :

ՀԱՆՁԱՐ Վ արսենկան ՚ի կար և  
կառալարութիւն առտնին պարտեաց՝  
փութով տարածեաց ախոեաց բերա-  
նոց 'ի բերանս բնակչացն Միադու-  
արայ՝ զհամբաւ իւր . մինչև անդամ  
գերգաստան Վ ալեթայ իշխողի քա-  
ղաքին փափագեցաւ 'ի հիւղ աղքա-  
տին նորա իջանել , և պաղատել զպըտ-  
ղոնց նորա 'ի կար և 'ի նկար իշխա-  
նական ծիրանեաց իւրոց :

Վ ալէթ փառահեղս տգաներ , և  
կամեցաւ զի երես սամոյր մուշտա-  
կի իւրոյ՝ զառնաւուխտ կիտուածա-  
կիտ ոսկեճամուկ յօրինիցի . ուստի և  
առաքեալ զայն առ Վ արսենիկ “Մէ  
ինչ խնայեր ” ասաց . “ոչ 'ի ծախո ,

և ոչ 'ի ջանս . զի երկոցուն ևս վարձք  
 'ի դրանէ հոգասցին : " Օ ամեսս  
 երկուս աշխատ եղեւ Ա արսենիկ . և  
 այնքան զարմանալի արուեստիւ և  
 ձարտարութեամբ աւարտեաց զգոր-  
 ծըն , մինչ հիացաւ լնոդ այն Ա ալէթ  
 և ատեան աւագանւոյ նորա : Ա ասն  
 որոյ և հրաման եհան՝ զի ամենայն  
 ձեռակերտք Ա արսենկան , թէ կար  
 իցին և թէ կիառուածք , մի ելցեն 'ի  
 վաճառ հասարակաց՝ մինչև նախ ոչ  
 հանցին 'ի տեսութիւն իւր և գեր-  
 դաստանի իւրում : Գրգիռ իմն արկ  
 այս հրաման յոգի իշխանաց և իշխա-  
 նուհեաց քաղաքին . մինչև առ աջին  
 'ի պարձանաց համարել նոցա՝ կրել  
 գէթ զթաշկինակ խճլպեալ 'ի մա-  
 տանց Ա արսենկան . կամ զթասակ աս-  
 տառեալ և կոպեալ 'ի նմանէ :

Ա մենայն ձեռակերտուածք մեծա-  
 մեծ արհեստաւորաց աշխարհի յարդ  
 ստանան՝ յետ մահու հեղինակացն

կամ արուեստաւորաց . իսկ Ա արսեն կանն՝ 'ի կենդանութեան իսկ իւրում՝ Ք անգի եշխան փառասէր գոլով Ա ալէթայ՝ փափագէր յամենեցունց ընդունել զայն . և զի 'ի պահանջել փառաց 'ի մարդկանէ՝ պիտէին և պարզեք յիւրմէ կողմանէ՝ խորհըրդով իւիք ամբարձ զյարդ գործոց չլքնաղին , զի յիւր օգուտ գարձուսցէ զայն գլխովին : Եւ որպէս խորհեցաւ , նոյն և կատարեցաւն : Օ ի զօրավար յաղթող ՚ի սպատերազմի մեծ ՚ի պսակացն համարէր իւր զբազպան , և սիրուհին ՚ի սրահի զքօղը ասղանկար ՚ի ձեռաց Ա արսենկան՝ քան զբիւրս գանձուց և սպասուց երևելեաց .

Իսկ Գուրգէն թէսլէտե զայսուժամանակաւ բաւականացեալ ՚ի շնորհ Աստոծոյ և աշխատութեան իւրոյ՝ առտնին երջանկութեամբ ճոխանայր , սակայն և առանց վաստակոց զօր մի ընաւ ոչ անցուցանէր :

Կատարեալ երջանկութիւն յառ-  
տիս յառաջ գայ և զարգանայ կեն-  
դանի աշխատասիրութեամբ : Օրու-  
լութիւն ծնող է մոլութեանց և թըշ-  
ուառութեանց :

Հասօ՝ գրեթէ մանուկ դրան ե-  
ղեալ էր , 'ի տանել և 'ի բերել իւ-  
րում զձեռակերտս Ա արսենկան յա-  
պարանս իշխանին . ուստի և բազմօք  
բարւոքացեալ 'ի վարս և 'ի բարս  
իւր : Խսկ Գուրգէն յաւուր միում  
ելեալ միայնակ 'ի հրապարակ անդը ,  
ուր միշտ սովոր էր երթալ և կալ 'ի  
գործ ինչ , իբրև ոչ ետես զոք 'ի  
խնդիր գործավարի՝ եթող զայն . և  
խոտորեցաւ դէպ 'ի հարաւակողման  
դարբաս քաղաքին՝ որ բանէր 'ի Պ-  
ղաթի գետ : Անդ պատահեցաւ առն  
միում , որոյ թէ գոյնք կերպարանաց ,  
և թէ քայլք ոտից՝ կասկածելի առ-  
նէին զնա յաչս ամենայն մարդկան :  
Այլ արիական և անվեհեր սիրտ Գուր-

գենայ միայն էր , որ թէև զգաց՝ այլ  
առ ոչ ինչ գրեաց զայրն և զմբխմե-  
խութիւն բարուց նորա :

**Միշտ** այսր անդր յածեցուցանէր  
զիսոր աչացն հայեցուած , որպէս այր  
մարդասպան 'ի կախաղանէ իւրմէ փա-  
խուցեալ . որ հուպ մատեաւ առ Գուրք  
գէն , և հատ կլեալ քսփսանօք ասաց  
ցնա : “**Օ** բօսարան վայելուչ են դա-  
լար եղերք Պղաթեայ , չէ : — Թուի  
թէ հաճոյանան քեզ այնք :

**Գառագ.** “**Միապէս հաճոյ թուին**  
**ինձ գեղեցկութիւնք արարածոց Աս-**  
**տուծոյ՝ Պարոն , մանաւանդ՝ յորժամ**  
**գործք ձեռաց մերոց համընթաց լինին**  
**կամաց Արարջի նոցա :**”

“**Մի թէ Հայ ոք իցես ,**” ասաց այլն :

**Գառագ.** “**Այս Հայ եմ , և 'ի պար-**  
**ծանս անձին համարիմ զնոյն . բայց**  
**քո լնդէր այդօրինակ հարց :**”

“**Ա ամն զի լնդ Երան և Տանե-  
րան չիք ազգ** ” ասաց այլն . “ որ

յամենայն 'ի խօսու և յարարա իւր  
այնքան յիշեցէ զԱստուած՝ որքան  
Հայն . որ գոգջիր հօրեղբօրորդի ծը-  
նաւ "Ամա , կամ շահապետ խորհը-  
դոցն : "

Գառագ. "Ո՞եք շնորհօքյորդիս Աս-  
տուածոյ համարիմք զմեզ՝ Պարսկ , և  
կարդամք զԱրարիչն "Հայր մեր ." և  
ոչ թէ հօրեղբայր մեր : Վասնորոյ և  
իրեւ որդիք հարազատք ամենակալ  
շնորհաց՝ զոր խօսիմքս և զոր առ-  
նեմքս , ջանամք զամենայն 'ի փառա-  
նորա բովանդակել :

"Հ'ըհ — գիտեմ , " ասաց այրն .  
"յորժամ Հայր ոք ծերանայ , և գոր-  
ծովութիւնք անդամոցն դադարին ,  
յայնժամ կարօտի վաստակոց որդւոց  
իւրոց . որ եթէ զպատառ մի հացին  
զոր տան նմա , փոխանակ ամօթոյ՝  
փառք իմն համարիցի , ուրեմն բան-  
դագուշեալ է , կամ անձար :

Գոռըգէն , որ հազիւ թէ տեսաւ

Երբէք յաղթահարեալ 'ի կըից՝ կամ  
փոխանակ ողորմելոյ տգիտին ցասեաւ  
'ի վերոյ անդիտութեանն՝ ամոք իմն-  
հեղութեամբ դարձոյց առ նա :

“Դիցուք թէ կալար մշակս յանդ-  
քո , և նոքա լոտ հաճոյից քոց կատա-  
րեցին զգործն և ընկալան զմարձս իւ-  
րեանց : — Դովին վերջացաւ արգեօք  
առ ընչութիւն կամ կապակցութիւն  
նոցա ընդ քեզ՝ թէ ոչ : ”

“ ’Ի հարկէ ոչ , ” առաց այրն .  
“ զի վարձ իմ գործոցն եղե վճար .  
իսկ հաճութիւն իմ 'ի վաստակս նոցա  
տակաւին առանց փոխարինի կայ : ”

Գառագ . “ Ի՞ւ կամ Երբ լծուի քեզ  
առնել նոցա զայդ վճար : ”

“ Առա . “ Ծորժամ պէտս ունիցիմ  
մշակիր 'ի մէջ ամենայն մարդկան ես  
զնոսա յաւէտ ընտրեցեց , քանզի հա-  
ճեալ եմ ընդ նոսա : ”

Գառագ . “ Եթէ և նոքա հասկանա-  
լով զհաճոյս քո՝ մշակեսցեն յանդի

Քում, ողորմութիւն՝ ուրեմն առնեն  
քեզ : ”

Այս. “Ոչ բնաւ երբէք .—զի ես  
վարձս վճարեմ նոցա : ”

Գառագ. “Ա արձբու վաստակոցն  
գուրս,—իսկ վասն հաճութեան քում  
զինչ : Ո՞չ համարիցիս զնոսա արդեօք  
արժանիս գթութեան և խնամոց քոց,  
իբրև զորդեակս ինչ քոյ : ”

Այս. “Եւ զինչ յայդմանէ : ”

Գառագ. “Թէ հաճեցեալ Արարէին  
ընդ արդիւնս խաչի Փրկչին մերոյ՝  
Յւսուստ Կրտսուստ, վասն սիրոյ նո-  
րա ողորմեցաւ ընդունել զմեզ իբրև  
որդիս իւր : ”

“Դնա, գնա մարդ .” ասաց այրն,  
” բանալի մարանիս բեկեալէ, և հա-  
զար գործ ՚ի տան անկատար մնայ .  
այնինչ այսպիսի գատարկ աս ու լիսք  
յաւիտենից պէտս ունին : —Գիտես  
զոք ՚ի դարբին ինձ : ”

Չե բանայր Գառադէն զբերան  
Ժ

իւր 'ի սլատասխանի , այնինչ դուշ  
նորա յինքն յանկոյց աղիողորմ աղա-  
ղակաւ՝ կին ոմն գեղեցիկ , արտաքոյ  
սովորական տարազու աշխարհին պըճ-  
նեալ . և ասաց , “ Ողորմեա , ողոր-  
մեա ինձ՝ ով Քաջ , զե մանուկ իմ  
ստնդի յափշտակեալ 'ի գրկաց՝ ա-  
ւանիկ գերի վարի : ”

Գառագ . “ Ո՞յք , տիկին , ո՞յք համար-  
ձակին զայդ առնել՝ ընդ խաղաղ և  
խնամոտ իշխանութեամբ Ա ալեթայ :

“ Տես Քաջ , տես . ” ասաց կինն .  
և այնինչ մատամբացի ցուցանէր  
զայլ ոմն խօլ՝ որ մանուկ 'ի գիրկա  
գիմէր գէպ 'ի մեծ և ընդարձակ տուն  
ինչ յայնկոյս գետոյն , բարձր սլարս-  
պեալ և բերթանման բրդամբք զար-  
դարեալ՝ յանկարծ խոյս ետ 'ի նմա-  
նէ այրն՝ որ խօսէր , և աներեսոյթ եղե  
յաչաց նորա : Իսկ Գուրգէն մեր ,  
որ սովոր էր բարիս առնել ընկերին  
ամենայն մասամբ , մանաւանդ թէ և

տկարին 'ի սերս , ասաց . “Ա յ է երկըն-  
չեր Հարսն , մի՛ երկնչեր . այլ զհետ  
սինդեաց իմ , և ես թափեցից Աստու-  
ծով զմանուկ ՚ի գերչաց անտի : ”

Օ այս ասացեալ յառաջ մատեաւ  
՚ի ճանապարհ իւր գէպ ՚ի տուն ան-  
գըր , ուր Հարսնն առաջնորդեաց նմա՝  
ընդ դարպաս ինչ երկաթի . որ բա-  
նէր ՚ի փողոց ոլորաշաւիդ . և ոլորէր  
՚ի միւս ինչ դարբաս երկաթի հաս-  
տակառոյց քան զառաջննն . և ան-  
ձուկ՝ ոլորմոլոր , մթին և զարհուրե-  
լի . Ո՞նդ որ գրեթէ կոյր զկուրայն  
գնացեալ Գրուրգենայ եհաս ՚ի սրահ  
ինչ ընդարձակ . և ահա յանկարծ  
դուռն երկաթի փակեցաւ զկիսի նորա ,  
ոչ մայր ետես , ոչ մանուկ . այլ լոռւ-  
թիւն համատարած ամենայն ահա-  
ւորութեամբ զարմանաց և զարհու-  
րանաց՝ շուրջ սլատեալ զիւրեաւ :

---

Որ 'ի փորձանս աշխարհի  
Յուսով յԱստուած հաստատի,  
Նոյն իսկ նըմին տառապանք,  
Ճիւսին 'ի թագ արքենի :

**Լ** ՈՒԽ , մենաւոր և նքողեալ ե-  
կաց 'ի գառագիղ անդր Պառւրգէն  
առ ժամանակ մի . զի չորեքիուսի  
կալեալ և կափուցեալ արգելանին , ոչ  
զցայգ ինչ ցուցաներ որոշակի , և ոչ  
զցերեկ . այլ թուէր իմն թէ լնդ  
անհուն տարածութիւն յաւիտենից  
անկեալ լուղայցէ , անեղը և ապայոյս  
՚ի վախճան : **Վ** ասն զի՝ Հոյակապ և հը-  
գօր շինուածն այն , որ 'ի **Վ** ազգա-  
քոյ հետէ և ՚ի **Վ** անեւայ՝ եղեալ էր  
ամենայն **Վ** արաց և **Պ** արսից տուն  
**Վ** ալանդարամետի , **Վ** ՏՐ կամ **Վ** ԶՐ-  
ՆՈՒՇ . որ է Հուր կամ **Վ** տրուշան  
Պինւոյ համբաւեալ՝ ուխտարան նո-  
ցա եղեւ ցվերջին հարստութիւն **Վ** ա-  
նանեանց և գործարան ամենայն ա-

նառակութեանց և զեխութեանց՝ զորս  
 միանդամ արբեցութիւնն ստեղծ , և  
 երեակայութիւն օրինակեաց ՚ի միտո  
 հեշտ որենոյ աշխարհին : — Օ այսպի-  
 սիսն ասեմ ՚ի մարդկային վրիպանաց՝  
 զորս ՚ի Հայաստան Ճրագաշեցոյց ,  
 և ՚ի Հնդիկո՝ Առատ անուանեն ա-  
 զինք , և կամ սոսկ՝ Հուլի + որպէս  
 թէ Հուլից անառակելոցն աօն :

— Բայց ՚ի նկուն լիսել Ասսանեանց  
 յերեսաց խուռն յարշաւանաց Արա-  
 բացւոց՝ ընդ գրօշակաւ (Օմարայ , այս  
 Տաճար Գիււոյ ընդ կըկին նզովիւք  
 փակէր , և ոչ ոք ՚ի մարդկանէ եր-  
 բէք իշխէր հուպ մատչել ՚ի նա .  
 Թողթէ և ՚ի ներքս խոկ մտանել :

Ուստի և յամաց բազմաց հետէ ա-  
 մայացեալ կայր , և պառաւունք իսկ  
 առասպելէին դիւաց անդը բնակել ,  
 և զլեարդս մտանողացն ՚ի բաց Ճո-  
 ղոսլրել և ծիւ առ ծիւ փանդանել :  
 Ասէին ևս՝ թէ և Խօլից վայրենեաց

թժագաւոր՝ ահագնահասակ քաջօք  
և հսկայիւք իւրովք ադր մակաղէր,  
աներեւոյթ ՚ի մարդկանէ . և թէ՝ յա-  
ւէրժահարսունք լերին Ռնձու , որ  
առ ընթեր , հեծեալ յասուսզ եր-  
բեմալոյսս՝ կամ ՚ի հուրս մոլիս՝ երե-  
ւէին զգիշերայն՝ երթեւեկս առնել  
անդր , և զխօլականսաց գնդին զար-  
դարէին մարդազոհ խնջոյ՝ անպարկեշտ  
կաքաւուք և պարուք իւրեանց :

ՄԵՃ էր ասուլիս հասարակաց լզ  
տեղւոյն . բայց Գուրգէն այլ նըժ-  
դեհ և օտարական՝ էր՝ զի դուն ուրեք  
լուեալ , և էր՝ զի բնաւ ոչ հաւա-  
տացեալ նոցա՝ կամ առ ոչ ինչ հա-  
մարեալ՝ արիաբար յառաջ մզեաց  
զընթացս իւր գէպ յանել յոյն գա-  
ռագիլ զարհուրանսաց , և փակեալ  
դրամբք եկաց մէն և թշուառիկ ընդ-  
ժամանակս բազումս ՚ի խաւարին , ոչ  
գիտելով զիշեր իցէ՞ ժամանակն՝ թէ  
տիւ , մինչեւ անագան ուրեմն հայե-

ցաւ և տեսանէ ՚ի խորութեան խաւա-  
 րին յանկարծ լոյս փայլել և շիջանել  
 զօրէն հրոյ մոլոյ՝ որ ՚ի վերայ գերեզ-  
 մանացն շողայցէ : **Օ** ահի հարաւ  
 ընդ առաջին տեսնն , և վարկաւ թէ  
 ոգի ինչ անդնդային զգեցեալ զմար-  
 մին լուսեղէն՝ յանդ իման գայր աչաց  
 լւրոց՝ կնքել զվերջին կորուստ իւր :  
 Ե՞նմ վերստին փայլեաց . փայլեաց  
 և հուպ առ ինքն անցանէր , մինչ  
 կէս զարհուրեալ և կէս զայրացեալ  
 կորուլին՝ յապուշ կրթեալ ականէր .  
 մինչ բարւոք հուպ մատեաւ երե-  
 ւոյթն , և վերստին փայլեցաւ լոյսն ՚ի  
 վերուստ նորա : “Վչ , ոչ .” ասաց  
 Գուրգէն ՚ի միտս իւր . “ոչ է կա-  
 րեոր , եթէ դեք և դժոխք այսօրի-  
 նակ ընդ խաղս երեւսցեն մարդկան՝  
 առանց մարդկան դիւարարոյից և դժո-  
 խացելոցն գործակցութեամբ նոցին :  
 Վվ եթէ յօդնութիւն ինձ հասա-  
 նէր **Ամենակալն** **Օօրութիւն** , որպէս

երբեմն Ակային Խսրացէլի՝ ՚ի մէհե-  
նին Դագոնայ, և բուռն հարեալ կոր-  
ծանէի զայս սանդար անմաքուր ո-  
գոց, կամ անելն համարեալ կաղաղ  
խօլից զարհուրելեաց ։ որպէս զի ա-  
ռաջնորդեցից զազգ մարդկան ՚ի փառս  
և ՚ի պատիւ Հզօրին, ։ Օ այս ասաց ։  
և աչք նորա ՚ի ցասմանէն առաւել  
բոցս արձակէին, քան թէ ոգին խօ-  
շական յիւրոց պատրանաց ։ Ա երո-  
տին հուպ փայլեաց լոյսն, և արին  
անվեհեր յանկարծ ՚ի վեր յարու-  
ցեալ բուռն եհար զնմանէ ընդ խա-  
ւարին թանձրութիւն, և կալեալ զե-  
րեոյթն եհարսաստկութեամբ զգետնին  
և նստաւ ՚ի վերայ նորա ։

“ Հողեղէն, թող զիս .” գոչեաց  
խօլն ՚ի ձայն ինչ զարհուրելի ։ ”

Գառագ. “ Ա՛յ. Ա՛յ. Հրեղէն հողե-  
ղինի կալանաւոր՝ զթողութիւն աղեր-  
սէ, այլ ոչ զերծանի երբէք ՚ի բաղ-  
կաց աստի . մինչև ոչ յայտնեսցէ ինձ

զինքն և զէութիւն իւր ։՝ Օ սյս  
ասացեալ՝ յարուցեալ նստոյց առլն-  
թեր, և յաւել ասել ցնա : ՚՚Մնո-  
տիապաշտից և անծանօթից Աւետա-  
րանի Որդւոյն Աստուծոյ՝ բաւական  
զարհուրանք ես դու՝ խաւարային  
գործով քով. բայց Վաւրդէն պա-  
հանջէ ՚ի քէն յայսմ իսկ կիտի, կամ  
զկեանս և կամ զՃիշդ հանգամանս  
նորա. ասա, ապա թէ ոչ մեռանիս :

Պատսխանեաց ուրուական երեսոյթն,  
՚՚Ո՛ Տէր : Ես նոյն Հարսնիկ եմ, ոք  
՚ի խօսել ընդ քեզ հօր իմում, անցի  
դքե. և ողորմ աղաղակաւ իմով շար-  
ժեցի զքեզ յօդնութիւն գալ զհետ  
իմ : — ՚ Ե բազում ամաց հետէ է, զե  
հայր իմ, Աւահաղին անուն նորա,  
մոլորեալ զհետ ազգի ազգի դիւթուե  
և ախտարաց, զոր ինքն երազէ գլ-  
տեալ ՚ի բաւիղս Ատահրայ՝ ուսոյց ինձ  
պյսօրինակ որսալ զմարդիկ յայս գա-  
ռագիլ անելանելի . կողոպտել զնոսա

Ե գոյից և 'ի կենաց իւրեանց, և  
սոկերօք նոցա հմայս հմայել մեզ,  
և զառականո ընդերաց երկրի բանալ  
մեզ առ 'ի գիւտ գանձուց և ականց  
պատուականաց նախաղամեան թագա-  
ւորաց :

**Գառագ.** “Եւ այս փոխարէն բարե-  
րարուե խմոյ: “Ուր է այժմ հայր քո:”

**Ուր.** “Գնացեալ է Տէր, 'ի խնդիք  
գնտի ուրուականաց իւրոց, որ է՝ զի  
կենդանւոյն գերի վարեն զմարդիկ և  
բերեն այսր, և է՝ զի յափշտակեն զգոյս  
և բառնան զկերանս նոցա :”

**Գառագ.** “Արդարե հօր քում վա-  
յելէ ոգւոց ստրնոց տիրել՝ քան  
թէ զմորդիկ ոգեփոխել ՚ի խօլ.  
և այսքան չարիս առնել ազգի մարդ-  
կան : Բայց Գառարգենայ առաջիկոյ  
աղատել զաշխարհ յորոգայթից նորա  
և քոյ :”

**Ուր.** “Ոչ Տէր, զի այր բարերարոյ  
ոմն թուիս, և չեն կամք ինձ ախոյ-

եան քերել քեզ հօր իմում։ որ  
գիտէ զամենայն հնարս զվերին, զմի-  
ջին, և զներքին անդնդոց։ Աեր-  
պարանափոխ լինի յամենայն էակ, ՚ի  
հոգեորաց և ՚ի մարմնաւորաց մինչեւ<sup>1</sup>  
յանմարմինս և յերեակայականս ան-  
դամ։ և առնէ զամենայն լսոտ հա-  
ճոյից։ և դեռ չեք երկրածին ոք,  
որ կարաց խուզել զխորս հնարից  
նորա։”

Գառագ. “Մոլորիս Աղջեկ, զօրու-  
թեամբ Ամենակալ Հոգւոյն Աստու-  
ծոյ՝ կարող է Գառորդէն խորտակել  
զամենայն զմեքենայս հնարից նորա,  
և զքեզ ինքն ՚ի կանանոց Ա ալեթայ  
կացուցանել ՚ի—։”

Ուր. “Երանեն էր, ՚Բա՞ջ ։ եթէ ա-  
ղախին նստէի տան քում, քան թէ  
տիկին ապարանից Ա ալեթայ ։”

Գառագ. “Ռ նդէր ։”

Ուր. “Օ ի այր քաջ ես դու, և մի  
միայն ՚ի մարդկանէ՝ որ համարձակե-

ցար շօշափել ձեռօք զանձն իմ . այն-  
ինչ սկայք յաւիտենից զահի հարեալ  
դողացան առաջի իմ . և թագաւորք  
պակեան ՚ի լուսոյ աստի իմմէ : ”

**ԳԱՅԻԳ.** “Իսկ ա՞րդ : ”

**ՈՒՅ.** “Իսկ արդ՝ կալանաւոր քո եմ .  
մինչև դարձի հայր իմ :

**ԳԱՅԻԳ.** “Շամփուշ է նա . զի գի-  
տաց ուսուցանել քեզ յայս որոգայթ  
արկանել զիս՝ զայր անմեղ . և ոչ կա-  
րաց հնարս ցուցանել քեզ յաղա-  
տութիւն յիմնց բռանց . Արդ ՚ի բռան  
կաս իմ , — չէ : ”

**ՈՒՅ.** “Այ՞ : ”

**ԳԱՅԻԳ.** “Ուրեմն անկեղծ հաւատա-  
ինձ . զի հինգ հազար ՚ի հարանց քոց՝  
ոչ կարեն զերծացուցանել զքեզ աստի :  
**ԹԵՐԵԿԸ** բարեգոյն ևս իցէ քեզ սըր-  
տի մոօք ապաւինել ՚ի զթութիւն  
**Ա**ստուածալախ առն ումեք՝ քան թէ  
Հօր անաստուածի , և բանալ ինձ զա-  
մենայն ճշմարտութեամբ , զի մի ապա-

շաւեսցէ մարդ , որ օգնել կարիցէ կա-  
րօտ լնկերին :

Ուր “Այս Տէր , դու իբրև կարօ-  
տի օգնականութեան քո , զհետ ե-  
կեր խմ , բայց — : ”

Գառնիք . “ Ես բայց քո այդ՝ ապաս-  
տան կան կերանք քո՝ հօր՝ և գըն-  
տի Խողից նորա : Գոռլգէն ՚ի կեղ-  
ծեաց զարհութող ոք չէ : ”

Ուր “Այս , այ , Տէր . ո՞չ զիտես՝ զի  
երեի նա արտաքոյ մարդ կային կերպի ,  
զոտս եղջերեայս , դլուխ եղջերեայ ,  
և անձն եղջերեայ երե եցուցանելով :  
Գոչէ երեք անգամ զարհութելի քան ,  
զառիւծ , զօրէ բորենւոյ կեղծաւորէ  
և ըստ աղուիսու խորամանկէ , յամե-  
նայնի զիտելով զշահ իւր միայն : ” —

Գառնիք . “ Աղջնու , որոց բանից քոց  
հաւատացից ես . ցայս վայր որպէս  
դուստր Ատրաւազինայ — այնքան  
չարիս նիւթեցիր , մինչ սուտ մայրու-  
թեամբ , և ստագոյն ևս արտասուօք

յայս գառազիղ արկանել զիս : — Եւ  
աստ ցնորական պաճուճանօք գաս  
երրև զտղայ ստնդի երկեցուցանել  
զիս՝ որ կարենոր բան չէ : — Օ արդիս  
աղջիկ մի ես տկար, և 'ի ձեռին  
իմում. եկեսցէ հայր քո՝ կամ ոչ.  
դեռ ես կեանք քո 'ի բռսն իմում  
կան : ( Օ՞ն արի, և նախ ասա ինձ թէ  
զինչ այդ քոյ հուր մոլի : )

Ո՞ւ Առսկ փոշի ինչ, տէր կազմեալ  
'ի ծծմբոյ խառնեցելոյ ընդ բորակին  
զոր արկեալ յաման կայծականց՝ որ  
'ի գլուխ իմ, վառի, խկոյն՝ լոյս ար-  
ձակէ և ցնդի : Որով ես 'ի ներքոյ  
տեսանեմ զշաւիղ իմ, բայց այլք ոչ  
կարեն տեսանել զիս : ըստ առակին  
թէ “ Ճրագ զտակն ոչ լուսաւորէ : ”  
Ուստի և հոգենոր արարած ոմն համա-  
րին զիս, կամ առաջօք ինչ տեսիլ  
զլոյս իմ : ”

Գառագ. “ Եւ այդու բիւրանգամ չար,  
աղջիկ, որ 'ի հոգի կերպարանեալ ”

զՀոգիս կորուսանես . և 'ի լոյս տռաջ-  
նորդեալ՝ լնդ խաւար շղիս . վառեա  
ինձ զլոյսդ , և ցոյց ինձ նախ՝ թէ ուր  
ժողովէ հայր քոյ զաւար յափշտակու-  
թեանցն , ապա թէ ոչ մեռանիս : '

ԳԼՈՒԽ ԺԳ :

ՊՐՈՒԽ ԹԵՂԱՅ ՄՐԿ Է :

Քանի անագան՝ այնքան և սաստիկ  
Վեհ Արդարութեան կանխէ պատուհաս .  
Զերկայնմտութեամբ քամահող մարդիկ ,  
Կուտեն կայծակունս ՚ի զլուխ իւրեանց :

ԱՌԾԱՑԵԼՈՅՆ ընդերկար ունա-  
կութեամբ մոլութեան , և ուսելոյն  
՚ի չարիս՝ անհնարին իմն թուի կակվա-  
նալ ՚ի շնորհաց բարութեան՝ և ամոքա-  
նալ յողոքանս ընկերին : Ուրուական  
կերպարանեալս աղջիկ՝ ծնեալ և սնեալ  
՚ի խնամս չարին՝ գրեթէ ընդ կաթին  
ձգեաց յինքն զհոգի մոլորութեան .  
և սիրէր առաջօք պատրանօք իւրովք  
կործանել զհոգի իւր և հետեռղացն՝  
քան եթէ Ճշմարտութեան բանին ան-  
սալ և ապրել : Ա ասնորոյ յանկարծ  
՚ի բաց ոստուցիալ ՚ի կուսէ կորուլոյն՝  
այնինչ ՚ի փախչելն աճապարէր դէպ  
՚ի գուռն խաւարաքորք արգելարա-  
նին՝ ներկայութիւն մտաց Գուրգենի  
ողդեաց իսկոյն որոնել իւր նախ՝ զա-

ման հրոյ նորա և զծրար ծծմբոյն ,  
ընկեցիկ առլնթեր բազմոցի իւրեանց :  
Եւ բռնալիր արկեալ ՚ի փոշւոյն ՚ի հուր  
անդր՝ լոյս ահեղ փայլատակեաց , որով  
տեսեալ զառիթ տառապանաց , և զա-  
ռարկայն արդարացի բարկութեանն՝  
կալաւ զնա . և այնքան տրորեաց զնա  
՚ի մէջ հզօր բազկաց իւրոց՝ մինչ յոզի  
ապաստան եղեալ նորա՝ առաջնորդեաց  
զնա գէոլ ՚ի գուռնն կոյս , որ գազտնի  
զսպանակաւ աղխախեալ և փակեալ՝  
անհնարին լինէր ումեք բանալոյ , եթէ  
ոչ նախ հմուտ գաղտնեացն եղեալ :

**Դ**եռ անդ ևս ժամավաճառ լինէր  
աղջիկն՝ գալստեան հօր իւրոյ , և գըն-  
գի ուրուականացն ակն կառացեեալ . զի  
որս պարարտ համարէր իւր զՊառուր-  
դէն՝ թէ Հայկադիտակն սկայութամբ  
իրանաց , թէ Արայաշէն գեղեցկու-  
թեամբ երեսաց , և թէ Տիգրանիմաստ  
վսեմութեամբ մտացն՝ որ յանհամար  
գիւտս հնարից և հանձարոյ մի միայն ,

Երկար ունակութիւն մոլութեանն  
 խանգարեալ եղծեալ և ապտկանեալ  
 էր գլխովին զբնութիւն նորա : Ամ-  
 բողջ դիւացեալ հոգւով՝ ոչ ընաւ  
 Հայէր տեսանել ՚ի նա՝ ըստ արտաքին  
 հանգամանաց դիտակին և զներքին  
 հոգւոյ զընդաբոյս փթիթօ Հրաշատե-  
 սիլ ծաղկանց առաքինութեան . տինա  
 թէ՝ և զպարարուն պտուղս առաքինի  
 վարուց նորա , որով միայն մարթ է  
 զմարդն Աստուծոյ նմանեցուցանել՝  
 նախատիտ իսկութեան իւրոյ : Խգա-  
 կերպարան պատկեր Կտիսանձուեղեալ  
 գոգջիր , կուրանայր յարեն ականել  
 Արւոյն : Բ զտացուլ խօլից նմանեալ  
 ոխայր մախսնօք ընդ քաջի արարսն  
 բարեաց : (Օձանման դալարէր , սո-  
 ղայր , սողոսկայր շաղաշուրթն բերանիօք  
 և բարոյիւք միանգամայն՝ աղատ ՚ի  
 ձեռացն փրծանել , և զանձն բարերա-  
 րին ՚ի խորխորատ արկանել : Օ գայ-  
 ուէր խորհուրդս անօքէնութեան ՚ի

որտի իւրում, զի գէթ միանգամ  
 Շամիրամական լղձիցն հասանիցի :  
 Ենպարկեշտանայը շունն ՚ի շրթունս  
 իւր, զի թերես ՚ի ծայրագոյն գահէ  
 անտի ողջախոհութեանն գայթակղե-  
 ցուսցէ զԱրին Հայկազուն՝ ՚ի խոհերս  
 դժոխային խորհրդոց Պիտափրական  
 պառաւոյն : Բայց ՚ի զուր աշխատ  
 եղեւ, այնինչ միտյն յեշատակ շնոր-  
 հացն Աստուծոյ, գեշերային զրու-  
 յատրութեան իւրոյ, գթութեան  
 Վաչագանայ, և գեղոյ սքանչելոյն  
 Վարսենակայ՝ անշարժ արձանացու-  
 ցանէին զնա՝ որպէս զարհին մեր Այ-  
 րաբատ՝ ՚ի վերոյ քան զամնայն Հե-  
 ղեղս հրապուրանաց և անմաքուր ցան-  
 կութեանց նորա :

“ Ոչ յիս լինիս՝ տէր, ոչ յիս , ”  
 ասէ աղջիկն . “ որ ՚ի հարց և ՚ի հա-  
 ւուց հետէ գանձեալ ոսկի և ար-  
 ծաթ բազում և ականս պատուականս ՚ի  
 զանազան բաւիղս երկրի՝ համբարեալ

գիզեալ կան ՚ի ժառանգութիւն ինձ ;  
 Խոստացե՞ր ինձ միայն զքեղ , և ահա  
 բացեալ զայս՝ ցամաքեցուցից զաւա-  
 զան ջրոյն՝ որ ՚ի միջավայր գաւթիս  
 Ատրնուշայ , և ՚ի յատակին ցուցից քեղ  
 սալաքար ինչ աղեղան վեցանկիւնոյ՝  
 Հատեալ ՚ի քարանալի յաղթերացն  
 Խոգանայ՝ ՚ի Հիւսիսոյ Կապուտանի .  
 Ընդ որ ՚ի ներքս մտեալ քոյ՝ և— ,”

Մինչ խօսք ՚ի բերան էին դստեր  
 Արաւազինայ , ահա թեղիւն ինչ ՚ի  
 ներքոյ ոտից նոցա .— Յուշ . ահա և  
 թեղիւն վերստին , և երեքին լսելի  
 լինէր : Թուէ իմն թէ ոգի ինչ  
 սանդարամետական յաղիս երկրի գետ-  
 նաշարժ ահագին յարուցանէր ՚ի ներ՝  
 քոյ ոտից նոցա : Օ արմացաւ , և  
 գրեթէ ընդարմանայր կորովին , այլ ՚ի  
 ձեռաց չտայր զքածն , մինչ դարձեալ  
 թեղաց երկիր , և որոտ ինչ ահաւոր  
 լսելի եղե ՚ի ներքուստ . որ ոչ ճայնի  
 մարդոյ նման և ոչ բառաչոյ անասնոց ,

Ընդ այս՝ անդը քան զչափն զայրաց  
ցեալ Արւոյն Հայկազնւոյ՝ որոտաց  
՚ի ձայն բարձր, “Քաց ասեմ, աղջիկ!”  
Եւ լնդ ասելն այնքան սաստիկ ոլո-  
րեաց զպարանոցն մինչ թուէր թէ ՚ի  
բաց բառնայր զայն յանարժան գիշո  
նորա :

Կամայ ակամայ երաց նա զդուռնն  
յաղթ, և աչք Գուրգենայ՝ որ յե-  
րից աւուրց հետէ կացեալ յանլոյս  
՚ի խաւարին՝ շլցեալք գոդջիր ՚ի միջօ-  
րէական ճառագայթից ահեղափոյլ  
տունջեանն գեռ հազիւ ինչ տեսա-  
նէին՝ այնինչ յանել արգելանաց ան-  
տի արտաքս ոստեաւ, լնդ իւր ձը-  
գելով զառաջնորդուհին չարեաց :

Ա եհ ցածութեամբ ծունը էած ՚ի  
գեաին, և զառաջին ժամ արևատե-  
սին նուիրեաց աղօթիւք ՚ի փառս Ա-  
րարչի և փրկչի իւրում : Քածն չա-  
րագեւ ոչ զԱստուած բնաւ ծանու-  
ցեալ, և ոչ զաղօթից զօրութիւն ու-

սեալ՝ Համարեցաւ թէ առ վտանգէ  
անկաւ արին, և Հնարէր Ճողոպրել  
՚ի ձեռացն, զի գէթ ահաւորութեամբ  
զարհուրանաց մղեսցէ զնա ՚ի կամս  
պագշտութեան իւրոյ. ուստի միան-  
գամ և երկիցս հծծեաց. “Ահա ու-  
նաձայն, ահա Հայր, և ահա ուր-  
ուականք նորա :”

**ԵՅԼ ԳԽՈՒՐԳԵՒՆԱՅ՝** որ ՚ի մթան ոչ  
երկնչէր ՚ի մահուանէ, և աստ ՚ի  
լոյս միջօրէի խաղալիկ իմն Համարէին  
կեանք և մահ: “Եշկեցսէ թող Հայր քոյ՝  
աղջիկ. և որոց ընդ նմա և Հաճոյք  
իցեն, — ինձ ընդ այդ փոյթ բնաւ իսկ  
չիք. սյլ եկ և բաց ինձ զականն՝ ուս-  
տի թնդայր որոտումն: Կամայ ակա-  
մայ երաց զդուռնն, զի Համարէր թէ  
զօրութեամբ Հմայից իւրոց թերեւս  
յինքն յանկուսցէ զարին, կամ պա-  
տաղեցուցանել կարիցէ զնա սնուռեօք  
տեսարանին՝ ցգալուստ հօրն: Ծնդ  
նեղ և ձիգ ինչ պարանոց մտից՝ ՚ի

Ներքս անդ սողացան Գյուրդէն և ու-  
 րուական հրապուրիչ իւր , գտին զայն  
 ահռելի սանդարք իմն ապականու-  
 թեանց և եղծութեանց , եօթնանկիւնի  
 իմն ձեռվ . խորշ՝ ի խորշս բաժանեալ .  
 և յիւրաքանչիւր ՚ի նոսա պատկեր  
 երկնային մոլորակաց՝ կարի այլանդա-  
 կըս , դիւակրօշ , ձիանհանգս , վիշա-  
 պատտունս , ցնագլուխս , կապկանմա-  
 նիս և վարազակերպարանս : Աստի  
 խալամք տեսակասպառ յուշկապար-  
 կաց , նհանգաց , և փղացլուց . անտի՝  
 կմախք օձից թիւնաւորաց և վիշա-  
 պանցն ահագնաց . մսատեալ և գօսա-  
 ցեալ գլուխք և գանդք մարդկան  
 յաղթանդամոց , որպէս և մոմեայք  
 արանց և կանանց յօրապակաս վե-  
 ժածէ ցծերն զառամեալ ամօք :

**Ըուրջ** զնոքօք էին խժութք և բը-  
 ժութք ազգի ազգիք . է՝ որ լի ճար-  
 պով մարդոյ . է՝ որ լղեղամբ չորքո-  
 տանեաց . և է՝ որ ծծովք ոսկերաց՝

և կորդացեալ արեամբ.ք նոցա , իսկ  
 ՚ ձեղուանց ականին գլուխ ՚ի վայր  
 առկախէին գոզջիր անհամար թուով՝  
 այր , կին , տղայ , մանուկ , օձ , վի-  
 շապ , սողուն , զեռուն , և այլ ամե-  
 նայն խառնաբնդոր արարած.ք . ո՞ր կի-  
 սամեռ , և ո՞ր դեռ տակաւին կեն-  
 դանի : Որոց էր՝ զի անօթ խեցեղէն  
 կախէր զպարանոցաց՝ յընդունելութի  
 ժահից Հոսեցելոց ՚ի նոցանէ . էր՝ զի  
 անկան մեծ զհտեղէր ՚ի ներքոյ , և էր՝  
 զի խողովակ եղեգեայ կամ անագեայ  
 յանօթոց յանօթս Հաղորդէր զքամոց  
 նեխութեանց նոցա : Ահնդանիք և  
 առուգունքն ՚ի նոցանէ յոզիս իւ-  
 թեանց ապաստան , թափ առեալ ընդ-  
 հարկանէին ՚ի ձեղուն ականին , և ա-  
 հագին ցնդմամբ ջախէին զխեցի և  
 զգլուխս միանգամայն : Քստմնելի տե-  
 սարան . որ շարժէր գՊառըդէն յողորմ  
 և ՚ի կարեկցութիւն՝ թէ մարդկանն՝ և  
 թէ անասնոց , այսօրինակ դատապարտե-

լոյ յանօրինաց ՚ի մարդկանեւ տնսղարտականն մահու՝ ՚ի խաբս երեւակայական ցնորից և եթ : Փութայր նա ՚ի փրկութիւն համարարած էակացն , բայց և այնպէս՝ ՚ի ձեռաց ոչ կամէր լքանել զվհուկ գուստըն Ամաւազինայ : Ա ամերոյ առ նախ՝ կապեաց զնա չուանաւ լնդ մին յերկաթի շըլթայիցն՝ լնդ որմն բեւեւելոց . և ոտից կոիւ արարեալ զննեաց զդիս կախելոցն , և յորս եգիտ զառկայծեալ ինչ պայծ կենաց՝ իջոյց իսկոյն և գարման տարաւ : Այլ ՚ի զ՞ւր . զե անցեալ վերացեալ էր յոյս կենդանութեան :

Ենդ և վիշապ ինչ ահագին՝ որ ՚ի պարզել շնչոյն զգլուխ պղնձաձոյլ կամփսակաւն ՚ի ձեղունն հարկաներ , և թնդիւն մեծ յարուցանէր՝ խզեաց յանկարծ զկապ առաստնին , որով կախեալ էր . և յանկանելն ՚ի գետին՝ թափ առեալ անհնարին ուժգնութեամբ անկաւ ՚ի վերայ վհկին . թէ-

պէտե բաղմօք ՚ի տեղւոջէն տարակայ ;  
 Եւ մինչ չե էր Գուրգենայ յետո  
 Հայեցեալ՝ եհար ջախջախեաց զնա  
 և զինքն ՚ի մահ : Ա աղվաղակի սա-  
 տակեցան երկոքին ես . և մնաց Գուր-  
 գէն մրայնակ ՚ի մէջ շաղղաց գիշոցն՝  
 գէղադէզ կուտակելոց . զարմացեալ  
 ընդ անագան , բայց և յարժանահաս  
 պատուհաս արդարութեան Աստուծոյ  
 ՚ի գլուխ ամբարշտին : —

Գլւուի ԺԴ.

Բարբին շէւրէն ընտ է-ը սունի :

Օ օր կամիս օրհնել գթութեամբ՝ Աստուս' ա,

Սատան և Սանկարք սատարեն նմին .

Քայց զոր լքանես , Հոյլք հրեշտակաց

Ո՛չ մազ մի գոնեայ փոփոխել կարեն :

Դժոթ' Խ-ք և խոհերք իւր շուրջան-  
նակի պատեալ պաշարէին զԱրին Հայ-  
կազուն . մի միայն յահագին գառա-  
գղին՝ զաւուրս երիս անսուազ տու-  
տյտացեալ , և յամէն ուստեք կուսէ  
կաշկանդեալ ՚ի զայր և զարհոյր մօ-  
տալուտ վտանգի կենացն պատուա-  
կանաց : Վ արանաց ՚ի վարանս ելանէր .  
Հիանայր , սքանչանայր մանաւանդ՝  
ընդ յետին անմտութիւն մարդկանն ,  
և ընդ անսահման երկայնմտութիւն Ա-  
րարչի նոցա : “ Բարէ . զի եթէ գործք  
Աստուծոյ անհասանելիք և անձառք  
իցեն՝ ասէր , ապաքէն և արարք մարդ-  
կան բանաւորաց անպատումք են ար-  
դարեւ : Հայեաց աղէ յարքունիս

Ա աչագանայ և ՚ի փառս Ա ալէթայ .  
 և ահա ծաղկունք սիրոյ և շնորհաց ծի-  
 ժաղաւէտ ծածանին , Հայեաց ՚ի բա-  
 ւ իդ այս սանդարամետական ։ և ահա  
 ժահերք և զարհուրանք երուանդանան  
 առաջի քարացուցանել զսիրոս հայե-  
 ցողացն ՚ի սոսա : Ա՛վ Բան , Բան .  
 երանի թէ իբր զգործի իմն արհետ-  
 տաւորաց ընդ հարկու հոլովէիր՝ քան  
 ինքնիշխանաբար : Բայց և յայնմամ  
 զԱրտըիչն իբր զնախանձոտ , և զառա-  
 քինին իբր զաննշան մոլի ոք յօրի-  
 նէիր , — յերկոսին ևս միօրինակ լտան-  
 գաւոր : Գեղեցիկ իմն տողեաց զքէն՝  
 որ ասացն թէ՝

Կայցէ բու ուրեք այնքան լուսատեաց  
 Ոքան աստ մարզիկ են իմաստնատեաց ,  
 Ոք կոյրք զկուրայն ՚ի կորուստ փութան .  
 Տանչին չարաչար և չըզդուշանան :

Զի ազատիշխան ընտրութիւն կսմաց  
 Զոր տայ բանեղեաց Բարին աննախանձ ,  
 Անհարկ ՚ի հարկուց կաւ Աստուածաբար  
 Վարեն վատթաբետլք ՚ի կորուստ անձանց :

Սրանան ՚ի թես՝ սրարշաւ Մտաց  
Անդր քան զահեղ Ատեան Կարելեաց ։  
Լծեն զբարձունս ընդ խորս անդնդոց ։  
Եւ դուրոյն գչափ կշռեն յարգանաց ։

Այլ ինքեանք ՚ի չափ անդ անչափանան ։  
Զամենին կրեց խղն զերասան ։  
Ուստի կատաղի Ցանկութիւն չարեաց ։  
Գլըլէ ըզնոսա յայս զեհ խոհերաց ։

Այն ձեր ախտակիր բանի անդրանիկ ։  
Այն կոյր ընտրութեան խառնածին Պարիկ ։  
Որ մեղաց իւրոց առ դատակընիք,  
Մահու պարարել զիւր յու շկապարիկ ։

Օընանին աստուօտ, և ՚ի յԱստուածուստ  
Մեղք մեղկաղիսաց ինքնազիւտ կորուստ ,  
Այլ քեղ պատանի՛դ՝ թհղ համարեսցի  
Վերագոյն ըարի՛ ՚ի չարէդ փախուստ ։

Օ այսպիսիս խօսեցաւ ՚նա ՚ի միտո  
իւր . և յուշ բերեալ զոր միանգում  
ասացեալ էր աղջիկն՝ զդիւթական ,  
տինա թէ և զդիւական հնարից Հօրն՝  
խորհէր ելս գտանել յանելանելի  
դժոխոց անտի , և ազատ գնալ առ  
սիրելին Վարսենիկ . որոյ հոգք ե

մոտածութիւնքն զիւրմէ՝ առաւելուին  
քան զինքնափորձ տառապանս իւր :  
Հայթայթեաց եղիտ իւր յականին  
դամս մեծամեծս վարսեալս ընդ որ-  
մունս նորա . և լամբս երկալթիս ըզ-  
նոքօք յաղթս : **Փամալաճառ** եղե  
շատ , մինչ կորզեաց ՚ի բաց՝ զմի կամ  
զերկուս ՚ի նոցանե . երեր արտաքս  
թերես ընդ որմնն ՚ի վեր՝ աստիճանս  
ձգեսցէ վերելից իւրոց : **Վոռացեալ**  
էր գուցէ զյարաբարդ և զմէջ ընդ  
մէջ խրամախոր յաջորդութիւնս պա-  
րսպացն . բոյց և այնպէս ստիպեալ  
՚ի հարկէ՝ թէ կարող , թէ անկարող ,  
ձեռն ՚ի գործ աղատութեան արկանէր .  
թերես փրկութեան հասանիցի :

**Օ** օրն բովանդակ աշխատելով հա-  
զիւ Հայթայթէր ՚ի ծայր միոյ ՚ի պա-  
րսպացն ելանել , մինչ ահա որոտ ինչ  
Ճիւաղային , նման ոռնալոյ գայլց  
քաղցելոց թնդայր ընդ ունկն նորա .  
**Աճապարեալ** **Գուրգենայ** յինքն ձլ-

գետաց զգամս և զառասանն՝ որով ՚ի  
 վեր ելեալն էր, և անշշունչ կայր մնայթ  
 ելից կատարածին հետազօտ : Որոտ  
 ահազի՞ն դարձեալ, և ահա փեղկք  
 դրանեղեացն շոնչմամբ մեծաւ անկան .  
 և ՚ի ներքս մտին գունդ յուշկապար-  
 կաց ընդ առաջնորդութեամբ Աարա-  
 ւաղինայ . որ արդարեւ գլուխ յեղ-  
 ջիւր աւարտեալ, և ոտք յեղջիւր  
 ծայրացեալ՝ գլխակաշի ընձուց և վա-  
 գերաց լի անհամար բժժանեօք և դիւ-  
 թական կերպարանօք այլանդակեալ  
 զանձամբ նորա, լար օձագալար յո-  
 տից ցգլուխ խռուեալ՝ զօրէն Աիպայ  
 վախճանարար չաստուծոյ Հնդկաց՝  
 առնէին զնա արդարեւ բանսարկու մեծ  
 ՚ի խռան խառնագէմ ձիւաղաց իւրոց,  
 գիւանման տարագելոց ՚ի նմանութիւն  
 կապկի, վեշտպի, յուշկապարկի, և  
 այլոց սոսկալի նմանութեանց՝ ընդ  
 որս սարսէր և նոյն ինքն բնութիւն :  
 Որք խառնիխուռն յարձակմամբ, և

Ճիւաղաձայն ուռնալով ՚ի ներքս մը-  
տեալ հանդիսեցին նախ զսանգարա-  
մետական իմն պարոյր գժոխային մար-  
զից իւրեանց , որովք սովոր էին միշտ  
ահարեկ առնել , զորս միանգամքածն  
յայն գտուագիղ հրապուրէր , և ապա  
կողոպտէին և կորուսանէին զնոսա 'ի  
հմայս իւրեանց :

**Ա.Յ.Լ** իրբե աչք հարան դէպ ՚ի  
դուռն բանտին բացելոյ . և ականին՝  
որ ՚ի ներքոյ , գոզջիթ զմոլիխինով ար-  
քեալք՝ զիրերօք հարան անհնարին  
կատաղութեամբ , **Ե.Հ.** ՚ի ներքս մտեալ  
և զդուստրն զ իւապետին գէշ գտեալ  
նեխոտ և ՚ի մէջ զազրանաց անկեալ՝  
աղաղակ ահագին բարձին : **Ա.Կ.** էր  
տեսանել զլլարաւազին յաղթ ուռամբ  
՚ի վերայ յարձակել նորա՝ որ սալար  
սատանայից անուանէր , և միով հար-  
ուածով զի տապաստ յերկիր կործա-  
նել զգիւակից զիւթութեանն , “**Օ ի**  
հմայս չար հմայեցեր ինձ , ասէ ,

Դաւ . որ առացեր թէ ցարդ Գ.իւլ-  
 սում զԴուրդէն ապիստեաց մեզ ՚ի մո-  
 միայ . և ահա նա չիք . և սա ընդ մե-  
 ռեալս համարեցաւ .” Մինչ բանք ՚ի  
 բերան էին նորա , և սալար սատանայից  
 ՚ի ճապաղիս արեան թաւալէր՝ յոգիս  
 ապաստան , մի ոմն ահռելի յուշկապար-  
 կաց անտի յառաջ մատուցեալ՝ շամփո-  
 րեաց , ՚ի նա զհաստաբուն նիզակ իւր ,  
 և թոքաթափ արտր զնա՝ որպէս երբեմն  
 Հոյկազունին մեր Տիգրան՝ զաստու-  
 ածացեալն Աժդահակ , Ապա խուժան  
 արբանեկաց երկաքանչիւրոց նոցա ըստ  
 երկրածին հսկայիցն առաջնոց . կամ  
 սերնդոց Որմզդան և Արհիման՝ որք  
 ՚ի կորուստ մարդկան միայն միաբանք՝  
 այլ բնութեամբ իրար հակառակք՝  
 կատաղի սրտմութեամբք զիրերօք հա-  
 րան և ՚ի միմեանց սատակեցան . մինչեւ  
 մնաց մի ՚ի նոցանէ , որ վէրս սաստիկս  
 ընկալեալ յաջոյ ընկերին՝ թաւալ-  
 գլոր մեկուսանայր ՚ի միջոյ դիականցն

անկելոց . ՀայՀոյթէր ՚ի բաց գնել  
զդիմակն դիւական , և մարդկօրէն դար-  
ման տանել հարուածոյն :

**Յայսլայր Գուրգէն ուշ եղեալ**  
կատարածի իրաց՝ հրեշտակօրէն կա-  
րեկից լինէր անմտութեան գործոց  
նոցա . Թէպէտե կամաւ կորուսելոցն  
անհնար էր օգնութիւն : Բայց իբրև  
ետես զապրեայն ՚ի մռելոց մերկանալ  
զդիւութիւն , և մարդկօրէն հեծել ընդ  
ցաւօք՝ քաջ կշռեալ զզօրութիւն իւր  
ընդ առն ՚ի վտանգի կինացն՝ ձայնեաց  
՚ի վերուստ . “Ապաշաւեաց Հողեղէն ,  
Աստուած ՚ի փրկութիւն փութայ քո ,”

՚ի վեր Հայեցաւ այրն կրօնական  
ոքանչանօք . արդարե զոգի անմար-  
մին համարելով՝ ուստի յանակնկալս  
լսէր զձայնն . և ասաց : “ Դեռ ևս  
փրկութիւն կայ ինձ . փառք քեզ Տէր ,”  
Ընդ այս նաև Գուրգէն զարմացաւ ,  
զի գրեթէ ակն ոչ ունէր այսօրինակ  
դաւանութեան ՚ի դիւէն . ուստի և աւ-

սաց, “Առյ տակաւին փրկութիւն քեզ եթէ այր իցես ;” Եւ ընդ ասելն՝ ըզ ծայրէ պարսպին պնդեալ զմի ՚ի գամացն՝ էջ առասանեաւ՝ ՚ի վայր, և ասաց “Խրան դու ՚ի դիւաց անտի չես :”

“Ո՞չ տէր ,” պատասխանեաց նմայրն, այլ սերկեան կալանաւոր միայն :

Առ որ փութացաւ քաղեաց իսկոյն բայս սպանդի, թրմով նորուն լուաց յստակ զվերաբերանս անկելոյն, պատառ հատեալ ՚ի դիականց անտի սպանելոցն՝ պինդ պատեաց զայնս, և հեշտիկ իմն հանդուցեալ զնա ՚ի խրչտիսն՝ եհարց, եթէ մարթ ինչ էր ամոքել իւր նախ զսաստկութիւն քաղցոյն . զի գրեթէ նքթեալ էր ՚ի բազմօրեայ անսուաղութենէն :

“Տէր, և ես ինքն սերկեան կալանաւոր գոլով՝ որպէս և ասացի, անտեղեակ եմ վայրացս . — Բայց եթէ յառաջեսցես դէսկ ՚ի շրջան նեղուցիդ՝ որ հանէ ՚ի սրահ անդք գմբեթակապ

յարկին, գիտեմ զի ճաշ Ասրաւա-  
զինայ՝ զոր բարձեալ բերաք՝ ՚ի պատ-  
րաստի գտանես անդ . առ և կեր :

Գրուրդէն առեալ զմի ՚ի նիղակացն  
անկելոց և զսուսեր՝ վառեցու նոքօք  
յապահովութիւն ապագայ վտանգի  
երիք . զի ովլ խոստանայը նմա զիսաղա-  
ղութիւն 'ի խառնարան խօղականացն,  
Եւ խորտակեալ զպիտանիս ՚ի մնա-  
ցորդացն, զի մի զոյժ ախոյենին յա-  
ւելուցուն՝ գնաց, եգիտ զծրար մեծ  
յոյժ՝ լի հացիւ, և առ նմա անկան  
մեծ խուփ ՚ի բերան կափուցեալ .  
զոր իբրև երաց, — մչքդ ՚ի բարին . զի  
ահա որոջ պարարակ ճարպովին խորո-  
վեալ ողջ . և գաւաթ լնդ գաւոյ գին-  
ոյն առընթեր եդեալ :

“Տնւք զինի տրտմեցելոց” ՚ի միտս  
անկաւ Գրուրդենայ . վասնորոյ քաղ-  
ցիալ և անսուազ որպէս և էրն՝ յաւուրց  
բազմաց, ճշմարիտ Հայկազնութեամբ  
նախ զդիս անկելոցն հաւաքեաց կար.

գաւ ՚ գուր ինչ՝ որ առնթեր և ամփո-  
 փեաց զնոսա, Ապա գնաց և Տրդատօ-  
 քէն ուս ՚ի ներքս տուեալ վիրա-  
 ւորին՝ ած լնկողմաննաց ՚ի տախտին .  
 առ լի գաւաթաւ գինի՝ մատուռակեաց  
 յումպ նմա . և Հուսկ ուրեմն ինքնին  
 նստաւ ՚ի վայելս պարգևաց բարու-  
 թեանն Աստուծոյ . և կերաւ որքան  
 ինչ և պիտոյն էր : Արբ նա և ՚ի  
 գինւոյ անտի , և դեռ գաւաթ ՚ի ձե-  
 ռին էր՝ մինչքուն ինչ անուշակ կալաւ  
 զերկոսին , և Հանգոյց զնոսա յաշնա-  
 տանաց աւուրն :

---

Գլուխ ԺԵ:

Աստուած զուգեաց , Մաքղ մեկնեացէ  
Զիս 'ի գրկաց Դիւցազին .  
Բարեաց որոյ կցորդ եղէ ,  
Զլինիցիմ և չարին :

ԵՐԱՋԼՆԴՀԱՆ Վարազուն Արտա-  
շատայ մարգարէ ոք լինէի . Թէ նստեալ  
Ճառէի քեզ մի առ մի զանրջոց Հըս-  
կային 'ի քուն՝ յաշխարհ անդ ոգե-  
ղինացն . և թողուի զՎարսենիկ ան-  
փոյթ եղեալ կամ մոռացեալ զԳուր-  
գէն զիւր մի միայն Քաջ արանց : —

Խըրե դարձաւ Հասօ 'ի տուն ,  
երես կնճռեալ տիսրութեամբ , սիրտ  
հիւծեալ , և աչք արտասուօք լցեալ՝  
զհարցն առաջին՝ զոր արար նմա հրա-  
շակերտն 'ի կանայս՝ էր , թէ՝ “Ո՞ւր  
արդ եօք իցէ Գուրգէն : ”

“Ո՞չ նա ընդիս ել 'ի գործ , ” —  
պատասխտնեաց նմա Հասօ , “և 'ի մի-  
ասին չհասաք ցհրապարակ անդը , —  
Ո՞հ Տէր : ”

Վ. Պ. “Այս լնդ քեզ ել. և հասայք ասես, ի՞ հրապարակ անդր. բայց էր քոյ այդ աւաղումն աղու :”

Հ. “Օ ի վիճակեցաւ ինձ արտաքս քան զքաղաքն ելանել ’ի վըրանս Վ ալէթայ—զկնի թողի զնա . և չգիտեմ, զի՞նչ պատահար չար կալաւ զնա :”

Վ. Այս Հասօ, մի: — չար մասն չունի բնաւ լնդ Գառրգենայ միշտ բարւոյ . գուցէ անժանօթ փողոցաց և կրկնոցաց քաղաքիս՝ յանկեան ուրեք մոլորեալ՝ յամէ զգալն . ել ’ի ինդիր նորա . ել :

Հ. “Գիտես Տիկին, թէ զիարդ սիրեմ զՏէր իմ, —սակայն —”

Վ. Այս. “Աէր զսակայն ոչ գիտէ . եթէ արդարեւ սիրես զնա՝ Հասօ՝ ել. տես ուր արդեօք իցէ նա :”

Հ. “Արտաքոյ խնդրանաց իմոց, Տիկին, զի—”

Վ. Այս. “Ի վրանսն Վ ալէթայ :”

Հաս. “Ո՞չ ո՞՛”

Վարս. “Ո՞ւր ապա մանուկ. և զի՞նչ  
այդ քո Օ ի—,”

Հաս. “Օ ի լուսոյ թէ Ալտընուշ  
որսացաւ այր մի՝ ’ի կնոջէ դիւին,”

Վարս. “Պարզ ասա, Հասօ. զի՞նչ  
Ալտընուշդ իցէ, և զի՞նչ կին դիւին.  
ցնորիս թուի,”

Հաս. “Եմ Հօր գերեղման—զի զոր  
լուսոյ զայն խօսիմ, —Ալտընուշ դը-  
մոխք դիւաց է, ուր կանայք նոցա  
որսան զմարդիկ և կեան լերդօք նո-  
ցա,”

Վարս. Տարտամ ես դու, և դեք  
քո, Հասօ, չասացի բա թէ ցնորիս,”

Հաս. “Հա Վալլահ. —ամենայն  
Տուն Վալէթայ զիս բանիբուն ճա-  
նաչէ, և դու միայն ցնորեալ: —Ասա-  
ցի թէ Ալտընուշ դիւաց դարան է. և  
թէ անդր որսացաւ նա. այլ զինչ,”

Վարս. Ով. Գուրդէն :

Հաս. “Ասեն այր մի, —Գուրդէն

**Թէ այլ ոք՝ ոչ գիտեմ:**

**Ա.** “**Զհարցե՞ր ինչ զնշանացն ,**  
**չկեացե՞ր ՚ի խնդիր . և ցարդ այդպէս**  
**ցուրտ և անփոյթ բաջաղես , Հասօ՞:**”

**Հ.** “**Հարցի . և նշան՝ զոր տան**  
**մարդիկ է՝ թէ այր մի որսացաւ ՚ի**  
**կնոջէ դիւին . Հասկացար;—Ելի ևս**  
**՚ի խնդիր , և եօթն սոխ յողորմու-**  
**թիւն բաժանեցի կարօտելոց .—Խեղձ**  
**մարդիկ , զիարդ փափագանօք լնկա-**  
**լան զայն . և փոխանակ աղօթեցին վա-**  
**սըն—Հոգւոյն :**

**Ա.** “**Օ ի՞նչ կամիս յայտնել ,**  
**Հասօ՞ . Գուրգէն սպանաւ ասես :**”

**Հ.** **Տէր մի արասցէ , Տիկին . Հո-**  
**վանի նորա անսլականս մինչև յաւի-**  
**տեան .—ոչ ասեմ թէ սպանաւ . այլ**  
**որսացաւ ՚ի դժոխս . գուցէ և լեր-**  
**դահան իսկ կորեաւ մինչ ցարդ , զի**  
**գեք զլեարդս ուտեն :**—

**Տաղտկացեալ Ա.** **արտենկան ՚ի տար-**  
**տամ և ՚ի կացկամ խօսից աստի Հա-**

սօյի , որոշեցաւ 'ի սենեակ իւր առանք  
ձինն . և սրտառուչ աղօթիւք սպա-  
սէր դեռ գարձի սիրազնին , այլ 'ի զուր:  
**Թ**աւալեցան յաղթ և յամբ հոլով-  
մամբ ժամքն գիշերականք , և գամ-  
քան զկամ ծանրացան 'ի վերսոյ հո-  
գւոց և խորհրդոց **Չ**քնաղին : **Ա**չ  
նիրհ արտեանաց տուեալ , և ոչ հան-  
դիստ իրանաց՝ լսյր գառնապէս . և  
կանխէր առ **Ա**ստուած սրտառուչ  
մորմոքանօք . գառնայր և Հնարս  
Հնարէր . թէ ուր , կամ զիարդ գտա-  
նիցէ զ**Ա**րին կաթոզին :

**Ա**յդ զցայգն մերկանայր , և նու-  
րահար շառաւիղք առաւօտեալ **Ա**րե-  
ւուն գեռ նոր զօծանէին զձիւնահեր  
գագաթս լերանց յոսկի և քրքում ,  
այնինչ զարթուցեալ **Ա** արսենկանն  
զհասօ 'ի մեռօրինակ թմրութենէ  
խորդալոյն՝ յորդոր մատուցանէր նմա-  
զհետ գալ ինքեան : **Ա**յլ անարին  
կէս քուն կէս արթուն՝ զաչս շփէր

ասելով “Ես զհետ քոյ և յիւրաքանչւ, քան եթէ եկից, ” Անդ և հանի նորա պառաւ պայտապաշտ՝ յանուն տեղոյն և եթ սլակուցեալ եխից մատամբք զականջս իւր՝ և ասէ . “ մի և մի ընտաւ գուտոտր իմ, յիշեսցես գէթ զայդ անուն . գուցէ դիւաց լուեալ և լերդահան կորուսցեն զմեզ , ”

• Ի նանիր վաստակեցաւ Վարսենիկ Համոզել զնոսա գէթ յապարանսն իշխանին . թերես զձեռն օգնականութենորա գտանել մարթասցի ՚ի թիկունս իւր . այլ չեղե հնար : Օ ի երկնչէին թէ մի գուցէ Վալէթ արտասուաց Վարսենկանն ապաժոյժ՝ կամ անձամբ զանձըն ՚ի վտանկ արկանիցէ , և կամ զցասումն սրտմտութեան իւրոյ ՚ի գըլուխս իւրեանց կարկտեսցէ : Տեսեալ խորհականին թէ ոչ ողբք և ոչ բողք իւր աղդեն ինչ՝ առ քսակաւ լիսկի , զանձամբ սփածաւ զշղարշ , և դերեսօքն առեալ զդիմակն՝ ել մէն

միայնակ 'ի փողոցս Արտադուաբայ՝  
գեպ յապարանս իշխանին : Անդ ըզ-  
ճանապարհայն պատահեալ ջրուոր կա-  
նանւոյ որ կուժ և կամփսակ յու-  
սունս ջուր կրէին և ցանէին 'ի բակս  
և դարբասս տանց , առ 'ի զնստումն  
փոշւոց՝ և 'ի սուրբ , վարձու կալաւ  
զոմանս 'ի նոցանէ՝ յառաջնորդ ին-  
քեան՝ առանց ումեք ինչ յայտնելոյ:

Վալէթ վաստակեալ յերեկեան  
որսոց անտի և վրդովմանց՝ դեռ նոր  
յառնէր յազօթս իւր . այնինչ յան-  
դիման եղե նմա Ազուանուհին Վար-  
սենիկ՝ շփոթ իմն , այլ շնորհաշուք  
յարգանօք , “Իշխան Անեծ , յաւի-  
տեան կաց .” ասաց : “Օ որ սիրէիր  
զԳառւրդէն , ոչ ուրեք գտանի զարդիս ,  
Յետ Աստուծոյ Ամենակալի՝ զօգնու-  
թիւն 'ի նեղութեան պաղատեմ զԱԲոյ .  
ո՞ն հապայ՝ օր նեղութեան ինձ , և  
տիւ տեսուն շնորհաց Հօր՝ իշխանի՝  
և պաշտպանիդ մերոյ : — ”

“Մի շփոթիր՝ Հարսնիկ, մի. — դռւցէ ՚ի կոչ ուրեք գնացեալ իցէ, և յամեցուցեալ զգալն ՚” ասաց Ալէթ ցԱլ արսենիկ :

Ալ “Ոչ Տէր, ասեն, թէ յԱտընուշ իմն որսացեալ իցէ Արիս. և բաղայս անհնարինս յեղոն ՚ի լուր զայնմանէ, — բայց զի՞նչ սնոտիք ասից և ցնորից ազգիցեն հանձարեղ և հզօր Տէրութեան քոյ :”

Ալ “Տիկին. յԱտընուշ որսացաւ ասես Գրուրդէն, ախսոս մարդ . և հնար ինչ մահկանացու զօրութեան կորպել ՚ի բաց զոք անտուստ :”

Ալ “Օ ի՞նչ զժուարանայ քեզ Տէր, եթէ միայն հաճոյք իցեն :”

Ալ “Խանդաղաղատանք քո՝ Տիկին, ըստ չափ անցանէ բանին, ուլերբէք յԱրտաշըէ Ատահրացւոյ Ասսանեան և այսօր համարձակեցաւ ոտնկոխել անդանօր . և զերամ երամս խօլից ցնորականսց յարուցանել ՚ի վեր-

այ անձին և տան իւրոյ :

Ա սւ. “Տէր իմ ինքնին ասաց արդ՝  
թէ խօլքն ցնորականք են . ցնորք ան-  
գոյ և անմարմին մտածութիւնք են  
միտյն . Ճնունդք Երկիւղի և խան-  
գար Երեակայութեան մարդկան . և  
զի՞նչ կարիցեն առնել ընդդէմաշկեաք  
և իրացի կարողութեան աջոյ քոյ : ”

Ա սւ. “Ասացի թէ ցնորք են , և  
ցնորս զնոսա ասելով՝ ոչ կամիմ յայտ  
առնել թէ անգոյ էակք ինչ իցեն , այլ  
թէ՝ անմարմինք են . Հզօրագոյնք  
քան զբաջս ’ի մարդկանէ , ահտեսա-  
նելիք յաչաց՝ և անլմբռնելիք ’ի ձե-  
ռաց . որ կեան լերդօք մարդկան մի-  
այն՝ և ածեն զահ և զարհաւիրս իւր-  
եանց յաշխարհ ընդհանուր : ”

Ա սւ. “Եթէ խօլք կամ ցնորք  
անմարմինք իցեն Տէր . զիարդ ա-  
պա կեալ Համարիցին մարմնեղէն լեր-  
դօք . Ասացի բամ , թէ չեն . և  
Տէրութիւն քոյ յօգնել իւրում ինձ՝

Քրկէ զաշխարհ Հայրենեաց :— Յիս  
լեռ Տէր— :”

Վ աւ “Պարզ ասեմ քեզ , Տիկին ,  
եթէ ես համոզեցայց անդամ յաղա-  
չանս քո , տակաւին մի միայն մարդ-  
եմ . և զինչ առնել կարացեց լնդ-  
դէմ բազմութեան խօլականացն , ո-  
րոց ոչ զօրք գիմագրաւ ելանեն , և ոչ  
արհեստք ինչ ազդեն : Եթէ Գուր-  
գէն որսացաւ անդր , ափսոս մարդ ,  
ցարդ ևս լերդահան կորեաւ արդիօք .  
և զինչ օդտիցուք մեք զկեանս ՚ի  
վտանդ արկանելով առ ՚ի գիւտ դի-  
ւատանջ դիոյ նորուն :”—

“Ուրեմն ամենայն յոյս իմ հատաւ  
՚ի մարդկանէ ,” ասաց Վ արսենիկ , և  
նուազեալ ու շաթափեցաւ և անկաւ :  
Մասանամ Տիկին Վ ալէթայ՝ որ  
գրեթէ քեռացեալ լնդ Վ արսենկան  
ազիխորով մորմաքէր ՚ի վերայ աղե-  
տից նորա՝ բուռն եհար զնմանէ , և  
զգլուխ ՚ի գոգ հանդուցեալ՝ յու շ

դարձոյց զնա , և ասէ . “մի լար Ա ար-  
սենիկ . մի լար . պանդուխտ և օտար  
որպէս և եսդ՝ տակաւին զՄ ասանամ  
ունիս քեզ ՚ի քոյր . որ կարէ հոգալ  
զհանդերձեալ կենաց քոց՝ և վերստին  
ամուսնութեամբ բարւոքել զվիճակ  
կենցաղավարութեան քոյ : ”

Ա սր . “Ընորհ ունիմ մխիթարուն  
քո այսմիկ . Տիկին ՚Բոյր . և եթէ  
արք , նա մանաւանդ թէ քաջք ՚ի նո-  
ցանէ . Գուրգենայ իմոյ նմանք , այն-  
քան դիւրագին ինչ լինէին մեզ , որպէս  
Տիկնաց ընդ Երան և Տաներան , ոչ  
այնքան մորմոքանօք թախանձէի ըզ-  
տէր քո և զպաշտպան մեր՝ զարքայ ; —  
Բայց արդ թուի թէ՝ արութիւն Մա-  
րաց բեկաւ . և Տէր իմ Արքայ , որ  
առիւծ Հզօր ՚ի մրցմունս պատերազ-  
մաց՝ սնոտեօքն զարհուրի , պաղատա-  
նաց հեծութեանս անլսու : — Ի իցի .  
այլ Վարսենիկ՝ որ ընդ Գուրգե-  
նայ փոխանակեաց զմեծ իմն ժառան-

գութիւն քան զմիջոց երկուց գետոց Միանդուաբայ՝ կամովին յաւելու ՚ի նա և զկեանս իւր.— Մնայք բարեաւ : ”

Այնպիսի իմն անդրդիւն հաստատութեամբ խօսեցաւ Ակայուհին Աշուանից , մինչ զամօթի հարաւ Ալեկթ յակումբ կանանւոյ իւրոյ . բայց և այնպէս քաջ ծանօթ լինելով հանգամանաց տեղւոյն և հաւատոց ժողովրդեանն՝ յայտնի հրամայել ոչ իշխէր . զի մի զազգն զառածեաւ դիւրահաւանութեամբ և մնոտի զարհուրանօք՝ լնդգէմիւր ապստամբեցուցանիցէ : Ա ասն որոյ հնարս հանձարեաց նորս և զարմանալիս . զի համբաւեաց որպէս թէ երկնաւոր ինչ զօրութեան երեւեաւ ինքեան ՚ի տեսլեան երազոյ՝ տուեաւ իցէ իւր իշխանութիւն ՚ի վերայ այսոց պղծոց : Աւստի և քարոզ կարդաց ՚ի քաղաքին , “զի որ միանգամ սիրիցէ զԱլեկթ և զտէրութիւն Ա ա-

բաց, առեալ բահ՝ փայտատ՝ և ուռն՝  
և մուրջ՝ զհետ եկեսցէ իւր դէպ ՚  
սահման Ատրնուշայ, ուր պահին հմայք  
յաւիտենից, ասէ, և զինուց և զարդուց  
նախադամեան թագաւորացն առաջ-  
նոց: “Ես մանաւանդ զի՝ և Արին Հայ-  
կազուն Գուրգէն՝ Պեղանդ քան  
զիւստամ Աագձին, արդէն իսկ միայ-  
նակ նահատակեալ՝ քաջութեամբ ’ի  
ներքս եմուտ, և զորեան դիւանւոյ  
հալածեաց անդուստ :”

Ուստի ’ի վաղիւ անդը մերձ հա-  
զարաւոր վրան բանակ հարեալ ’ի դաշ-  
տին. մուրջ ’ի ձեռին նախագրաւ հան-  
դիսացաւ Ալէթ դէպ ’ի պարիսպ անդը  
դիւթական Բաւղին. զոր տեսեալ խու-  
ժանին զառաջինն զահի հարան, համա-  
րելով թէ գունդ դիւաց շուրջ պաշա-  
րեալ զնովաւ՝ անդէն և անդ լլկէին  
զնա լեւդահան կոշկոճանօք . բայց  
առնացիք ’ի նոցանէ զիշխան և զզօրա-  
վար իւրեանց այնօրինակ շահատա-

կեալ տեսանելով՝ յամէն ուստե՞ք կուշ  
սէ գրոհեցան անդանօր . և այր իւրա-  
քանչիւր զձեռն ՚ի գործ արկեալ փլու-  
ղանէին իջուցանէին և ՚ի վայր կոր-  
ծանէին զամբութիւն ամբարտակին , և  
զյարաբարդ և տակուէտակ զպարսպաց  
հիմն յարեգակն հանէին :

**Ա**նդ էր տեսանել Ա արսենկան  
արծուօրէն խոյանալ ՚ի վերուստ փլա-  
ծոցն անհամեմատ արութեամբ սրտի ,  
և նախ առաջին հանդիսանալ որոց ՚ի  
ներքս անդ Պ. իւարանին մտանէին :

“**Ա**ռը յառնէր Գրուրդէն յանուշակ  
քնոյն , այն ինչ զահի հարեալ վիրա-  
ւոր ընկերին՝ գոչեաց , “**Տ**ես զի՞նչ  
այս դոփիւն և դրոփիւն ոտից կամ շկա-  
հիւն մրջոց՝ Քաջ . տես զի՞նչ այս , —  
մի գուցէ դեք վերստին կենդանացան  
տանջել զմեզ .” —

Գառագ . “**Ա**րիամիտ կաց , եթէ  
իմոյ ձեռին թաղածք են՝ ոչ երբէք  
յառնեն .”

“Յուշտէր, յուշ, և զի՞նչ ապա  
այս ամենայն ազաղակ :”

“Կաց տեսից ,” ասաց Գռուրդէն . և  
այնինչ ած զսուսեր յազգեր իւրում,  
և յաջ կալաւ զնիզակն հաստաբուն ,  
ահա Ալ ալէթ խուռն բազմութամբ  
խուժանին ՚ի ներքս անդ գրոհեցաւ ,  
Օ առաջինն առաջօք տեսիլս Համարէր  
զնոսա Արին , մինչեւ ապաժոյժ ՚ի խանե-  
դաղատանաց՝ Վարսենիկ , յառաջ մա-  
տուցեալ փարեցաւ զպարանոցաւ Ար-  
ւոյն , և ուշաթափ անկանէր : Ալէթ  
անդը քան զպայման մարդկային կրից  
խնդամտացեալ ընդ արարս քաջու-  
թեան իւրոյ և ընդ գիւտ Գռուրդէնայ՝  
զոր այնքան սիրէր , արձանացաւ ամե-  
նայն վեհափառութեամբ իւրով՝ իրեւ  
զահեղափառ Արքայն տունջեան , ՚ի  
փաղփիւն միջօրէից : Հրամայեաց յա-  
րուցանել զԱ արսենիկ՝ իրեւ զսկզբնա-  
մայր Հնարից և Հրաշիցն , որով աշ-  
խարհն ազատեցաւ ՚ի տոռանոց անտի

Եսօլական զարհութանաց : Ե՛ւ առ 'ի  
 ցոյց իւրումն վեհափառութեան , որ-  
 պէս և 'ի ստուգութիւն համբաւոյն՝  
 թէ ինքն զինուորեալ իցէ զԳուրգէն  
 ընդ դէմ գնդի դիւաց որջացելոց ան-  
 դանօր , հան յանձնէ զծիրանիս իշխա-  
 նական և արկ զնովաւ . և զմատանին  
 եղեալ յաջ Ա արսենկանն՝ կարդաց  
 զնոսա տեարս Յ տրնուշայ , երկրորդս  
 ինքեան , և փրկիչս Մ իանդուաբայ :  
 Բ նդ որ զուարձացեալ ամենայն բազ-  
 մութեանն ծսփաճայն խնդակցութք  
 դրուատեցին զհանդէսն մեծ : — Փա-  
 րաւօն մարացի վերտառելով զԱ ա-  
 լէթ , և Յովսէփ Մ իանդուաբայ  
 զարին մեր Գուրգէն :

---

Գւահի Ժաք:

Զի անցեալ՝ չարչարանք՝ անհնարին  
Տան պսակ՝ պարծանաց՝ յաղթողին :

Ի ՎԱԴԻՒ անդր գործավարք առ  
մենային արհեստից՝ Հրամանաւ Ա ալէ-  
թայ զեղան յլուրնուշ՝ ցայնվայր Պ.ը.  
ժոխք Պահւաց համարեալ . և լստ ընտ-  
րանաց Գուրգենայ և Ա արսենկանն  
ձեռն ՚ի գործ արկին փլուզանել զա-  
մենայն , և նոր ՚ի նորոյ ամբառնալ  
ապարանս իշխանականս . աստի և ան-  
տի ածելով զոյգիս որթոց , զպարտէ-  
զըս ծառոց և բուրաստանս ծաղկանց  
անուշից : —

Ո նորեաց որոշեաց Գուրգէն Ա ա-  
լէթայ զայն ամենայն ՚ի կահուց և կա-  
րասեացն , զորս կողոպտեալ դիւացե-  
լոցն ՚ի մարդկանէ՝ դիզեալ էին խորշ  
՚ի խորշ Պահւարանին , զորոց պէտս  
ոչ ունէր . Եւ այն ամենայն համարե-  
ցաւ նմա անբաւութիւն ինչ գանձուց ,

առաւել քան զոր տալ կարէր եօթնաս-  
մեան հարկ աշխարհին . ՚ի Ա ըկանէ  
մինչ ՚ի օրցն Պարսկային ,

**Օ**ր առուր Ճոխացեալ Գուրգենայ  
երկրաւոր հարստութեամբ , որպէս և  
երկնաւոր առաքինութեամբքն՝ քաղց-  
րութեան վարուց , մարդասիրութեան,  
արիութեան սրտի , առատաձեռնու-  
թեան և հասարակախնամն իշխանու-  
թեան : Հազիւ ուրեմն զմտաւ ածէր  
զոր միանդամ լուեալ էր 'ի դստերէ  
**Ա**րաւազինայ յաղագս վեցանկիւնի  
աղեղան , գաղտուղի մտիցն՝ որ 'ի ներ-  
քոյ նորա , ականին մեծի , և գան-  
ձուց կուտակելոց 'ի նմա : — **Բ**այց  
յաւուր միում , այն ինչ Հրաշաբանէր  
**Ա**րսենիան զանցս որոգայթելոյն իւ-  
րոյ 'ի բաւիլ անդր , և գլուտեր գիւա-  
պետին գաւաճսնութիւն , յաւել ա-  
սել նաև՝ թէ լուայ այսպիսի ինչ ՚ի  
նմանէ : **Խ**սկ **Ա**րսենիկ , որ յարքու-  
նիս ծնեալ և սնեալ , առաւել զիտէր

զարքունեաց զայր և զական զդանձուց՝  
քան զԱրին աշխատասէր, սլատասխա-  
նեաց, “Գուրգէն իմ,—Ակը ուր և  
եցէ՝ անպատրուակ է, եթէ ոք զանձն  
իւր նուիրիցէ՝ զանձինն ոչ անխայէ :  
Գուցէ հաւաստեաւ իցեն բանքդ :—  
“Եթէ վերին Խնամոց սահմանեալ  
եցէ՝ ի վայելս մեր զհինաւուրց հարս-  
տութիւն, թէ դեք իցեն սպասաւորք  
կամաց նորա՝ և թէ Հրեշտակք՝ մեզ  
փոյթ չիք, գոհութեամբ ընկալեալ  
’ի փառս Բարերարին վարեսցուք :  
Օ՞ն ’ի փորձ :”

**Օ** այս ասացեալ Հրամայեաց ցա-  
մաքեցուցանել զաւազան ջրոյն՝ որ  
կայր՝ ի միջավայր Ատրնուշայ, որ-  
պէս թէ մաքրել կամիցի զմամռապատ-  
կանաչութիւն բորբոսացեալ սալաքա-  
րանց յատակին, և հասեալ ’ի վէճն  
աղեղեայ՝ Հրամայեաց դուլ տալ մշա-  
կացն, իբրու թէ խարակել զայն կա-  
մլուլ յարեսյ : Խրըն մեկնեցան մլ-

շակք , 'ի բաց առեալ նորա զվէմն ,  
 եղիտ արդարեւ ստորերկրեայ իմն մուտ ,  
 որ առաջնորդէր 'ի սոր ինչ անդըն-  
 դային՝ ական հատեալ 'ի ներքոյ . և  
 շեղը լցեալ ամենաըքայական դրա-  
 մովք և համաշխարհական մթերօք ,  
 զորպիսիս չէր յերազի անդամ զմուաւ  
 ածեալ : Հիացաւ , և միայն Գուրգէն  
 էր որ հիացաւ . ապա թէոչ այնքան  
 ահեղ գանձուց ճոխութիւնք բաւա-  
 կանք էին զայր ճգնաւոր սին փառօք  
 ուռուցանել . Բելիարայ բարձակից ,  
**Օ** ի ով յանկարծ փարթամացեալ՝ ոչ  
 փքացաւ յանձն իւր , զարծաթ քան  
 զլուստուածն սիրելով :

**Գ**ուրգենայ միայն էր յատուկ **Տիգ-**  
 րանական վեհանձնութիւն , և **Ք**րիս-  
 տոնէալալայելուչ տնտեսութիւն բա-  
 րեացն **Ա**ստուծոյ առ աղդ մարդկան հա-  
 մարարած իւր : **Վ** ասնորոյ և առեալ ան-  
 տի որչափ ինչ և բաւական համարէր ,  
 վարեաց նախ առ ի պէտս շինութեան

լայնատարած և մեծանիտու Հիւրանոցին, որ սկսեալ յԱռարնուշայ հասանէր ցեղերսն Պղտթի զետոյ, կերտեալ Համակ եռատակ և քառատակ բարձրութեամբ՝ ՚ի կոփածոյ քարանց՝ քառակուսի ձեռվ, և քառեակ դարրասօք ընդ չորեք ճագեան կողմունս աշխարհի : Յարդարեաց ՚ի լոյնածաւալ բակին աւազանս ջուրց հանդէտ աւազանաց Գառւրդենաշտու Ապարանիցն Առարնուշայ, կահ և կարասիս կաղմեաց ուրոյն օթից և սենեկաց սրահից իջևանին, Համբարս արմտեաց կուտեաց, Հօսս ոչխարաց որոշեաց ընդ իւղ և մեղք բարութեամբ Հանդերձ՝ ՚ի կերակուր անցաւորաց ճանապարհին . դասս ՚ի դասուց արբանեկաց կացոյց անդանօր՝ ՚ի սպասաւորութիւննոցա . և օրէն ոլոյմանեաց անձին՝ նախ զնոսասարկաւագել ՚ի սեղան, և ապա ինքնին բաղմել :

**Ճոշակ հարաւ զնմանէ ընդ աշխարհ**

Համօրէն , անուն Գյուրդենայ և փառք  
առաւելան , ոչ միայն քան զլլ ալե-  
թայն , զլլ ենպետին Բաղդատայ , և  
զլլ շխանին Լերանց՝ որ ՚ի հաւալուց  
յիշամովտանն թառէր ՚ի բոյն Արծու-  
եաց , այլ ՚նա և քան զլլ այսեր Յու-  
նաստանի :

Գյուհհար Խաթուն վերաձայներ և  
Ապրսենիկ , ոչ միայն ՚ի սակս ասպա-  
րօշ անդամանդի կրելոյ ՚ի պսակ իւր ,  
որ քան թէ գոհարեղէն ազնուութեամբ  
բարոյիցն , հեղութեան , խոնարհու-  
թեան , և տնարար տիկնութեան : Բա-  
րերարք էլն այր և կին առ ամենայն  
մարդիկ , բայց զեռ և ընդ նոսա մա-  
խացաւ ՚նախանձն անագորոյն , և ե-  
րախտամուաց ամբարշտութեամբ՝ բա-  
նըս առ զեցանէ առ Ալէթ . իբրու  
թէ՝ “Գյուրդէն յինքն յանկուցանե-  
լով զորեան խուժանին՝ ՚նշկահել կամիք  
ինքեան , և բոնանալ ՚ի վերայ իշխա-  
նութեան աշխարհին :”

Ի սիրտ Վալեթոյ Օռւարթունք  
երկնից, և յոդի նորա Խորհուրդք  
Բարութեան՝ թէպէտ և ոչ ներէին  
քսուաց և բանբերաց ՚ի խոր հարստել  
զհարուածս դառնութեանց, սակայն  
և այնպէս՝ դեռ մարդ գոլով և կրից  
մահկանացուաց համարուն՝ սկսաւ սա-  
կաւ առ սակաւ կասկած տանել զԳուր-  
գենայ, և օր աւուր թուլանալ ՚ի սէրն,  
զի ՚ի շնորհսն բազմօք առաւելեալ  
քան զինքն ստուգէր զնա :

Որպէս միշտ պատահի կասկածուա-  
բռնաւորաց, նոյն պատահեցաւ զար-  
դիս և պատուական իշխանիս այսորիկ:  
Պլատորեալ ապականեցաւ աղբիւր անա-  
րատ սիրոյն, և ողողք ոխակալութե-  
գետացան ՚ի միտս նորա : Գայր եր-  
բեմն առ Գուրգէն հրապարակական  
փառօք, և փորձէր սլրպտէր թերեւս  
ինչ գտանիցէ ստոյգ ՚ի քսութեանց  
չարախօսից նորա : Ելանէր, ծպտէր  
զինքն տարազուց ՚ի տարազս օտարոտիս

Պայր յապարանս կամ ՚ի հիւրանոց նոռ  
ըա , խօսէր ընդ մարդկանն և կանանոց  
տեղւոյն , ձգէր առ ինքն զմանկտի և բա-  
նլս արկանէր զԴուրգենայ և Ա արսեն-  
կայ , թերես ս նշանախեց ինչ նենդու-  
թեան գտանիցէ զնոցանէ . այլ ոչ կա-  
րաց բնաւ . զի որ ուտէր անդ , որ ըմ-  
պէր , որ զգենոյր և որ սփոփէր , ամե-  
նեքին նախ զԱստուած ՚ի վեր օրհնէ-  
ին , և զԱ ալէթ ՚ի խոնարհ . զի այնպէս  
պատուիրեալ էր նոցա Գուրգէն :

Յետ զամ մի բուլանդակ թերանալոյ  
՚ի ներքին բարեկամութենէ Գուր-  
գենայ , և ընդ ակամբ արկանելոյ ըզ  
Ա արսենիկ և զհրաշակերտս յանկու-  
ածոց նորա՝ հրամայեաց Խորհուրդ  
հարկանել յԱպարանս Յայտնութեան  
՚ի հարաւոյ Ա իանդուաբայ , ուստի  
իբրև ՚ի բարձր ինչ դիտանոցէ հայել  
և տեսանել կարէր ոք ոչ միայն զանց-  
ուդարձ անդադար կտրաւանաց , որք  
գային և գնային ՚ի հիւրանոց Հայկազ-

նոյն , այլ և զբովանդակ Առաքելուշ ,  
իրեն զխան ընթերակայ :

Երեսք նորա՝ ոչ զուարթունք  
որպէս յերեկն և յեռանդն . սիրտ նո-  
րա ՚ դառնութիւն լեղւոյ , և աչք նո-  
րա զբոց բարկութեան ցոլացոցանէին  
յինքեանց : Առջեաց զառաջեաւ ըզ  
քսուս և զբանսարկուս յիշխանաց իւ-  
լոց , և եղ նոցս բարձ և պատիւ  
հաւասար : Ունայնացան նոքա յան-  
մտութիւնս իւրեանց . ամբարտաւա-  
նութեանցն՝ ոչ ոք դնէր չտփ : — Եւ  
այն ինչ խօսք վերստին լինէին զԳուր-  
դենայ՝ գոչեաց նա ՚ի ճայն ինչ ա-  
հաւոր և զարհուրելի , “ Ո՞ի բնաւզա-  
նուն Կորդացւոյն . մի բնաւ . — այլ  
ածջիք զնա այսրէն , ” Ո նդ ճայնիս  
դդրդեցաւ Յայտնարանն ողջոյն , և  
երկու կամ երեք յանալիտան որենոյ  
ինդացին լնդ այն :

Գ.Լ.Խ. ԺԷ :

ՀԱՅԻ ՀԱՅԻ ԻՆ , և ԴԱՅՅ ՀԱՅԻ ՏԱԿՐԵՆ :

**ԱՊՐԱՆՔՆ ՅԱՅՍՆՈՒԹԵան անուան  
ՆԵԱԼ՝ Ըստրան իմն էր միագլութէթ կա-  
մարեալ , ծակոտկէն և փոր որմովք  
'ի ներքուստ կողմանէ . ընդ որս տա-  
րած ծաւալէին յստորէ 'ի վեր թիթ-  
ղունք բազագրածոյ ամենայն ձայնեղ  
հրահալելեաց , և պոկք պոկք 'ի նմին  
նիւթոյ արուեստիւ դասակարգեալք  
աստ և անդ , իբրև 'ի նուագարանի  
զամենասուղ զսոսաւ իւն ձայնի , կամ  
զշուչ շրթանց ընդ յարկաւ նորա-  
բաղխմամբ օդոց յինքեանս ընկալեալ ,  
էր ուրեք՝ զի ճնշելով , և էր ուրեք՝  
զի քսելով մարմնացուցանէին զնոսա  
և թնդային 'ի լսելիս ունկնդրին՝ որ  
թաքուցեալ 'ի գաղտնի խորշ ինչ  
կամարին մե ծի՝ որսոց բանի դարանէր ,**

Ահա ՚ի քսոյ կամ քսելոյ աստի թերես՝  
 ծագեցաւ ՚ի մեզ քսութիւն, բաց ՚ի  
 քսելոյն, ՚ի ծեփելոյն, մածանելոյն  
 կամ յօծանելոյն՝ նշանակել զբանսար-  
 կութիւն և զբանբերութիւն։ Ա ասն  
 զի քսելով ձայնին զերեսօք թիթղանց  
 ձայնաւորաց՝ հասուցանէին ՚ի լուր  
 հակառակ կողման՝ զո՞ւ և իցէ դաղտնիս  
 խորհուղաց կամ խօսուղացն ՚ի ներքոյ։  
 Թէ դաշն սիրահարութեան լինէր,  
 թէ խորհուրդ պոտելի, թէ պայման  
 իրար հանդիպելոյ վերստին, թէ դաւ  
 դառնութեան, թէ տիրաճան վերնաւ-  
 մարտութիւն, թէ հաւատարմութիւն  
 զրպարտեալ, թէ ելաչստիք մոռացեալը,  
 և այլ հազար այսպիսի չարիք կամ  
 բարիք։ Ա ասն զի՝ յորմէհետէ սկսան  
 մարդիկ ՚ի բաց լքանել զայն անուշակ  
 կենցաղավարութիւն լնկերական կե-  
 նաց ոսկեղէն և անմեղ դարուն, և  
 մի զմիով ելանել բռնութեամբ և  
 բարբարոսութեամբ՝ զթիւ կանանցն

յաճախել, և ՚ի ծառայս և աղախնեայս  
յոխորտալ, զամենեսին ահաբեկս առ-  
նելով, զի զանձինս միայն անահս ա-  
րասցեն, հարկ եղեւ յայնժամ խանգա-  
րեալ երեւակայութեամբ զապահովա-  
րան այսպիսի խորամանկել, յառաւե-  
լութիւն հոգոց և թշուառութեանց  
միայն :

**Ա**նդք մատեաւ Գուրգէն . ուր  
**Ա**ալէթ թաքուցեալ յանկեան ուրեք  
լսարանին՝ յակճիռս կայր ուշով մե-  
ծաւ . իսկ բանսարկուացն ՚ի ներքս  
անդ մնացեալ իբրեւ տեսին զնա՝ յոտն  
յարեան իսկոյն , և ըստ բանադիր լի-  
նելոյ իշխանին՝ կեղծուալատիր շողո-  
քորթութեամբ իւրեանց ողջունեալ  
զնա , “**Շ**նորհք են մեզ” ասեն , “գա-  
լուստ քոյ տէք . շնորհք մեծ . զի գրեթէ  
անիշխանացաք գլխովին յանհոգու-  
թեանց **Ա**ալէթայ :” Եւ ընկեր նորա-  
անդը էնիդարձուցեալ ասաց , “**Յ**որչափ  
Գուրգէն տանի զզա ; ն երկրորդական՝

մեզ զի՞ փշթ զԱ ալէթայ . թող յերամակ մատականցն միայն վընջասցի ծերն : — Օ այս այսպէս ասէին , զի զբան դաւաճանութեան որսասցեն . ի բերանոյ Ակային . այլ Գուրգէն հաւատարմութեան և երախտագիտութեան աշխարհի վսեմ օրինակ՝ դարձոյց քաղցրութեամբ . “ Օ ի՞նչ տըրտունջ ձեր զԱ ալէթայ , և զանցառութեանց նորա զիրօք աշխարհիս . Տեարք . եթէ իցէ յորում պակասեցաւ նա՝ իմ իսկ պարտականութիւն է լնուլ : Առչեցարո՞ւք զիս ՚ի դէմս ածել իմ զթերութիւն հօր և պաշտպանի հասարակաց . ասացէք — զի՞նչ : — Իսկ եթէ ոչ . Գուրգէն առեայ բանսարկութիւն , գիտասջի՞ք . ” —

Տարակուսեալ և կարկամեալ արանցն , գեռ ոչ բանային զբերան ՚ի բան՝ ոյն ինչ զանիտուլ ստորիջեալ Ալէթայ . յանկարծ երևեցաւ անդք՝ ասելով . “ Եւ ինձ ինքեան , և ինձ

ինքեան , որդեակ , — ” Փարեցաւ  
զպարանոցաւ նորա , և աղաչէր զթո-  
ղութիւն :

Վառւրդէն անխռով պարզութեամբ  
Հոգւոյ համբուրեալ զբարձ իշխանին,  
ասէ . “Տէր , յերազի՞ արդեօք իցիմ ,  
եթէ յարթմնի . զի Ա ալէթ զթողու-  
թիւն աղաչէ , և զայն՝ վասն որոց յան-  
ցանաց արդեօք : ”

Ա աւ . “Օ ի հաւատացի քսուաց  
այսոցիկ զքէն . և մինչ ցայս վայր  
՚ի փորձութիւն մոի քոյ : ”

Վառւ . “Օ իսրդ գտեր զծառայ  
քոյ : ”

Ա աւ . “Ասա զորդի՞ քո , և պատ-  
մցից : ”

Վառւ . “Աւրեմի որդիապարտ երախ-  
տագիտութեամբ հանդերձ . զիսրդ  
գտեր զորդի քո : ”

Ա աւ . “Ասկի փորձ ՚ի բով ,” ասաց .  
յանկարծ յոտն յարեաւ և մատամ-  
բացի ցուցեալ բանսարկուացն զԱտլը-

Նուշ՝ թնդաց, “**Չ**արախօս լինիք  
դառնէ յայսմանէ արդարոյ, Խշանք  
**Մ**արաց . և իրաւունք են ձեր՝ զի  
այր մի օտարական և պանդուխտ այս-  
չափ առաւելաւ ՚ի միջի մերում: Քայց  
Հայեցարուք աղէ, և տեսջիք . զի թէ  
**Ա**ստուած միով դրամբ ետ սմա զայն  
ամենայն ճախութիւն, սա չորիւք  
դրամբք բաժանել զայն ազգի մերում  
և աշխարհի: Եւ եթէ ես բարձից զայն  
՚ի սմանէ՝ որոց արժանաւորաց ՚ի ձէնջ  
մատուցանել արդարացայց : Արիք  
անմիտք, զթողութիւն քսութեանցդ  
խնդրեցէք, — Գուրգէն Վաջ է ՚ի  
թողուլ մարդկան զմեզս ՚նոցա :

Դալուկն մահառիթ պատեաց զերե-  
սօք քսուաց . ամօթ և խայտառակու-  
թիւն է բաժին բանսարկուաց . այլ  
Գուրգէն այն ինչ սկայաբար ձգեալ  
զաջ իւր, անոխակալ գթութեամբ տե-  
զայր առ նոսա զթողութիւն յանցանաց,  
և զիւրափնորոգ մշտիջենաւորութիւն

սիրոյն և բարեկամութեան, ահա Ռահ-  
հապանք արքունի յանկարծ ի ներքս  
անդ մատուցին զհրեշտակս Գյեղենա-  
կայ և Արզունեայ՝ նախարարացն Աշ-  
ուանից : — Օ ուարձութիւն Գյուր-  
գենայ ընդ չափ էանց, և Վալէթ  
Հիացեալ սքանչոցաւ ընդ այն օրինակ  
չնաշխարհիկ սէր և բարեկամութիւն :  
Քաջն Հայկազունեաց, բուռն եհար  
զնմանէ, կալաւ զթուղլծ հրեշտակացն  
Աղուանից ի ձեռաց նորա, բիւր ան-  
դամ զուարձախառն արտասուօք համ-  
բուրեաց զայն, և ասաց . “ Ձուղթ  
յատենէ, յատեան ընթեռնուլ սլարտի,  
յորժամ Գյուրգէն ընդ Վալէթայ՝  
և Մասանամ ընդ Վարսենիան՝ աթո-  
ռակից բազմեսցին . — ի վաղիւ անդը :

ՎԵՐՋ.

Ա. ՀԱՏՈՎԵԱՆ :

